

5



Ջեյմս Ռ. Ռասել	5-41,
Միսաֆ Խոստիկյան	42-42,
Սերգեյ Դանիելյան	43-57,
Ալան Սեմերջյան	58-63,
Վահագն Կ. Թերզեան	64-83,
Ռաֆիկ Ժամկոչյան	84-91,
Վիգեն Բերբերյան	92-98,
Գնել Հակոբյան	99-107,
Լևոն Ջավախյան	108-110,
Ալինա Պողոսյան	111-120,
Բյուրակն Իսխանյան	121-126,
Լուսինե Միրզոյան	127-130,
Ջաս Սուդերմոնտե	131-136


Ո՞վ է Չարենցը: Հնարավոր է, արդյոք, գրողի մասին համընդհանուր, «օբյեկտիվ» ընկալում, մանավանդ երբ գրողը Չարենցն է:

Այս հարցը կարող է առաջանալ ամեն դարաշրջանի ավարտին և նաև ամեն անգամ, երբ Չարենցի նոր անտիպներ են հրապարակվում: Ժամանակները փոխվում են, «օբյեկտիվությունն» էլ հետք, ինքը Չարենցն էլ էր փոփոխվում, բայց նաև ժամանակների հետ Չարենցին փոխում են, հարմարեցնում իրենց հերթագայող գաղափարախոսությունները: Տիրապետող քաղաքական հայացքները Չարենցի բարդ ու բազմաշերտ ստեղծագործությունից թորում են իրենց ցանկալի գաղափարները՝ մոլորություն համարելով նրա այլ կողմնորոշումները: Եվ այդպես նա մեկ հեղափոխության երգիչ է, մեկ՝ ազգայնական պատգամախոս: Չարենցն ինքը պարբերաբար տարվում էր ինքնաժխտման կրքով, որից օգտվելով գրաքննադատությունն էլ մի Չարենցով մյուս Չարենցին է ժխտում ու ժխտումներում կորցվում է հենց Չարենցի փոփոխվող ու բազմազան լինելը:

Սակայն խնդիրը չի ավարտվում միայն նրանով, որ ըստ օրվա գաղափարախոսական դավանանքի է չարենցյան «ծայրահեղությունների» ու «հակասությունների» կծիկից հյուսվում միագիծ առանցք: Հասարակական գիտակցությունն իր հերթին պոեզիայի ու գրականության մասին ստանդարտացված բարոյական ու գեղագիտական պատկերացումների համապատասխան (ավանդական, դասական «Տաղարան» կամ «Նավգիկե») ձևում է չարենցյան այնպիսի առանցք, որի մեջ ոչ մի կերպ չի հավաքվում, տեղավորվում ամբողջ Չարենցը: Այդ ձևվածքից դուրս մնացած Չարենցի «առանցքները» մնում են գրականության մայրուղային ընկալման լուսանցքներում («Կապկազ-թամաշայից» ու «Ռոմանս անսերից» մինչև այստեղ հրատարակվող անտիպներ):

«Ինքնագրի» հենց առաջին նյութի ծանոթագրություններում կկարդաք. «Եթե Չարենցն արևմտյան բանաստեղծ լիներ, նրա թուլություններն ու ըմբոստ պահվածքը կենթարկվեր իրական ուսումնասիրության, սակայն քանի որ այդպես չէր՝ բանաստեղծին շնչահեղձ արած ու կործանած խորհրդային ամբողջատիրական համակարգը փոխարինվել է ազգայնական ու կրոնական շովինիզմի գաղափարախոսությամբ, որն իր ուրույն ձևով է շնչահեղձ անում ու կործանում բանաստեղծին»:

Պրոֆեսոր Ռասելը, հրապարակելով Չարենցի անտիպները, բացում է բանաստեղծի մեկ այլ կերպարը, որ թաքցվել է հայ ընթերցողից: Ու հարցի պատասխանը՝ ո՞վ է Չարենցը, դառնում է ավելի բարդ, բայց նաև ավելի է ընդգծվում նրա բազմաձևկության պատկանելությունը, «Իրանի արևին», «Նաիրիի թախծին» ու «մոսկովյան կարմիր հրին» գումարվում է նրա բազմասեռականությունը՝ իր մեջ խտացնելով ժամանակակից հասարակությունների մեջ կողք-կողքի գոյատևող ամենատարբեր ենթամթերք: Ու Չարենցը դառնում է մի տեսակ ժամանակակից դեմոկրատիայի խորհրդանիշ, և քանի դեռ նրա մի դեմքը թաքցվում է Հա-



յաստանում, ուրեմն դեմոկրատիայի պակաս կա:

Բազմամշակութային խճանկարում էլ «Ինքնագրում» կողք-կողքի են հայտնվել փարիզյան «թմրամոլային խելակորույս տոներ» (Թերզյան)՝ թարգմանված դասական ուղղագրությամբ ու խիստ գրական հայերենով, և Սևանի հոգեբուժարանում Սովետի ժամանակներից աքսորյալի մինիմալիստական քնարերգությունը (Ժամկոչյան): Իրականության մարմնին դիպչելու անհնարինությունից բանաստեղծի՝ միայն սեփական անուն-լոգոն իբրև «ինֆորմացիոն մարմին» սփռելու, բազմապատկելու փորձը (Սուպերպոետ), և բան-ա-ստեղծության անհնարինությունից, այնուամենայնիվ, բանաստեղծության «թղթե իրականություն» արարելու իներցիան (Հակոբյան): Ցեղասպանությունն իբրև տատիկի հնացած սնդուկից հանված, գյումրվա բարբառով սարսափ-հեքիաթ, որ պատմվում է բացակա հերոսին (Գանիելյան), և իբրև ժամանակակից իրավունքի կոնտեքստում «ցեղասպանության թոռի» հանձնառությամբ բանաստեղծական սահմանում՝ անգլերենով (Մեմերջյան): Բերբերյանի վեպի հատվածում մարդկային հարաբերությունները գործարքներով փոխարինած «ապակու և պողպատի աշտարակների» բնակչի հաշվարկներն են, որ անգամ տերևների նախշերի մեջ միայն լողարիթմ է տեսնում: Իսկ ամեն ինչ հաշվելու, անհաշվելին հաշվելու մոլուցքի հանդեպ Սևակի հեգևանքը («հաշվում եք, հաշվում...»), ասես, կապվում է Խոստիկյանի գործին. թղթադրամի տրցակից անհետանում են թվա- և տարբերանշանները՝ որպես ներկա տնտեսական չգնաժամի, անհաշվելիի ու համրանքի հարաբերության չգնաժամի խորհրդանիշ, ու տրցակից միակ հաշվելին մնում է անհաշվելին՝ Չարենցը:

Բազմազանության խճանկարը ընդգրկում է նաեւ ամռանը կանանց համար «Ուտոպիանայի» կազմակերպած ու իմ վարած գրական workshop-երի ընթացքում ստեղծված տեքստերի մի մասը՝ այս անգամ՝ Ալինա Պողոսյանի և Բյուրակն Իշխանյանի պատմվածքները:

Վիոլետ Գրիգորյան

2008
11
5





Զեյնա Ռ. Ռասել

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Զեյնա Ռ. Ռասելը ծնվել է Նյու Յորքում 1953 թ., սովորել է ռուսերեն, դեռ երեխա ժամանակ այցելել է ԽՍՀՄ և մեծապես հետաքրքրվել Հայաստանով: Հայերեն սկսել է ուսումնասիրել Նախ դպրոցի բարձր դասարանների և ծխական դպրոցի ուսուցիչների օգնությամբ, սպա՝ Կոլումբիայի, Օքսֆորդի, Լոնդոնի համալսարաններում: Գիտական թեզեր է պաշտպանել Թլկուրանցու, Հայաստանում գրադաշտականության թեմաներով: Ընդունվելով Եգիպտոսում է գործունեությունը Էպիական ժանրի ստեղծագործությունների, մոգական տեքստերի, արդի և միջնադարյան պոեզիայի, «Նարեկ»-ի ուսումնասիրության ոլորտում: Ժամանցային հետաքրքրություններ՝ ռուս գրականություն, մոտոցիկլ ետներ:

Ինքնագրի կողմից. Ռասելը ուրախությամբ համաձայնություն տվեց «Ինքնագրին» հրապարակել իր այս երկու գործերը: Չարենցի անտիպների հրապարակումը վերցված է Ռասելի «Հայագիտություն եւ իրանագիտություն» գիտահետազոտական հոդվածների ժողովածուից (Armenian and Iranian Studies), Քեմբրիջ, Մասաչուսեթս, ՄՄՄ, 2004, իսկ «Չարենց՝ Մարգարե» (Charents the Prophet) էսսեն «Եղիշե Չարենցը. հեղափոխության բանաստեղծ» (Yeghishe Charents poet of the Revolution) (Կոստա Մեսա, ՄՄՄ 2003թ.) Մարկ Նշանյանի կազմած Չարենցին նվիրված ուսումնասիրությունների ժողովածուից:

Եղիշե Չարենցի անսիմ բանաստեղծությունների արխիվից

Անգլերենից թարգմանեց Անահիտ Բոբիկյանը

Այս ուսումնասիրությունը նվիրվում է երևելի գիտնական, պրոֆեսոր Ջոն Ուայթենբերգին. իրավամբ կարելի է համարել, որ մասնագիտական գործունեության ընթացքում նա մասնակից է դարձել և իր նպաստը բերել ամենաբազմազան հայագիտական ուսումնասիրություններին՝ չսահմանափակվելով իր լեզվաբանական մասնագիտացման շրջանակով: Քանի որ պատիվ են ունեցել նրան ծանաչելու նաև որպես ընկերոջ, կուզենայի երախտագիտությունս հայտնել այդ մեծահոգի, օգնության կարիք ունեցողներին պատրաստակամորեն ձեռք մեկնող, իր սկզբունքներին հավատարիմ, համեստ ու զուսպ, էռազմի ու Սպինոզայի հանդարտ փառքի ավանդույթով ղեկավարվող ճշմարիտ ազատական հումանիստին, Նիդեռլանդների զավակին ու տիեզերքի քաղաքացուն:




1998 թ. սեպտեմբերին, Խորհրդային Հայաստանի հանրահայտ բանաստեղծ Գևորգ Էմինի մահվանից որոշ ժամանակ անց, նրա որդին՝ Արտաշեսը, հյուրընկալեց ինձ իրենց *վերնատանը* (այս բառը հիշեցնում է Թիֆլիսի հայ մտավորականների հանդիպման հայտնի վայրը), որը բանաստեղծի աշխատասենյակն էր և գտնվում է Երևանի Դեմիրճյան փողոցում նրանց բնակարանի վերնամասում: Այստեղ, ի թիվս հոր երկարատև ու հարուստ ստեղծագործական կյանքից հետո մնացած մասունքների, նա ինձ ցույց տվեց Եղիշե Չարենցի ձեռագրերի լուսապատճենների մի թղթապանակ, որը պահպանվում էր Չարենցի մեքենագիր բանաստեղծությունների (որոնցից մի քանիսի լուսանցքներում կային բանաստեղծի ձեռագրով կատարված նշումներ) և Չարենցի ստեղծագործությանն առնչվող տարատեսակ տպագիր նյութերի հետ: Գևորգ Էմինն իր կենդանության օրոք հասցրել էր հրատարակել այդ բանաստեղծություններից մի քանիսը¹: Այստեղ ուզում եմ շնորհակալություն հայտնել Արտաշեսին իր հյուրընկալության, բարյացակամության, ինչպես նաև ցուցաբերած վստահության ու այդ նյութերի լուսապատճենման թույլտվության համար: Բանաստեղծի առավել հակասական տեքստերի այս հրապարակման մասին որոշումը, չնայած նրան, որ կանխատեսելի է դրանց բովանդակության կապակցությամբ հնարավոր բացասական արձագանքը, բացառապես ինձ է և չպետք է որևէ կերպ կապակցվի Արտաշեսի կամ նրա ընտանիքի հետ: Նման հանգամանքներում նախընտրելի կլիներ պահպանել աղբյուրի անանունությունը, թեև այդ դեպքում հնարավոր է, որ կասկածի տակ դրվի փաստաթղթերի վավերականությունը: Թղթապանակի օժանդակ տպագիր նյութերը՝ ԽՍՀՄ-ի Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (ՀայԳԱՖ) «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին նվիրված հոբելյանական նիստի ծրագիրն ու անցատոմսը 1937 թ. սեպտեմբերի 11-13-ի համար, Հայկական ԽՍՀ-ի պուշկինյան հանձնաժողովի՝ 1937 թ. ռուս մեծանուն բանաստեղծի մահվան հարյուրամյա տարելիցին նվիրված հոբելյանական նիստի ծրագիրը, Չարենցի անձնական գրադարանից *ex libris* նմուշները՝ թվագրված *ՌՁԼԶ* (=1936 թ.) և մի բրոշյուր, Նաիրի Չարյանի՝ դերասանուհի Արուս Ոսկանյանի (որով Չարենցը տարված էր) բեմական գործունեության երեսնամյակին նվիրված հոդվածով: Վերջինս հետագայում, 1941 թ., հրատարակել է Հայպետհրատը Երևանում և կրում է դերասանուհու ինքնագիրը*:

Արխիվի թվագրված ձեռագրերը վերաբերում են 1936 և 1937 թվականներին, ընդ որում, դրանց մեծ մասը կապված է 1936 թ. ամռան հետ, երբ Չարենցն իր արձակուրդն էր անցկացնում Խորհրդային Հայաստանի Ծաղկաձորի (նախկինում ուներ թուրքական «Դարաչիչակ» անվանում՝ Ծաղիկների դաշտավայր) Գրողների Միության հանգստյան տանը²: Մի քանի բանաստեղծությունների սկզբում նշված է աշխատանքն սկսելու, իսկ վերջում՝ ավարտի ամսաթիվը: «Մահ լեգենդին» բանաստեղծությունը երկու տարբերակ ունի այստեղ և, ընդհանրապես, ձեռագրերի մեծ մասն աշխատանքային օրինակներ են՝ նրանց վրա առկա են հեղինակի ջնջումներն ու ավելացումները: Բացառությամբ մի քանի մաքուր օրինակների, Չարենցի ձեռագիրը հաճախ դժվարընթեռնելի է, տեքստերի որոշ հատվածներ ուղղակի հնարավոր չէ վերծանել: «Երոտիկ պոեմ» երկը գրված է ԶԱԿ-ԳԻԶ-ի (Заквказское Государственное Издательство) թղթերից մեկի վրա. Թիֆլիսի Ռուսթավելու պողոտայի 36 շենքում գտնվող այս հրատարակչությունում Չարենցն աշխատել է որպես գլխավոր խմբագիր մինչև երեսնականների կեսերը: Քանի որ բանաստեղծը 1937 թ. հուլիսին ձերբակալվել, իսկ չորս ամիս անց սպանվել է ՀԽՍՀ ՆԳԺ-ի կողմից (հայաստանյան ՊԱԿ), պահպանված լրացուցիչ, առօրեական նյութերից միայն *ex libris* նշումն ունեցողները պետք է հաստատապես համարվեն հենց բանաստեղծինը: Մյուս փաստաթղթերը կարող էր հավաքած ու պահպանած լինել Գ. Էմինը՝ համարելով, որ դրանք որոշակիորեն կապված են Չարենցի առօրյա կյանքի և ստեղծագործության հետ: Արխիվային բանաստեղծություններից մի քանիսը նվիրված են Արուսին: Չարենցը, որպես Պուշկինի երկերի թարգմանիչ, մասնակցում էր ինչպես հանրապետության, այնպես էլ միութենական հոբելյանական հանձնաժողովների աշխատանքներին, նա նաև «Սասունցի Դավիթ» էպոսի հրատարակման խմբագրական կազմի անդամ էր (իր վերջին հրատարակված հատորը՝ «Գիրք ճանապարհի»-ն [1933 թ.] պարունակում է էպոսին վերաբերող երգիծական ու էքսցենտրիկ դատողություններ): Չարենցի գրական ու ակադեմիական գործընկերների համար անպատիվ պետք է համարել այն փաստը, որ հենց նրա

* Բոլոր լուսապատճենները տես՝ J. Russel Armenian and Iranian Studies, Մասաչուսեթս, 2004 (ծմբ. խմբ.):

2008
17
5



ջանքերով կազմակերպված այս միջոցառումների ծրագրերում բանաստեղծի անվան որևէ հիշատակում չկա, կարծես նա ընդհանրապես գոյություն չուներ. նա ուղղակի հեռացված էր այդ աշխատանքներից, մինչդեռ համահայտ մյուս գրողներն ու գիտնականները դրանց մասնակիցը դարձան՝ առանց իրենց բողոքի ձայնը բարձրացնելու³:

Արխիվային նյութերից մի քանիսը այն բանաստեղծությունների մեքենագիր պատճեններն են, որոնք հետագայում հրատարակվել են⁴: Պահպանվել է նաև Պուշկինի «Մարգարե» («Пророк») բանաստեղծության թարգմանության մի հետաքրքիր ձեռագիր, որի տեքստը տեղ-տեղ տարբերվում է բանաստեղծի մահվանից հետո հայտնաբերված և 1983 թ. հրատարակված մեկ այլ տարբերակից: Սևագրությունների համեմատությունը թույլ է տալիս բանաստեղծի մտածողության ներքին գործընթացի վկա դառնալ և որոշարկել դասական հայ գրականության այն ռեսուրսները, որոնք օգտագործել է Չարենցը իր սիրելի Պուշկինի՝ արդեն իսկ Աստվածաշնչի հրեական լեզվամտածողության վրա կառուցված տեսլական հայտնությունը հայերեն փոխադրելու համար: Սակայն մյուս բանաստեղծությունները անտիպ են մնում, իսկ մի շարք տեքստեր, որոնք կարողացել են ցայսօր վերծանել, որքան ինձ հայտնի է՝ առաջին անգամ⁵ են հայտնվում այստեղ արևելահայերենով և 1930-ականների խորհրդային ուղղագրությամբ*, որին հավատարմորեն հետևում էր Չարենցը:

Այս բանաստեղծությունների մեծ մասն իր բնույթով շատ էրոտիկ է: Դրանցից մեկը, որը ներկայացվում է ընթերցողին, ըստ էության՝ միասեռականի զգացողությունների վառ նկարագիր է: Չարենցը խորապես էմոցիոնալ, կրքոտ անձնավորություն էր. այն դեպքերում, երբ նրա տպագրված երկերում հայտնվում են սեքսի և սիրո թեմաներ, դրանք գրեթե միշտ հետերոսեքսուալ բնույթի են: Բանաստեղծը երկու անգամ է ամուսնացած եղել, խենթի պես սիրել է առաջին կնոջը՝ Արփենիկին, որի վաղաժամ մահը գրեթե հոգեխանգարման է նրան հասցրել: Նրա հիշատակին բանաստեղծի նվիրվածությունը հիշեցնում է Բետտրիչիի հանդեպ Դանթեի զգացմունքները: Իր երկրորդ կնոջից Չարենցը երկու դուստր է ունեցել: Նրանցից մեկը՝ Անահիտ Չարենցը, ուն հետ պատիվ են ունեցել հանդիպելու, հոր ստեղծագործությունների նուրբ գիտակ է⁶: Ինձ հայտնի չեն փաստեր այն մասին, թե երբ է Չարենցը հայտնաբերել իր բիսեքսուալությունը, կամ դա ինչ հետևանքներ է ունեցել: Սակայն առկա տեղեկությունները վկայում են այն մասին, որ հոմոէրոտիզմը նրա երկերում հայտնվում է բանաստեղծի կյանքի միայն վերջին երկու տարիներին: Այս հարցերը հետաքրքրություն են ներկայացնում միայն այն նկատառումից ելնելով, որ իսկապես կարևոր են բանաստեղծի իրական կյանքի ու ստեղծագործության առնչությունները: Անկասկած, ինչքան շատ բան գիտենք ցանկացած մեծ գրողի կամ բանաստեղծի ստեղծագործությունների մասին, այնքան լավ՝ անկախ նրանից, թե դրանք էրոտիկ են, տարաբնույթ որակի, թե ոչ: Կարելի է մտաբերել, որ ժամանակին Հայտնության մասին Պուշկինի գրած ակնհայտորեն անպարկեշտ պոեմի՝ «Գաբրիելականի» հրատարակումը շատերի կողմից կարող էր որակվել վիրավորական, Ռուսաստանի ազգային պարծանք համարվող բանաստեղծի հեղինակության դեմ ուղղված ու եկեղեցու դեմ մեղանշող ձեռնարկում: Սակայն նման բանաստեղծությունների հրապարակումն ու քննարկումն ազատ հասարակության ու հասուն մշակույթի գրական շրջանակներում միանգամայն օրինաչափ ու բնական է: Նշված թեման լռության մատնելով՝ վատ ծառայություն կարող ենք մատուցել թե՛ բանաստեղծին, և թե՛ պատմական իրողության ճշմարտացիությանը, ինչպես նաև գիտնականի առաջնահերթ խնդրին, որն է՝ *er will bios zeigen, wie es eigentlich gewesen*, այսինքն՝ պատմության խնդիրն իրողության վերհանումն է, ըստ Լեոպոլդ ֆոն Ռանկեի զուսպ սահմանման:

Հոմոսեքսուալությունը խորհրդային Միությունում ապաքրեականացվել է 1917 թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո՝ 1922 թ. հունիսին ընդունված խորհրդային առաջին օրենսգրքով: Այդուհանդերձ, միասեռականներն արժանանում էին ռուս հասարակության քամահրանքին, իսկ Ստալինի ղեկավարության ներքո, 1933 թ. դեկտեմբերին, կրկին քրեականացվեց (հոդված 121) տղամարդկանց կամավոր «սոդոմությունը»: Ռուսաստանի Դաշնությունն այս օրենքը վերջնականապես անվավեր ճանաչեց 1993 թ.⁷, և չորս

* Չարենցի ձեռագրերը, ինչպես նրա ստեղծագործության մեծ մասը գրված են 1922-1940թթ. ուղղագրությամբ: Ռասելը բնագրին հավատարիմ մնալով հրատարակել է նույն ուղղագրությամբ: Ընթերցումը ավելի մատչելի դարձնելու համար անտիպների ուղղագրությունը դարձված է այժմ Հայաստանում գործող ուղղագրությամբ (ծմբ. խմբ.):



տարի անց Հայաստանի Հանրապետությունը հետևեց նրա օրինակին: 1993 թ. պրոֆ. Ուայթենբերգի տանը Լեյդենում ես մի երիտասարդ հայաստանցի գիտնականի հանդիպեցի, ում քաղաքական ապաստան էին տրամադրել Նիդեռլանդներում, քանի որ հայրենիքում միասեռականության համար հետապնդումների էր ենթարկվել: Չնայած Նյու Յորքում գործում է Միասեռականների հայկական ասոցիացիա (AGLA), որի անդամներն ակտիվորեն մասնակցում են տարածաշրջանի հանրային և գրական միջոցառումներին, ինչպես նաև, իմ գնահատմամբ, ցայսօր ինձ հանդիպած հայագետների շուրջ մեկ երրորդը գեյ կամ լեսբուհի են, այսուհանդերձ, շարունակում են կիրառվել մշակութային զորեղ տաբուները. դրանք իրենց ազդեցությունն են թողել նաև այս երկրում Չարենցի հետ կապված իմ աշխատանքի վրա*:

Գևորգ Էմինը, երբ դեռ շատ երիտասարդ էր, ճանաչել է Չարենցին: Սաստիկ վրդովվել էր, իմանալով բանաստեղծի ձերբակալության և ապա՝ սպանության մասին, զագրելի էր համարում հայ իշխանավորների հանցավոր գործակցությունը մշակույթի ստալինյան կործանմանը, նաև՝ նրանց թուլամորթ լուրջությունը հետազայում: Վերջերս լույս տեսած իր մի բանաստեղծության մեջ (որի անգլերեն թարգմանությունն, ի դեպ, տպագրել են «Արարատ»-ում), Էմինը ինքն իրեն համեմատել է «Սասնա ծռեր» էպոսում քարաժայռի զնդանում փակված, ապոկալիպտիկ հերոսի՝ Փոքր Միերի հետ: Միերը լուռ տառապում է, թեև խեղդվում է իր ժողովրդի խարդախությունն ու փոքրոգությունը տեսնելով, և սպասում է նախանշված այն պահին, երբ կկարողանա դուրս պրծնել զնդանից ու արդարություն հաստատել: Սակայն Էմինը չձեռնարկեց չարենցյան ձեռագրերի հրապարակումը դրանց բովանդակության պատճառով, անգամ երկրի ազատականացումից, խորհրդային իշխանության փլուզումից և գրաքննության վերացումից հետո: Նրա որդին՝ Արտաշես Էմինը էր, որ թույլ տվեց ինձ պատճենահանել արխիվի բոլոր նյութերը, թեև դրան կտրականապես դեմ էր Էմինի այրին, ով համարում էր, որ ձեռագրերը պետք է Հայաստանում լույս տեսնեն, այն էլ՝ առանց սեռական բնույթ ունեցող բանաստեղծությունների, ինչն իրականում նշանակում է, որ նա ընդհանրապես չի ցանկանում, որ այդ նյութերը տպագրվեն Հայաստանում կամ այլուր, այլ նախընտրում է, որ դրանք երբևէ երևան չգան: Իր կյանքի օրոք Չարենցը մեղադրվում էր «թրքատյացության» և դաշնակցականներին համակրելու համար, քանի որ նա հրաժարվում էր «զսպել» իր հայկական ինքնությունը: *Քաղաքական ճիշտ գծի* նոր չափանիշների ջատագովները փորձում էին նրան արհեստականորեն վերագրել աստվածապաշտ քրիստոնյայի և հակակոմունիստ հայրենասերի ինքնությունը: Ո՛չ ստալինիստները, ո՛չ էլ հայ շովինիստներն առանձնակի ուշադրության չէին արժանացնում սեռական կյանքի հետ կապված խնդիրները: Այս ամենը նկատի ունենալով, թերևս անխուսափելիորեն կծագեն հրապարակվող նյութի վավերականության հարցեր և դրանք իմ ուժերի ներածի չափով կանխելու նպատակով կից առաջարկվում է նաև բանաստեղծի հոմոսեքսուալ մի պոեմի ձեռագրի լուսապատճենը* : Չարենցի ձեռագրերի հետ գործ ունենալու բազում առիթներ են ունեցել: Այս փաստաթուղթն, ըստ իս, գրված է հենց նրա ձեռքով: Ինչ վերաբերում է բուն տեքստին, ապա եթե ընդունենք, որ մեկ այլ անձ է այն գրել, ուրեմն նախանձելի տաղանդի տեր բանաստեղծ է: Իսկ Չարենցի սեռականության խնդրի առնչությամբ պատեհ կլինի մեջբերել ամերիկառուս հանրահայտ անարխիստ Էմմա Գոլդմանի բառերը՝ «Եթե չեմ կարող պաշտել դրա ժամանակ, ուրեմն այդ հեղափոխությունն իմը չէ»:

Տպավորությունն այնպիսին է, որ Չարենցն ինքն էր անհանգստացած հնարավոր այն հետևանքներով, որ կարող էին երևան գալ իր բանաստեղծությունների հրապարակման դեպքում. իր ձերբակալությունից մի քանի ամիս առաջ իր պատանի բարեկամ Էմինին փոխանցված արխիվային նյութերում պահպանվել է նաև բանաստեղծի հետևյալ գրությունը՝ թղթի մի կտորի վրա.

* *Stu` J. Russel Armenian and Iranian Studies, Մասաչուսեթս, 2004 (ծնթ. խմբ.):*

2008
11
5



Ազդ!

Եթե ոեւէ բերումով սույն
գրություններն ընկնեն հասկա-
ցող մեկի ձեռն պահել խնամքով
և միայն իմ մահից հետո
հանձնել մեր թանգարանին:
Ոչ մի դեպքում չոչնչա-
ցնել: Լավ է հանձնել ուր
լինի անգամ իմ կյանքի օրով,
իմանալով որ սրանք ինձ
կկորցնեն⁹ - քան ոչնչացնել:

Չարենց
1936.19.X
Երևան

1936 թ. ամռանը, մի քանի ամիս այս գրությունը կազմելուց առաջ, ի պատաս-
խան իր ընտանիքի անդամներին հասցված վիրավորանքի, Չարենցը բացեիբաց
իր անզուսպ զայրությամբ արտահայտեց. նրա կնոջն ու դուստրերին տառաջիորեն
դուրս էին արել Հայաստանի Գրողների Միության՝ Ծաղկաձորում գտնվող
հանգստյան տան սենյակից՝ Ադրբեջանից ժամանած գրողին տեղավորելու
պատրվակով, ինչն ինքնին գուցե և լավ բեմականացված սադրանք էր: Նրան են-
թարկում են տնային կալանքի. գրում է մի քանի հիասքանչ ալիստերատիվ բա-
նաստեղծություններ՝ աշնան մերթ վառվռում, ապա դժգույն, նեխող տերևների
մասին: Այդ բանաստեղծությունները, ինչպես նաև մի քանի այլ, միանգամայն հս-
տակ իմաստ ունեցող երկեր, արտացոլում են բանաստեղծի՝ վերահաս ու ան-
խուսափելի մահվան գիտակցումն ու նրա բողոքը մահվան դեմ: Ինչպես արդեն
նշել են, էմինի արխիվում պահպանվող թվագրված բանաստեղծությունների մեծ
մասը ծաղկաձորյան շրջանին են վերաբերում: Բանաստեղծի այս կոչն ուղղակի-
որեն փոխանցում է ստալինյան ժամանակների դժնդակ վախի մթնոլորտը, բայց
այն նաև թախանձագին խնդրանք է չմոռացվելու մասին: Ինչպես նշվել է՝ Չարեն-
ցի մի քանի ընկերներ թաքցրել կամ հողի տակ պահել են բանաստեղծի կողմից
իրենց վստահված ձեռագրերը: Ավետիք Իսահակյանը դրանք այրել¹⁰ է: Այժմ բա-
նաստեղծի ձեռագրերը չիրապարակելը հավասարազոր կլինի նրա կամքի ար-
տահայտությանը դավաճանելուն, Իսահակյանի օրինակին հետևելուն (որի երկ-
չոտությունը, եթե չասենք՝ փոքրագությունը, տվյալ դեպքում է՛լ ավելի ողբերգա-
կան է, եթե հաշվի առնենք նրա հանդեպ Չարենցի տածած ակնածանքը) և իրո-
ղությունը խեղաթյուրելուն:

Արխիվային տեքստեր


1. V.

Հիմա, լսիր, սկսում են իմ ինտիմ
Պոեմն, անհուն, և մեղսական, և թովիչ:
Սիրում են ես, ինչպես գիտես, կոկաին,
Հայտնի են ես, որպես անբուժ մորֆինիստ:
Սիրում են այլ արհեստական և անհայտ... [մեկ բառ ջնջված է]
Հրապուրյուններն, ալկոհոլից մինչև հաշիշ...[վերջին բառը ջնջված է և
փոխարինված մեկ այլ, անընթեռնելի բառով]



Բայց, ինձ համար լուսե ցնորք է անհաս
 Վեշտասնամյա¹¹ պատանու սերն արևոտ
[ջնջված է, փոխարինված «արեւի»-ով]
 Եվ ոչ մի կին, գեղեցկուհի լինի, թե
 Մի տրփուհի աստվածածին¹² կրքերն
 Չարժե սիրած մի պատանու մանկատես
 Բարով մարմինն, աստվածային ու գերիշ:
 Չկա ոչինչ, որ գեղեցիկ լինի, քան
 Ոսկեցողուն մարմինը մերկ տղայի,
 Տասնչորսից մինչև տասնհինգ տարեկան,
 Արեւագույն, որպես սրինգ, հմայիշ:
 Դրանից չէ, որ հնագույն Յոնից
 Մինչև Գյոթե, մինչև Ուայլդ¹³ ու Չարենց
*[այստեղ նախորդ և հաջորդ հատվածները բաժանված են գծով,
 հավանաբար՝ էջի ծալքի հետքն է]*
 Քանի վսեմ և հանճարեղ մարդ՝
 Այդ վայելքին զոհել է կյանք գույք, անուն:
 Ամենատես Լեոնարդոն է խմել թույն՝
 Հալածանքի մրուր, հանուն այդ սիրո,
 Վինկելմանն¹⁴ է, էստետն այդ նոր, մեծագույն՝
 Մահվել է դրան, խոցված բազում վերքերով:
 Եվ վերջապես գեղեցկության ու փառքի
 Վերջին արքան և ինքնակալն իսկական
 Տվեց թե երգ, թե մեծությունը թե վառ՝
 Ուայլդն էր այն՝ վերջին էստետն՝
 Եվ ես՝ մեր խեղճ նաիրյան աշխարհի
 Պոետս անօգ՝ անպատմունճան մի արքա.
 Իբրեւ վերջին ասպետ՝ սերվածս մարդկային
 Հանճարակիր ընտանիքից ահարկու (°),
 Վերջին հելլեն՝ կոմունիզմի այս դարուն:
 Վերջին էստետ՝ աղբանոցյալ պառնասուն՝
[մի բառ ջնջված է, վերևում ավելացված է «պառնասուն»]
 Վայելեցի սերն այդ՝ [միակ] լույս մի, -
[հաջորդ էջ]
 Եվ այրական կիրք՝
 Ըմպելով մաղձ, ապա, և սև մի ցասուն՝
 Անասնական թաբուների կողմից խեղճ,
 Արևատենչ ու շնչագլուրկ (°)՝ այրերի
 Որոնք սիրո, գեղեցկության ցուքի... տեղ
*[ջնջված բառ, վերևում անընթեռնելի բառ է ավելացված,
 որն ավարտվում է -տեղ արմատով]*
 Նստուն են մեծ պաշտուն՝ կանանց
 Եվ ստինքով՝ ամուսնական անկողնում սեփական
 ...ինքնով ամեն գիշեր միասին
 Իրար քթի բույրեր են թողնելու
 Եվ մերձենում, իբրև երկու ամուսին:
 Օ, մարդկային գեղեցկություն ընտանեկան,
 Օրինական, թույլատրված «մաքուր» սեր,
 Ես բրոնզյա մարմնի մեկ...
[ամբողջ տողը ջնջված է]
 Թող վայելի քեզ տեսնելով
 Ես պարմանու մարմինն եմ լոկ երազել...

2008
 5



2.

Դանթեական Սեր

Յոթը պոեմ
(ինտիմ)
Արուսիմ
1936-VI-13-14
Երևան
Գրեց՝ սիրով մեղսակարոտ
դպիրն երգահան Ե... Չ...g:

Մոտոտո 1:
Ուլլալում, ուլլալում
Էդգար Պո¹⁵

Քեզ համար է գրել Ուայլդն իր «Սալոմեն»,
Եվ Էդգար Պոն քեզ իր պոեմում անհուն
Կոչել միստիկ անվամբ- Ուլլալում:-

Քեզ են երգել մի օր Մալարմե և Վերլեն,-
Եվ- Տերյանից հետո- ահա սիրով անտիկ-
Քեզ Չարենցն է երգում իր պոեմներն ինտիմ...`

16.VI.1936
Երևան.

Պոեմ առաջին Տխրություն եւ ձոն

Դու- բողեբյան պոեմ,-
Արո՛ւս սոնետ ես դու
Մարդու համար արդի:-

Թույլ տուր քնքուշ շոյեն
Շրթունքներով իմ թույլ
Թավշե թերթերը քո
Կոնքերի վարդի...

12.VI.1936
Երևան
Գիշեր.

Պոեմ երկրորդ Սեր-մազդիսական

Մեխվել է մարմինդ լուսե
Իմ սիրտը, որպես դաշույն:-
Թույլ տուր, Արո՛ւս քեզ լիզեն
Որպես մի շուն:-

Տուր շրթունքներդ վարի
Լիզեն, իբրև վարդ...
Արո՛ւս, եղիր բարի,-
Ամոքիր ինձ արդ:-



3.

Ախ, դեռ հպարտ էիր դու,
Չէիր դեռ թեք,-
Եվ տալիս էր խնդում
Քեզ- արևը շեկ:-

Քեզ ո՞վ- խոնավ շրթերով-
Մաշեց այնքան,-
Որ թեքվեցիր դու անզոր
Եվ ընկար- անկամ...

Էլ ո՛չ մի շոգ չըշիջեց
Տեգըդ, որ բարձրանա:-
Միայն մշուշն հիշեց
Քո բարձր ու անահ-

Ոսկե հասակը կանգուն՝
Գզված հովերից,
Երբ՝ ծարավով անգոհ՝
Դու խի՞նդ էիր վերին:-

Ախ, եթե քեզ գզվեր
Մի շող արևող-
Եվ քո հասակը ձգվեր՝
Կրկին արևոտ...

Բայց... մշուշն է միայն
Քեզ արդ համբուրում...
Միայն նա՛ է, միայն նա՛
Քեզ օրորում օրերում...

4.

Ախ, իմ եղեգ ոսկեծայն,
Իմ հուր՝ հանգած արդեն:-
Դու էլ չես բարձրանա,-
Քեզ չեն գզվի էլ վարդեր...

Ինչքան էլ շոգ լինի արդ
Արևի լեզուն,-
Էլ չես կանգնի հպարտ՝
Հրերով կիզում...

Էլ ոչ մի, ոչ մի նոր շոգ
Քո շնչով չի ցնծա,-
Օ, իմ մանկիկ անօգ,
Եղեգ իմ ոսկեծայն...

1936.13.-14-
Գիշեր-գիշեր.

2008
11 5



5.

Պոեն յոթերորդ- վերջին:

Անկարելի Սեր

(Սոնետ):

Օ, խեղճ հոգի՛ սա այսպե՛ս է...

Պոլ Վերլեն

Դուք երազվել ես ինձ իմ օրերում այն դեռ,
Երբ ընդջրյա մեղսոտ շուշանների նման՝
Իմ իրանյան հոգու պարտեզներում ամա
Դեռ նոր էին բացվում մութ կրքերի վարդեր:

Ինձ հարազատ էին և սիրելի արդեն
Ձեր երգերի հետ՝ ձեր մեղսահմա
Անտի(կ)ական սիրո գեղեցկությունն անմահ,
Որ գաղտնաբույր հրով ինձ կախարդեց:

Ով ֆավնակիրք Վերլեն եւ մանկամարդ Ռեմբո,
Ձեր երգերի նման՝ ձեր կրքերի տարբեր՝
Երկու անհաշտ բուրմունքն էլ իմ մեջ վառվեց:

Եվ- անհնար սիրո այդ կրկնաթույն տենդում-
Իբրև Ռեմբո- որքան եմ ես ինձ տրվել-
Եվ ընդունել ես ինձ՝ իբրև Վերլեն...


17-18-
առավոտ
Ես Չ. պ. մ.¹⁶

6.

Էրոտիկ Երգ

Դու կովբոյի շորերով
Կանգնած ես ուղիղ,
Եվ իրանից ներքև քո
Տանում է ուղին
Դեպի դրախտ մի մաքուր,
Քնքուշ ու ձիր,
Ախ, ետևից դու ինձ տուր,
Կովբոյ- գեղեցիկ:

Ես կուզեի քեզ տեսնել
Մաքուր ու մերկ,-
Ցուքերի տակ լուսնի,
Եվ որպես երգ
Փարվել կլոր կոնքերիդ
Ծծել անհագուրդ
Գգվանքները քո հրե,
Մաքուր ու լուրթ:



Ախ, կուզեի՝ կանգնեիր
 Ձգված, որպես լար,¹⁷
 Եվ գգվանքով կոնքերիդ
 Դավենի հար՝
 Քեզ նայելով դեպի հետ՝
 Հայացքդ՝ կիրք,-
 Եվ քեզ կիզեր, ինչպես նետ,
 Նիզակըս պիրկ...

Խելագարված եմ արդեն,¹⁸
 Ուզում եմ քեզ,
 Շրթունքները քո վարդե,
 Կոնքերդ թե՛ք:
 Ախ, տղայի նման մի
 Տրվիր ինձ դու,
 Գգվանքներով մարմնիդ
 [Կարմիր խնդում-ը *և ևս մեկ տող ջնջված է*]
 Փարվիր խնդում...


Դու կովբոյի շորերով
 Աղջիկ ես չար՝
 Ես ցանկանում եմ գերող
 Կոնքերդ հար...
 Նստիր անհագ ծնկներիս
 Կոնքերդ դիր
 Ու մերձեցիր իմ հրին
 Ընտիր:

Օ, թագուհի՛ կովբոյի
 Շորերով:
 Տուր շրթունքները քո ինձ,
 Տուր քո սափորը սիրո...
 Ծծիր անհագ իմ մաքուր
 Նիզակը կե՛զ...
 Եվ երաստանը ինձ տուր,
 Որ թռցնեմ քեզ...

Որպես արքա Իրանի
 Ավազանում իմ մաքուր
 Քանի անգամ քեզ, քանի՛
 Կառնեի, քո՛ւյր:
 Կլիզեի կոնքերիդ
 Սափորը թեք-
 Կվառվեի քո հրով,
 Անվերջ, անվե՛րջ...

Տուր ինձ ծծերը քո,
 Տուր կոնքը քո վառ,
 Թող արբենամ քո կրքով
 Անմար:
 Ախ, Հաֆլզի նման քեզ
 Կուզեի շինել
 Քո կոնքերի հրակեզ
 Արահետից նե՛ղ...

2008
 11 5



Ես քեզ սիրում եմ, կովբոյ:
Քանի որ դու
Ինձ խոստում ես գգվանք պատանու.¹⁹
Դու ինձ կարող ես տրվել պատանու նման,-
Իմ նիզակի մեջ խրվել
Մինչև ի մահ...

Սիրել է մեծ Հաֆլզին
Մի քինջ պատանի,-
Եվ դարձել է նրան կին
Չքնաղ պատանին:
Դու կովբոյի շորերով
Տրվիր ինձ այդպես,-
Եվ կդառնաս իմ սիրով
Պատանի հրկեզ:

Տուր ինձ ուղին երաստանիդ,
Օ, աղջակերպ դու պատանի:

Թեքվիր նկուն, նայիր ետև,
Թող մերկանա կոնքդ թեթև:


Խրվի թող իմ նետը քո մեջ,
Հավիր անհագ, հավիր անվերջ:

Թող թըրթռա, անհագուրդ,
Երաստանիդ թամբը (°)²⁰ մաքուր:
Նիզակս թող խրվի քո մեջ,
Հավիր անհագ, հավիր անվերջ:

7.

Վերջին երգ

Նստիր նիզակիս վրա,
Նիզակս թող քեզ խոցի,
Նիզակս թող հուրհուրա,
Բայց չդիպչի պցիդ:
Թող նիզակս քեզ խոցե
Քո մանկական մուտքից,
Թող անհագուրդ սղոցե,
Վար էլ չընկնի մտքից:
Նստիր նիզակիս վրա,
Նիզակս թող քեզ խոցի,
Եվ թամբդ (°) թող հուրհուրա,
Բայց չվառվի պցից:



8.

Սոնետ Յինգերորդ

«Լեզենդր»

11.VII. 1936

«Բ-եր» (°)

Ի՞նչ(չ)պես կարող էիր հրապուրել նրան,
Երբ մանկության օրից գիտեր՝ անգիր արած՝
Իր հայրենի բերդի պարիսպներին
Քո մշտունայն լեզենդը, Շամիրամ...

Մանկությունից արդեն այդ գանգրահեր Արան
Անագորույն իր սերը՝ որպես նիզակ սրած՝
Ընդմիշտ ուխտել էր իր անդավաճան սիրած
Նաիրուհուն՝ սրտով իր հուրհուրան...

Անգամ ձեռքով մենք մեր եթե թաղենք այսօր՝
Խեղճ, գողունի երթով [(արքայական ջնջված] եղերական իր դին-
Նա կհասնե կրկին՝ իր պարտությամբ հզոր:-

Հազարամյա, անհայտ ուղիներով խրթին,
Իբրև զրահ՝ մահվան զգեստ հագած-
Կբարձրանա զրույցն այդ ավանդական...

1936.29.VII.

Գիշեր

9.

Սոնետ վեցերորդ

«Մա՛հ լեզենդին...»²¹

11.VII.1936. «Բ-եր»

Եվ- նայելով անկիրք²² շրթունքներին նրա՝
Իմ նայիրյան ոգին աղերսակոծ ոռնաց,-
«Քանիտե՞րո՞ղ անգամն է, որ՝ պարտությամբ հառնած՝
«Գերեզման ես իջնում, մանուկ Արա...»

Տրված սիրով անմեռ իր Նվարդին՝ առ Նա
«Խնկարկելով արյունն իր հուրհուրան-
«Քանիտե՞րո՞ղ անգամ, օ, Շամիրամ,
«Ջոհվի արքան մանուկ, որ դու զրույց դառնաս...»


Արդեն հոգնել էնք մենք այս անիմաստ բախտից.
Դու մինչև երբ, Արա՛, մանուկ մնաս,-
Եվ մինչև ե՞րբ- այսպես- մահով հաղթես...

Լավ է՝ նաշից էլ քո չբարձրանաս,
Որ պայքարի ելնեն առաջնորդներ պարթև²³
Որ մեռնելով՝ պարտվեն, կամ ապրելով՝ հաղթեն...

29.VII.1936²⁴

2008

5



- 1 Տե՛ս Գ. Էմին, «Երբ կոչեցի ես քեզ Նաիրական Դոֆին», «Գարուն», Երևան, 1995 թ. մայիս, էջեր 15-21: Ժողովածուն ներառում է «Մահ լեզենդին» բանաստեղծությունը, որը ես թարգմանել եմ, սակայն Էմինը չի մեջբերել նույն արխիվում գտնվող մեկ այլ տարբերակում տեղ գտած փոփոխությունները:
- 2 Մի թերթի վրա առկա է հետևյալ գրառումը՝ *Լ. Այս տոնետները, բացի վերջինից (Անդարդների 1) ուղիղ* գրված են Ծաղկածորում, Հայաստանի Գրողների Միության համագտի տանը, 29-ին հուլիսի, վաղ առավոտից մինչև գիշերվա ժ. 4-ը, 1936 թ. II. Այդ հիմնական տեքստը հետագայում ենթարկվել է բազմաթիվ ոճային և մի քանի իմաստային փոփոխությունների: Սակայն - III. Սևագիր տարբերակներից ոչ մեկը վերջնական չէ, վերջնական տեքստը միայն սա է: Եղիշե Չարենց, 1937.8.II
- 3 Այդուհանդերձ, բողոքի ծայն երբեմն հնչեցվում էր՝ չնայած մեծ վտանգներին: Ինքը՝ Չարենցը, դրանից երեք տարի առաջ Խորհրդային Գրողների առաջին համագումարում (Մոսկվա) խիզախորեն պաշտպանել է ռուս բանաստեղծ և վիպասան Բորիս Պաստերնակին: Մի քանի տարի անց Ստալինն անձամբ զանգահարում է Պաստերնակին, և վերջինիս հաջողվում է ողջ մնալ «գտնման» ընթացքում: Սակայն սխալ կլինի պնդել, որ *post hoc, ergo propter hoc* (լատ.՝ «մեկ իրողությունը հաջորդած մյուսն առաջինի հետևանքն է»- *բարզմ.*): Հայ գիտնական, Էրմիտաժի տնօրեն Իոսիֆ Օրբելին ժամանակին մեկնել էր Մոսկվա՝ գործընկերների արդարացման համար միջնորդելու, և... ողջ էր մնացել: Ստալինյան դարաշրջանի Խորհրդային Միությունում, ինչպես նացիստական Գերմանիայում, վախի մթնոլորտն ու հարմարվողականությունն էին հնարավոր դարձնում նման ահաբեկչությունը, և երկու երկրներում էլ, ցավոք, գիտնականների և գրական գործիչների դիրքորոշումները հեռու էին արժանապատիվ լինելուց:
- 4 Չարենցի ընտիր երկերի առաջին հատորը հետմահու լույս է տեսել Երևանում 1954 թ.: Ստալինի մահվանից մեկ տարի անց և Անաստաս Միկոյանի (այն ժամանակվա ԽՍՀՄ ԿԿ կենտկոմի ազգությամբ հայ անդամ) անձնական միջամտությամբ: Հետաքրքիր է, որ Չարենցի բանաստեղծություններից 15-ը դեռևս 1946 թ. տպագրվել են «Ընտիր էջեր հայ գրականության» ճոխ ժողովածուում (Երևան, Հայպետհրատ, խմբ. Հրաչյա Գրիգորյան և ուրիշներ, էջեր 979-1005): Այս տեղեկատվությունը տրամադրելու համար շնորհակալություն եմ հայտնում Սանկտ Պետերբուրգի Գիտությունների Ակադեմիայի պրոֆեսոր Կարեն Յուզբաշյանին: Անհավատալիորեն, ընտրված այս տասնհինգ երկերից վերջինը «Թուրք Իոսիֆ Ստալինին»-ն է՝ գրված 1936 թ., որն անհնար է ընկալել այլ կերպ, քան իր վերահաս դաժան ճակատագիրը կանխատեսող մարդու տենդագին, սարսափազդու, կեղծ ուղերձ: Շատ զարմանալի է, որ խմբագիրներն ինչ-ինչ հանգամանքներում հավանություն են տվել այս երկի ընդգրկմանը, կամ՝ գուցե չէ՞ն նկատել: Գիրքն ակներևաբար հրատարակվել էր՝ համոզելու սփյուռքահայությանը վերադառնալ Հայաստան՝ Խորհրդային բուլղոլովին նոր մի երկիր, որը նրանց մեծ մասը չէր էլ տեսել: Էմինի արխիվային նյութերում կա Ստալինին ուղղված մի բանաստեղծություն՝ «Ներբող Առաջնորդին», որն սկսվում է հետևյալ տողերով. *Լեռնանման, անդրդվելի, բարձրաբերձ/Գրանիտյա կանքն ես դու մեր մեծ ...: Չարենցի՝ այն ժամանակ հայտնի և Խորհրդային Միությունում հրատարակման համար ընդունելի բոլոր ստեղծագործություններն ու նամակները տպագրվել են Երևանում, 1962-1967 թթ., երկերի ժողովածու վեցհատորյակում: 1937 թ., բանաստեղծի ձերբակալությունից առաջ, նա ապահովության համար իր ձեռագրերը փոխանցում է մտերիմներին (տես՝ Անահիտ Չարենց, «Չարենցի ձեռագրերի աշխարհում», Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1978 թ.): Այստեղ տպագրվել են հիմնական հրատարակության մեջ տեղ չգտած բանաստեղծություններն ու նյութերը: Բանաստեղծի հիմնական ժողովածուներն են՝ Անահիտ Չարենց, խմբ., *Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր*, Երևան, ՀԱՅԳԱ, 1983 թ., և Դավիթ Գասպարյան, *Ողբերգական Չարենցը*, Երևան, «Նաիրի», 1990 թ., Դ. Գասպարյան, խմբ., *Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1996 թ.: Պուլկինի «Մարգարե» բանաստեղծության և Միխայիլ Կուլմինի «Ալեքսանդրիական երգեր» շարքի մի հատվածի չարենցյան թարգմանության մասին տես J.R. Russel, "Charents the Prophet", *Journal of the Society for Armenian Studies*, 11 (2000թ.), pp 11-38, ստալինյան հետապնդումների և խոշտանգումների կիզակետում հայտնված բանաստեղծի կյանքի, նրա տեսլական և կրոնա-հոմոերոտիկ ստեղծագործությունների մասին տես J.R. Russell, *The Armenian Counterculture That Never Was: Reflections on Eghishe Charents*, JSAS 9 (1996, 1997 [1999]), pp.17-35:*
- 5 2003 թ. զարմանը տեղեկացա, որ Չարենցի անտիպ էրոտիկ բանաստեղծություններից մի քանիսը վերջերս հրատարակվել են Հայաստանում, սակայն այս պահի դրությամբ ինձ չի հաջողվել ավելին իմանալ այդ մասին*:
- 6 Եթե նրանք տեղյակ են իրենց հոր կյանքի այս ասպեկտի մասին, ապա պետք է որ նախընտրած լինեն այդ մասին չհիշատակել հրատարակված հուշերում: Դա ինչ-որ իմաստով բնական է, քանի որ, ըստ սահմանման, ընտանիքը խարսխված է ինստիտուցիոնալացված


* «Բնագիր» հանդեսի 8-րդ համարում (2004թ.) հրապարակվել են Չարենցի անտիպները: Այստեղ 14-րդ էջի բանաստեղծությունները, բացի 2-րդից, հրապարակվել են «Բնագրում» (ծնթ. խմբ.):



հետերոսեքսուալության սկզբունքի վրա: Արթուր Ռեմբոյի մայրն ու քույրերը նույնպես չեն ցանկացել, որ նրա կյանքի՝ իրենց պատկերացմամբ սկանդալային ասպեկտները, հրապարակվեն: Վերլենն էր, որ հակառակ նրանց կամքին, հրատարակեց իր ընկերոջ և սիրեցյալի երկերը: Ֆեդերիկո Գարսիա Լորկայի դարաշրջանում, *New York Blade News*-ի 1998 թ. հոկտեմբերի 30-ի համարի 17-րդ էջում լրատվություն է հրապարակվել այն մասին, որ այդ մեծագույն իսպանացի բանաստեղծի ընտանիքը, որին սպանել էր ֆաշիստական Ֆալանգե կազմավորման անդամներից մեկը (ով հետագայում պարծենում էր, թե ևս մի փամփուշտ է արծակել նրա հետույքին, քանի որ նա *գեյ* էր) եվրոպայի արևմտյան մասում, մինչ ստալինիստները սպանում էին Չարենցին, Մանդելշտամին և շատ ու շատ ուրիշներին Արևելյան հատվածում, փորձել է խափանել մի գրքի հրատարակումը, որում քննարկման նյութ էր դարձել բանաստեղծի նամակագրությունն իր ամերիկացի սիրեցյալ Ֆիլիպ Քանինգզի հետ: (Յոդվածագիրը բողոքում էր, որ նրանք Լորկային փորձում են «ասեքսուալ հրեշտակ» ներկայացնել: Որպես համեմատություն՝ վերջերս լույս է տեսել «Եղիշե Չարենցի աղոթքները», դստեր՝ Արփենիկ Չարենցի խմբագրմամբ, որում զետեղված բանաստեղծությունները ներկայացվում են որպես աղոթքներ, թեև նման իմաստ դրանցում երբեք չի եղել): Համաշխարհային համարում ունեցող բիսեքսուալ կամ հոմոսեքսուալ գրական գործչի հանդեպ դիրքորոշումների հարցում Հայաստանը նման է ցանկացած այլ գրագետ ու գրականասեր ազգի: Բավական է հիշել Հաֆեզին և Սահադուն Իրանում, արաբ Աբու Նուվասին, Ուիլյամ Շեքսպիրին Անգլիայում, Արթուր Ռեմբոյին, Ժան Ժենեթին և Անդրե Ժիդին Ֆրանսիայում, Կոնստանտին Կավաֆիին և Ջաննիս Ռիցոսին Հունաստանում, Ռիլկեին Գերմանիայում, Միխայիլ Կուզմինին Ռուսաստանում, և Ուիթմենին Ամերիկայում (Չարենցը կարդում և թարգմանություններ էր անում վերջինից, սակայն ռուսերենի օգնությամբ): Կավաֆին ներկայումս լայն ընդունելության է արժանացել Ռուսաստանում. «Греческая библиотека» շարքի «Русская Кавафиада» հատորում (I, Մոսկվայի պետական համալսարան, Մոսկվա, 2000թ.), կան բանաստեղծի ընտրանու թարգմանություններ, ինչպես նաև մի շարք ուսումնասիրություններ, այդ թվում՝ հոդվածներ, որոնք գրել են Նոբելյան մրցանակակիր և ռուս մեծ բանաստեղծ Իոսիֆ Բրոդսկին և բանասեր-գրականագետ Վ.Ն. Տոպորովը:


- 7 Հավանական է, որ Չարենցը միասեռական ընկերներ ուներ Ռուսաստանում: Վաղ 1920-ականներին նա ապրում էր Մոսկվայում, և ռուսերենն իր երկրորդ մայրենին էր դարձել: Նրա վրա մեծ ազդեցություն էր թողել իմացինիստ բանաստեղծ Կուսիկովը, որն ազգությամբ հայ էր, թեև գրում էր ռուսերեն: Կուսիկովն անդամակցում էր այն խմբավորմանը, որի ակտիվ անդամներից էր նաև հանրահայտ միասեռական բանաստեղծ և գրող Միխայիլ Կուզմինը: Ժամանակին Չարենցը վերջինիս «Ալեքսանդրիական երգեր»-ից մի հատված է թարգմանել հայերեն: Նրանցից մի քանիսի մասին տես՝ Kevin Moss, ed., *Out of the Blue: Russia's Hidden Gay Literature, An Anthology*; San Francisco: Gay Sunshine Press, 1997, միասեռականության և ռուսական օրենսդրության մասին տես՝ Rawley Grau, "Past Out: How did the Russian Revolution affect gays and lesbians?" in *Newsweek*, Boston, 31 Jan. 2001, p. 35, with refs: Ներկայումս իմ մտերիմ ընկեր և հարգարժան կոլեգան՝ դոկտոր Նիկոլայ Գորելովը, Ռուսաստանում միասեռականության բնագավառում թերևս ամենակարկառուն գիտնականն է, տես՝ Կ. Ротиков, *Друзои Петербурга*, Санкт-Петербург, Лига Плюс, 2001, որը Հյուսիսային Պալմիրայի միասեռականների պատմությունն է՝ գրված Արծաթե Դարի կլանող ոճով:
- 8 Մերօրյա հայագիտության մեջ անձնականը քաղաքականի է վերաճում այնպես, ինչպես նույնիսկ Նոր ձախաթկյան գուրուների մտքով չէր անցնի: 1998 թ., վերը նշված անտիպ երկերի լուսապատճեններով երևանից վերադառնալուցս կարճ ժամանակ անց, թարգմանեցի Չարենցի բանաստեղծություններից շատերը՝ կենսագրական մի հոդվածի կից՝ որպես սփյուռքահայ երգիչ Պերճ Թուրապյանի համար նախատեսվող խոսակցականի ձևավորման տեքստային հավելում: Սակայն նա չցանկացավ, որ տեքստում տեղ գտնի Չարենցի բիսեքսուալությանը վերաբերող հատվածը: Իրողությունը, ասաց, կարևոր չէ. նա մտավախություն ուներ, որ նշված հրապարակման արդյունքում ինքը Հայաստանում պարսավանքի կարծանանա: Ճշմարտությունը, սակայն, հասու դառնալով գիտնականին, չի կարող բանակցության առարկա դառնալ: Այդպիսով, հետ վերցրեցի բոլոր նյութերը, իսկ թարգմանությունները տպագրվեցին «Արարատ Բուրբուրի»-ում: (Հետագայում նրա ընկերներից մեկը, ում հետ ծանոթացել ու ընկերացել էի Նյու Յորքում, *ad hominem* քննադատական հոդված տպագրեց իմ հայագիտական ողջ աշխատանքի առնչությամբ մի ժամանակ գիտական համարում ունեցող «Պատմաբանասիրական հանդես»-ում: Իմ ենթադրյալ մեղքն այն էր, որ այս հարցը պետք է համաձայնեցվեր այժմ արդեն մահացած ակադեմիկոս Իգոր Դյակոնովի այն դիրքորոշման հետ, ըստ որի՝ հայոց լեզուն տեղածին չէ, այլ օտարանուն): Այնուհետև, Պուշկինի «Մարգարե» բանաստեղծության չարենցյան թարգմանության մասին իմ հոդվածով սկսեցին հետաքրքրվել *Raft* գրական պարբերականի խմբագիրներ պրոֆ. Վահե Օշականը (այժմ մահացած) և Ջոն Գրեյինը: Իսկ երբ կարդացին այն, հրաժարվեցին տպագրել, քանի որ քննվում էր նաև բիսեքսուալության հարցը: Երկուսի անունից գրված և Գրեյինի կողմից ստորագրված նամակում հայտնեցին ինձ, որ անկախ հոդվածի գիտական արժեքից, սեքսուալության հարցը հայերի համար հետաքրքրություն չի ներկայացնում, բացի այդ, նման հոդվածի հրատարակման դեպքում կարող են զրկվել համայնքի ֆինանսավորումից: Չգիտեմ՝ հարցում անցկացվե՞լ է արդյոք այդ կապակցությամբ, թե՞ ոչ: Բոլոր դեպքերում, ընտրության չափանիշները որևէ նշանակություն գիտնականի համար չէին կա-

2008
#5




րող ունենալ: Պրոֆ. Դենիս Փափազյանն ունեցավ թե՛ մասնագիտական ազնվություն, և թե՛ անձնական խիզախություն այս աշխատությունը *Journal of the Society for Armenian Studies*-ում տպագրելու համար: Օշականը մահացել էր, բայց ես Գրեյֆին տպագրված բանաստեղծության մի նմուշ ուղարկեցի, որը նա հավանեց: 1998 թ. Նյու Յորքում բնակվող ինձ ծանոթ մի հայ լեքսիկոնի, որն ուսանել էր Երևանի պետական լսարանում, ասաց ինձ, որ Չարենցի միասեռական լինելն այնտեղ բոլորին է հայտնի, և որ նրա սիրեցյալներից մեկն այժմ էլ ողջ է: Այլ մանրամասներ նա չհաղորդեց, թույլ չտվեց նաև իր անունը հիշատակել՝ ինչ-ինչ մտավախություններից ելնելով... Քանի որ պսևդո-գիտական և անթաքույց հակասեմիտական հարձակումները սովորական երևույթ են մերօրյա հայկական մամուլի մեծ մասում, կարելի է ենթադրել, որ բանաստեղծական երկերի այս հրապարակման կապակցությամբ կինչեն մեղադրանքներ դրա անբարո և թաքնված նպատակների մասին: Ինչպես սիրում էր կրկնել Կուրտ Վոնեգուտը՝ *Այդպիսի բաներ...*

- 9 Չեռագրում այս բառը գրեթե անընթեռնելի է, այնպես որ, ներկայացվածը լոկ ենթադրություն է:
- 10 Տե՛ս իմ հոդվածը Ռեգինա Ղազարյանի, Ավետիք Իսահակյանի և այլոց վերաբերյալ (*The Armenian Counterculture That Never Was*):
- 11 Բանաստեղծը գործածում է դասական հայերենի բառը՝ *վեշտասմյա*: Տե՛ս այս բառի շուրջ իմ մեկնաբանությունները «The Armenian Counterculture...» հոդվածում:
- 12 Հայ. «տրփուհի» բառի գործածումը գալիս է հնագույն պատմաբան Մովսես Խորենացու՝ Արա Գեղեցիկի հանդեպ Շամիրամի տածած սիրո նկարագրությունից: Չարենցն իր ոչ երկար կյանքի ընթացքում՝ պատանեկությունից մինչև հասուն տարիք, իր մի շարք բանաստեղծություններում բազմիցս անդրադարձել է Շամիրամի անպատասխան կրքին:
- 13 Չարենցը չէր տիրապետում անգլերենին: Ըստ Չարենցի գրադարանի գրքերի ցանկի (տե՛ս Ուինկելմանի մասին ծանոթությունը ստորև), նա ուներ Օ. Ուայլդի «Սալոմեի» ռուսերեն թարգմանությունը, հրատարակված 1908 թ. Մոսկվայում, ինչպես նաև Ուոլթ Ուիթմենի «Խոտի տերևները» ստեղծագործության Կ. Բալմոնտի թարգմանությունը (Մոսկվա, Սկորպին, 1911թ.): Ուիթմենից մի հատվածի թարգմանությունը նա արել է ռուսերենից: Օսկար Ուայլդը (1854-1900)՝ իռլանդացի գրող, համարվում է Իռլանդիայի ազատագրման առաջին ջատագովներից և միասեռականության ազատականացման շարժման այդ ժամանակահատվածի զոհերից մեկը: Նա լորդ Ալֆրեդ Դուգլասի սիրեցյալն էր և իր հոմոսեքսուալության անթաքույց դրսևորումների համար ի վերջո հասցվեց մահվան Վիկտորյան Անգլիայի միջամտությամբ (տե՛ս Richard Ellmann, *Oscar Wilde*, New York: Knopf, 1988): Այսօր նա հերոսի կարգավիճակ ունի. *Velvet Goldmine* կինոնկարում (1998թ.) նա ներկայացվում է բառացիորեն որպես այլ աշխարհից հայտնված ավատար՝ մարմին առած աստվածություն, Իգի Փոպի, Լու Ռիդի, Քլոդ Բոքեյնի խարիզմատիկ նախակարապետ: Թոմ Ստոպըրդի *The Invention of Love* պիեսում (New York, Grove, 1997), Ուայլդի կողմից իր ճշմարիտ բնույթը բաց ճակատով ընդունելը բնութագրվում է որպես ճշմարտացի, հեղափոխական՝ հակադրվելով Ա.Ե. Զառուսմանի ծպտված, չարչրկված հոմոսեքսուալության՝ գիտական աշխատանքի միջոցով սուբլիմացիային (միասեռական գրաքննադատ և կլասիցիստ Դենիել Մենդելսոնն իր մի վերլուծական հոդվածում հանդես եկավ ի պաշտպանություն Զառուսմանի և նրա գիտական գործունեության, սակայն դրանով իսկ լոկ հաստատեց առաջադրված խնդիրը չըմբռնելը): Չարենցի դարաշրջանում արդեն Ուայլդի *Ballad of Reading Goal-ը* և *De Profundis*-ը նրան փառքի բարձունքի էին հասցրել: Չարենցն այս մարտիրոսական շարքի մասն է դառնում:
- 14 Յոհան Յոախիմ Ուինկելմանը, ծնվ. 1717 թ., դասական հնագիտության ամբիոնի դեկանն էր, ղեկավարել է Պոմպեյի և Հերկուլանումի (այժմ՝ Երկուլանո քաղաք Իտալիայում) առաջին արշավախմբերը: Նա համոզված էր, որ դասական արվեստը, հատկապես՝ հունական քանդակագործությունը, գեղեցիկի այնպիսի գործություն ունի, որի գեղագիտական ազդեցությունը կարող է ըստ արժանվույն զնահատել միայն այն անհատը, որը հասել է աստվածային հաղորդության մակարդակի: Այս գաղափարը հիշեցնում է Գեղեցիկի մասին պլատոնյան փիլիսոփայությունը, սակայն թերևս՝ առանց մաքրաբարոյության: Ռիկկեն կարծես ձայնակցելիս լինի նրան իր *Archaischer Torso Apollos*-ի վերջին տողում, անհրաժեշտ համարելով կերպարանափոխությունը, ինչն, ըստ իս, միշտ պարունակել է ինչ-որ հանդիմանանք, մահվան նման դառն անձնական զոհողության սառը պահանջ: Իր ընկեր Բերենդիսին ուղղված նամակում Ուինկելմանը գրում է մի պատանու մասին. «Մեկը, որի հետ ես կարող եմ խոսել սիրուց՝ բարետես, խարոյաշ մազերով, տասնվեցամյա հռոմեացի, ինձանից կես զլուխ ավելի բարձրահասակ»: Ուինկելմանի սպանությունը Տրիեստե նավահանգստային քաղաքում 1768-ի հունիսին, որին անդրադարձել է Չարենցը, այժմ էլ պատված է անհայտության մշուշով, սակայն պարզ է, որ այն կապ է ունեցել նրա հոմոսեքսուալության հետ (տե՛ս Wolfgang Leppmann, *Winckelmann*, New York: Knopf, 1970): Չարենցը ծանոթ էր Ուինկելմանի աշխատանքներին՝ իր անձնական գրադարանում ուներ Ռուսաստանում 1935-ին հրատարակված նրա երկերի ժողովածուն՝ Ви(н)кельман, *Избранные произведения*, ինչպես վկայում է բանաստեղծի երևանյան տուն-թանգարանում գտնվող՝ *Եղիշե Չարենցի անձնական գրադարանի գրքերի ցանկը*: Վերջինիս պատճենի համար պարտական եմ իմ ուսանողուհի Սյուզեն Բարբրային, որը Հարվարդի համալսարանում մագիստրոսական թեզի առնչությամբ Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուին նվիրված իր ուսումնասիրությունն անցկացնելու



- ընթացքում այդ արժեքավոր ցանկի օրինակն ինձ տրամադրեց:
- 15 Այս դեպքում էլ հարկ է նշել, որ Չարենցն եղգար Ալան Պոյի երկերը ռուսերեն էր կարդում, իսկ ռուսներն իրենց հերթին այս ամերիկացու մասին տեղեկացել էին Բողլերի հանրահայտ էսսեից (Բողլերի մասին տես Չարենցի ստորև ներկայացված տողերը): Ռուս սիմվոլիստ բանաստեղծ Վալերի Բրյուսովի վրա, որը հայ պոեզիայի բազմաթիվ նմուշներ է թարգմանել, Պոն նկատելի ազդեցություն է թողել (տես Joan Delaney Grossman, *Edgar Allan Poe in Russia*, Wtirzburg: Jai-Verlag, 1973, ռուս. թարգմ.՝ М. Д. Шерешевская, *Эдгар Аллан По в России, Санкт-Петербург*: Гуманитарное Общество "Академический Проект", 1998, ինչպես նաև նույն հեղինակի՝ *Valery Bryusov and the Riddle of Russian Decadence*, Berkeley and Los Angeles: Univ. of California Press, 1985): Չարենցի «Քամի» բանաստեղծությունը ևս կրում է Պոյի բաղաձայնության (ալիտերատիվ) կանխագուշակող, դյուբոլ արտահայտչամիջոցների ազդեցությունը: Հայ արվեստի սիրահար Բրյուսովին ընթերցելն արդեն իսկ կարևոր ուղեցույց կարող էր դառնալ Պոյի մասին տեղեկանալու և օկուլտիզմի, մոգականության և դեկադենտության նրա լուսապսակով հրապուրվելու համար:
 - 16 Հավանաբար՝ *պոետ մեղապարտ*. տարբեր այլ տեղերում Չարենցն օգտագործում է ինքնանվաստացման այս մակդիրը, որը բնորոշ էր միջնադարյան գրողներին և լայնորեն տարածվեց առաջին հայ տպագրիչի՝ Հակոբ Մեղապարտի շնորհիվ:
 - 17 Որպես լքված թափառականի ձգված մի լար/հողում է սիրտս կարոտով մի ահարկու, այսպես է սկսվում Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը (1920 թ.), որի հեռավոր արձագանքն է այս տողը: Նշված բանաստեղծության շարունակության մեջ կախաղանի պարանդ *պիրկ* բառով է բնորոշվում և նույն բառն է գործածում նաև այստեղ՝ նիզակի մման կիզող առնանդամի դեպքում: «Մահվան տեսիլում» նա խնդրում է, որ ոչ մի զոհ չպահանջվի իր ժողովրդից՝ իրենից բացի: Սեքսը հաճախ է նմանեցվել մահվան. բանաստեղծի ավելի վաղ գրված «Կատուններն ու են» բանաստեղծության մեջ Չարենցը խանդով է նայում վաղ զարնանը դիմացի շենքի կտուրի վրա հարաբերվող երկու կատուններին և ծնագնդիկով խփում նրանց: Ավելի ուշ հասկանում է, որ եթե նրանց սիրային էքստազը չընդհատեր՝ ընկնելու էին կտուրից ու սատկեին: Սեռական հարաբերությունում դերերի փոփոխությունը մեկ այլ թեմա է՝ նախորդ բանաստեղծության մեջ, ինչպես տեսանք, բանաստեղծն իրեն տեսնում է մերթ կիզողի, մերթ կիզվողի, այսինքն՝ մերթ Ռեմբրի, մերթ Վերլենի դերում:
 - 18 «Ամբոխները խելագարված» պոեմը Չարենցի վաղ շրջանի հանրահայտ ստեղծագործություններից է, որի կրակոտ հեղափոխական ոգեշնչումը հետագա ժամանակների ընթերցողը բավական զավեշտական ու անպատեհ էր ընկալում: Երեսուն տարի առաջ, երբ նոր էի հայտնագործում Չարենցին Կոլումբիայի համալսարանում, կուրսեցիս՝ Հարութ Սասունյանը, սովորաբար ողջունում էր ինձ արևմտահայերեն (քանզի Բեյրութից է) հետևյալ բառերով՝ «Ամպողները խելակարված են», այնքան անմիջականորեն՝ կարծես օրվա եղանակն էր մեկնաբանում: Շատ զվարճալի էր, բայց և վկայությունն էր այն փաստի, որ «խելագարված» բառը հիրավի Չարենցի լեքսիկոնի ճշմարառն էր:
 - 19 Չարենցի առաջին բանաստեղծությունները հրատարակվել են 1912 թ.՝ Թիֆլիսի «Պատանի» գրական ամսագրում, որի կազմի վրա Բորդալիի՝ դարավերջի գծանկարչության ոճով, պատկերված էր երազկոտ անչափահաս պատանյակի գիսախոշիվ գլուխը:
 - 20 Այս վերծանումը պայմանական է՝ հմնտ. նույն բառի գործածումը պոեմի նախորդ մասում:
 - 21 Արխիվը պարունակում է այս բանաստեղծության երկրորդ տարբերակը, որ վերնագրված է *Մահ լեզենդրին անմահ/(Արդ և հավիտյան)*:
 - 22 Երկրորդ տարբերակում տեղ է գտել *կապույտ* բառը՝ անկիրք-ի փոխարեն: Չարենցի բանաստեղծություններում նրա երազած Հայաստանը միշտ *կապույտաչյա* է:
 - 23 Սա ներելի անախրոնիզմ է: Պարթևները Հայաստանի տեսադաշտում հայտնվում են մոտավորապես մ.թ.ա. առաջին դարից ոչ շուտ, մինչդեռ պատմական Շամիրամի կերպարը վերաբերում է առաջին հազարամյակի սկզբնական շրջանին, իսկ Պլատոնն անդրադառնում է Արայի առասպելին չորրորդ դարի սկզբին (տես J.R. Russell, "Er, Ara, and Arda Viraz," *Revue des Etudes Armeniennes* 18, 1984, pp. 477-485: Տես նաև հաջորդ ծանոթագրությունը:
 - 24 Նախորդ երկու պոեմները կապված են Մովսես Խորենացու գրառած առասպելի հետ, ըստ որի՝ Ասորեստանի թագուհի Շամիրամը (*Shamuramat, Semiramis*), որը խենթի պես սիրահարված էր Հայոց թագավոր Արա Գեղեցիկին, մերժվելով վերջինիս կողմից, ով հավատարիմ մնաց իր կնոջը՝ Նվարդին, մի ամբողջ բանակ է ուղարկում նրան գերեվարելու համար: Շամիրամի զինվորները սխալմամբ սպանում են Արային, և Շամիրամը նրա մարմինը տեղափոխում ու դնում է աշտարակի վրա, որպեսզի երկնային շները՝ «արալեզր», նրան ապաքինեն ու վերակենդանացնեն: Քսանականներին Չարենցը մի քանի բանաստեղծություն է նվիրել այս առասպելին, որոնցում կարեկցում է թագուհու մերժված սիրուն և խորհում այն մասին, որ մեր օրերում բյուրավոր երիտասարդներ՝ փողոցային ցինիկ Արաներ, ուրախությամբ հաճույք կպատճառեին նրան, սակայն կորսված կլինեին հին կիրքը:

2008
#5




Չարենցը՝ մարգարե

Անգլերենից թարգմանեց Անահիտ Բորիկյանը

Նվիրվում է Ալեքսանդր Պուշկինի ծննդյան 200-ամյակին

Նապոլեոնի դեմ մղված պատերազմում Ռուսաստանի դարակազմիկ հաղթանակը՝ 1812 թ. իրադարձություններն ու զավթիչ բանակի պարտությունը դրանից երեք տարի անց, Կայսրությունում սահմանադրական բարեփոխումների մեծագույն հույսեր ներշնչեցին: Այս տրամադրությունները հանգեցրին Ռուսաստանի հյուսիսում և հարավում մի շարք հեղափոխական քաղաքական կուսակցությունների կազմավորմանը, որոնք հաղթանակի հորձանքում Արևմուտքի գաղափարախոսական արժեհամակարգին հասու դարձած սպաների և մտավորականների ժողովրդավարական այլընտրանքն էին ավետում: Ազատականների ակնկալիքներն աչքի էին ընկնում մեծ բազմազանությամբ, սկսած Մուրավյովի՝ սահմանադրական մենիշխանության պահպանողական տեսլականից մինչև գնդապետ Պավել Պեստելի՝ յակոբինյան կարգի հանրապետության հաստատման և երկրի մշակահողերի արմատական վերաբաշխման պահանջը: 1825 թ. դեկտեմբերի 14-ին (նոր տոմարով՝ դեկտեմբերի 26-ին) արմատական ռեֆորմատորների (բարեփոխիչների) Զյուսիսային խումբն ապստամբեց՝ նպատակ ունենալով համոզել մայրաքաղաքի զինվորականությանը պաշտպանելու թագաժառանգ արքայազն Կոնստանտինի թագադրման իրավունքն ընդդեմ նրա եղբոր՝ Նիկոլայի: Շուրջ երեք հազար ապստամբներ էին հավաքվել Սանկտ Պետերբուրգի կենտրոնում գտնվող *Սենատսկայա* հրապարակում: Նրանց դեմ ելած կրկնակի ուժերի պարագայում անգամ հնարավոր կլիներ հաջողության հասնել, եթե չհապաղեին և վճռականություն ցուցաբերեին: Ի վերջո, Նիկոլայը հրետանու մասնակցությամբ հարձակման հրաման արձակեց և ջախջախեց ապստամբությունը դեռ մինչև նրա ծավալվելը: Ռուսաստանի ողջ տարածքում ծայր առան զանգվածային ձերբակալություններ:

Շատերը հույս ունեին, որ նոր Կայսրը՝ Նիկոլայ I-ը, գթասրտություն կցուցաբերի իր թագադրության կապակցությամբ, սակայն միապետը, որի թագավորունը բնութագրվելու էր «Ուղղափառություն, ինքնակալություն և ժողովուրդ» կարգախոսով՝, հիասթափեցրեց վերնախավի ազատական գործիչներին: 1826 թ. հուլիսի 13-ին ցարի հրամանով դավադիրներից հինգը կախաղան հանվեցին, այդ թվում՝ Պեստելն ու բանաստեղծ Ռիլենը, երկուսն էլ՝ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի մտերիմ ընկերները: 300 այլախոհների հանդեպ կիրառվեցին զանազան այլ պատժամիջոցներ, ևս 120 հոգի շղթայված աքսորվեցին Սիբիր: Երիտասարդ իդեալիստներից շատերի սրտերը ժամանակին բոցավառվել էին նոր դարից ընդամենը մեկ տարով մեծ նրանց ընկերոջ՝ Պուշկինի բանաստեղծությունների ազդեցությամբ: Պյոտր Բեստուժևն իր հարցաքննության ժամանակ խոստովանել է, որ իր ոգեշնչումը սերել է Պուշկինի «Ձոն ազատությանը» բանաստեղծությունից: Ինքը՝ Պուշկինը, սիբիրյան աքսորից կամ առավել ծանր պատժից փրկվեց սոսկ պատահականության շնորհիվ: Ըստ հանրահայտ պատումի, նա ծրագրում էր մայրաքաղաք մեկնել, սակայն չարագույժ երեք նախանշան՝ ճանապարհը կտրած երկու նապաստակն ու ծխական քահանայի կերպարանքը, հետ պահեցին ճամփա ընկած բանաստեղծին: Հազվագյուտ հաջողություն ռուս գրականության համար: Բայցևայնպես, Պուշկինն արտաքսվեց մայրաքաղաքից. նա բնակություն հաստատեց Պսկովի մերձակայքում գտնվող իր տոհմական Միխայլովսկոյե կալվածքում: Այն ամռանը, երբ մահապատժի ենթարկվեցին դեկաբրիստները, Պուշկինը գրեց իր «Մարգարե» («Пророк») բանաստեղծությունը: Ստեղծագործության սկզբնական տարբերակն, ըստ ամենայնի, ավարտվում էր հետևյալ հանդուգն քառյակով, կամ նմանատիպ այլ տողերով՝



Восстань, восстань, пророк России,
 Позорной ризой оденись
 И с вервием вокруг смиренной выи²
 К царю кровавому явись.

Կայսրը, որն ընդամենը չորս տարով էր մեծ Պուլկինին, հրամայեց իր մոտ բերել նրան: 1826 թ. սեպտեմբերի 3-ի գիշերը մի ֆելդեգեր ժամանեց նրան Միխայլովսկոյեից Մոսկվա ուղեկցելու: Այդ ճանապարհը՝ ցեխոտ 700 վերստ, անցան ընդամենը չորս օրում: Մայրաքաղաքում, առանց բանաստեղծին հանգստանալու կամ անգամ լվացվելու հնարավորություն տալու, նրան անմիջապես բերեցին ցարի մոտ՝ *Չուդով* մենաստան: Պուլկինը՝ «Մարգարեի» եզրափակիչ բոցաշունչ քառյակով ձեռագիր օրինակը գրպանում, մտորում էր այն մասին, որ եկել է իր վերջը: Տարիներ անց բանաստեղծի ընկերը՝ Ա.Վ. Վենկտինովը, ասել է Լերմերին. «Երբ Պուլկինը հայտնվեց Կրեմլյան պալատում, նա հաստատապես որոշել էր, որ թագավորին ուղղված իր բացատրությունների անբարենպաստ արդյունքի դեպքում, մինչև հեռանալը, ինքը բանաստեղծությունը կհանձնի Նիկոլայ Պավլովիչին»: Ցարն ու բանաստեղծը զրուցում են երկու ժամ՝ Պետրոս Մեծի մասին, ում երկուսն էլ պաշտում էին, և տարաբնույթ թեմաների, այդ թվում՝ գրաքննության և ժողովրդական կրթության շուրջ: Վերջում Նիկոլայը հարցնում է Պուլկինին, արդյոք նա կմասնակցե՞ր ապստամբությանը, եթե Պետերբուրգում լիներ: Բանաստեղծը հայտարարում է, որ ապստամբներն իր ընկերներն են, և եթե ինքը նրանց կողքին լիներ, ապա կմիանար նրանց: Ազնվության ու խիզախության այս դրսևորումից ակնհայտորեն տպավորված՝ ինքնակալը Պուլկինին ասում է, որ այսուհետ ինքը՝ Նիկոլայն է լինելու բանաստեղծի միակ գրաքննողը: Այսպիսով ավարտվում է նաև Պուլկինի վեցամյա անողորմածությունը: Հետագայում լեի մեծանուն բանաստեղծ ու հեղափոխական գործիչ Ադամ Միցկևիչն իր կարծիքն է հայտնել Ալեքսանդր Գերցենին, որ ցարից լսած գովեստի խոսքերն են հանգեցրել ցարի հանդեպ Պուլկինի երախտագիտության ու ջերմ վերաբերմունքին: (Պուլկինն ըստ էության գրել էր իր «Հուսով առ փառքն ու բարին» («В надежде славы и добра») բանաստեղծությունը ցարի համար, ինչը հարուցել էր Միցկևիչի դժգոհությունը, իսկ Պուլկինի ազգայնական, հակալեհական «Ռուսաստանի գրպարտիչներին» («Клеветникам России») բանաստեղծությունը, որը լայնորեն ընդգրկված էր ռուսաց լեզվի քերականության ցարական դասագրքերում, որքան անկեղծ ու արդարացի, նույնքան էլ անհաճո էր): Երբ Պուլկինը Նիկոլայի ընդունելության ավարտին պատրաստվում էր հեռանալ, բանաստեղծության ձեռագիրն ընկնում է գրպանից, սակայն նա այն կրկին պահում է գրպանում: Նույն երեկոյան, պարահանդեսի ժամանակ, ցարն ասում է Բլուդովին. «Գիտե՞ք, այսօր ես բավականին երկար զրուցեցի Ռուսաստանի ամենակիրթ մարդու հետ: Կարո՞ղ եք կռահել՝ ում մասին է խոսքը»: Բլուդովը չի կարողանում կռահել: «Պուլկինի», - ասում է Նիկոլայը: Ոչ հեռու կանգնած և այս խոսակցությունը լսած իշխանուհի Ա.Ի. Տրուբեցկայան հետագայում բացականչելու էր Վենկտինովի հետ զրուցելիս. «Ես հիմա ցարին ավելի բարի աչքերով եմ նայում: Նա Պուլկինին մե՛զ վերադարձրեց»:

Սակայն եթովպական արյան խառնուրդով, փոքրամարմին, թխադեմ Պուլկինը Հյուսիսային Ռուսաստանի բարձրահասակ ու խարտյաշ պալատականների շրջանում դեռևս վստահություն չէր ներշնչում: Սանկտ Պետերբուրգի ավանդապաշտ բյուրոկրատիան՝ գրաքննիչները, ցարական ռեժիմը սպասարկող գաղտնի ոստիկանության պետ Բենկենդորֆը, ստորաքարշ, երրորդ կարգի գրող Բուլգարինը, ամեն կերպ ջանում էին կաղապարել նրա ազատատենչ ոգին, ծաղրուծանակի էին ենթարկում նրա բանաստեղծական տաղանդը և հազարավոր այլ ճղճիմ ձևերով նսեմացնում նրան: Ի վերջո, ամենայն հավանականությամբ, կայսերական իշխանավորների գործունե միջամտության շնորհիվ, բանաստեղծը հայտնվեց կնոջ դավաճանության փաստի առջև և ներքաշվեց տխրահռչակ Դանթեսի՝ իր կնոջը գայթակղած սրիկայի հետ անխուսափելի մենամարտի մեջ: 1837 թ. փետրվարին նա կնքեց իր մահկանացուն: Սակայն մինչ այդ, իր ցավալիորեն կարճ կյանքի ընթացքում ստեղծված գործերում Պուլկինը լիովին և ըստ արժանվույն հատուցեց իր հակառակորդներին. նա իր արվեստը մատուցեց որպես մարգարեություն,



բնածին շնորհի իրականացման սրբազան առաքելություն, որը վեր է կանգնած առօրեականության ճղճիմությունից: Եվ ռոմանտիզմի այդ դարաշրջանում բանաստեղծն ինքը դատապարտված էր մեմության, համդես գալով ոչ թե որպես արհեստավոր, այլ մուսայի սիրեցյալ ու մարմնավորում՝ տոգորված աստվածային խենթությամբ, վերամբարձությամբ, հեղափոխականությամբ ու կրքոտությամբ: Պուշկինի օրոք բանաստեղծի՝ որպես մարգարեի, ինքնապատկերը ձևավորվել էր ռոմանտիզմի դարաշրջանի աշխարհիկ ազգայնականության միջոցով, որի հիմքում դրված էին աշխարհիկ կրթության ուղղությունները: Ռոբերտ Լոուքն իր «*Դասախոսություններ հրեաների հոգևոր պոեզիայի մասին*» աշխատության մեջ (1747թ.), առաջադրում էր այն հարցը, որ Աստվածաշունչը կարող է ընկալվել որպես պոետիկ ստեղծագործություն, քանի որ եբրայերեն «պոետ» և «մարգարե» բառերը միևնույն իմաստն ունեն: Այդ դեպքում, Հին Կտակարանի մարգարեներն իրենց ժամանակի պոետներն էին, ուրեմն նաև ժամանակակից բանաստեղծները կարող էին հավակնել նոր դարաշրջանի մարգարեների կոչմանը: Բեյլին Պուշկինի մասին իր մեմագրության մեջ³ համեմատություն է անցկացնում «Մարգարեի» և Ուիլյամ Բլեյքի «Փորձառության երգերի» շարքի առաջին բանաստեղծության՝ «Անսացեք բանաստեղծի ձայնին»-ի միջև, որում Բլեյքը, թերևս ժամանակի ցանկացած այլ գրողներից շատ ավելի լրջորեն ու գիտակցաբար, հարաբերակցում էր բանաստեղծի և մարգարեի դերերը: Պուշկինի բանաստեղծություններն առկայում են գերբնական օժտվածության ու աստվածային շնորհի հղումներով: 1827-ին գրված «Արիոն» բանաստեղծության մեջ նա ներկայանում է որպես նավաբեկունից (նկատի է առնվում դեկաբրիստներին բաժին ընկած ողբերգությունը) հրաշքով փրկված խորհրդավոր երգիչ: Նույն թվականին նա մեկ այլ բանաստեղծություն է ձոնում արտաքսված իր ընկերներին՝ *Во глубине сибирских руд, храните гордое терпенье*: Նրա ընկերները, սակայն, բանաստեղծությունը դիտարկելով որպես գոռոզամիտ վերամբարձության դրսևորում, իրենց սեփական բանաստեղծություններում հակադարձում են, որ իրենք են բանտում գտնվում, ոչ թե նա, և նրա խորհուրդների կարիքը չեն զգում: Իմ անհոգ երիտասարդության տարիներին տպավորություն ունեի, թե Պուշկինն է *Поэтом можешь ты не быть, но гражданином быть обязан* (բանաստեղծ կարող ես չլինել, քաղաքացի լինել դու պարտավոր ես) արտահայտության հեղինակը, սակայն երբևէ չէի փորձել ստուգել այդ տպավորության ճշտությունը: Ըստ իս, հենց Պուշկինը պետք է դրա հեղինակը լիներ, սակայն, ինչպես ինձ տեղեկացրեց իմ գործընկերը՝ պրոֆեսոր Ջոն Մալմստադը, իրականում Նեկրասովն էր թևավոր խոսք դարձած այս տողի հեղինակը, ասույթ, որն առ այսօր լավագույնս արտահայտում է ռուսաստանյան մտավոր կյանքին այնքան հատուկ՝ գրականության և քաղաքականության փոխկապակցվածությունը, որը խորթ է արևմուտքին: Հետևաբար, հենց Պուշկինի գեղարվեստական, քաղաքական, հանրային և անձնական ստեղծագործական նվիրումի և տվայտանքի, ինչպես նաև սեփական արտառոց օժտվածության գիտակցման համատեքստում պետք է քննենք ու փորձենք ըմբռնել 1826թ. գրված նրա «Մարգարե» բանաստեղծությունը.

Духовной жаждою томим⁴,
В пустыне мрачной я влачился, —
И шестикрылый серафим
На перепутьи мне явился.
Перстами легкими как сон
Моих зениц коснулся он.
Отверзлись вещие зеницы,
Как у испуганной орлицы.
Моих ушей коснулся он, —
И их наполнил шум и звон:
И внял я неба содроганье,
И горний ангелов полет,
И гад морских подводный ход,
И дольней лозы прозябанье.
И он к устам моим приник,




И вырвал грешный мой язык,
 И празднословный и лукавый,
 И жало мудрыя змеи
 В уста замершие мои
 Вложил десницею кровавой.
 И он мне грудь рассек мечом,
 И сердце трепетное вынул,
 И угль, пылающий огнем,
 Во грудь отверстую водвинул.
 Как труп в пустыне я лежал,
 И бога глас ко мне воззвал:
 «Восстань, пророк, и виждь, и внемли,
 Исполнись волею моею,
 И, обходя моря и земли,
 Глаголом жги сердца людей».

Ահա Պուշկինի հիմնական սկզբնաղբյուրը.

Այն տարին, երբ մեռավ Օգիա արքան, տեսայ Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերագած աթոռին, իսկ տաճարը լի էր նրա փառքով: Նրա շուրջը սերովբեներ կային, որոնցից իրաքանչիւրը վեց թեւ ուներ. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում էին: Ձայնակցում էին իրար եւ ասում. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Ջորութիւնների Տէրը, եւ ամբողջ երկիրը լի է նրա փառքով»: Կանչողների ծայնից դռան բարաւորը վեր բարձրացավ, ու տունը լցուեց ծխով: Եւ ես ասում եմ. «Վա՛յ ինձ. ես մի տառապած մարդ եմ. ինչո՞ւ եմ ապշած կանգնել մնացել. չէ՞ որ ես մարդ եմ, պիղծ շուրթեր ունեմ եւ պղծաշուրթ ժողովրդի մէջ եմ ապրում, բայց ահա իմ աչքերով տեսայ Ջորութիւնների Տիրոջը: Եւ ահա ինձ ներկայացավ սերովբեներից մէկը՝ ձեռքին կաթ բռնած, որ ունելիով վերցրել էր զոհասեղանից: Բերեց մօտեցրեց իմ բերանին եւ ասաց. «Ահա մօտեցրի քո շուրթերին. դա կը համի քո անօրէնութիւնները, եւ քո մեղքերը կը սրբի քեզնից»: Եւ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՛ւմ ուղարկեմ, եւ կամ ո՞վ կը զնայ այդ ժողովրդի մօտ»: Ու ես ասացի. «Ահաւասիկ ես, ի՞նձ ուղարկիր»: Նա ասաց. «Գնա՛ եւ յայտնիր այդ ժողովրդին. «Լսելով պիտի լսէք, բայց չիմանաք, տեսնելով պիտի տեսնէք, բայց չճանաչէք. քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպէսզի չլինի թէ երբեւէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն, սրտով իմանան ու դարձի գան, եւ ես էլ բժշկեմ նրանց»: Եւ ես ասացի. «Մինչեւ ե՞րբ, Տէ՛ր»: Իսկ նա պատասխանեց. «Մինչեւ որ քաղաքներն աւերուեն բնակիչ չլինելու եւ տները՝ մարդ չլինելու պատճառով, եւ այդ երկիրը մնայ ամայի...» (Եսայի, գլ. 6): Պուշկինը կարծես նաև իր բանաստեղծական պատկերների մի մասն էլ քաղել է մէկ այլ հրեա մարգարե Եզեկիէլից, որը սերովբեի և տերունական գահի ավելի մանրամասն ու ամբողջական նկարագիր է ներկայացնում: Մարգարեն երեսն ի վայր ընկնում է վերջինիս հրաշափառ գեղեցկության առջև, և մի ձայն է լսում, որ խօսում էր ինձ հետ ու ասում. «Մարդո՛ւ որդի, ոտքի՛ կանգնիր, խօսելու եմ հետդ: Եւ Հոգին եկավ վրաս, բարձրացրեց ինձ ու կանգնեցրեց ոտքերիս վրայ (գլուխներ 1-2): Մեկ այլ հատվածում Եզեկիէլը նկարագրում է, թէ ինչպես էր ասկետիկ խորասուզման մեջ երկար ժամանակ պառկած մնացել իր կողքի վրա, և գլուխ 37-ում պատմում է մի տեսիլքի մասին, որում Իսրայելի տան սպանվածների չորացած ոսկորները կենդանանում են՝ ծածկվելով ջրերով, ապա մտնում մաշկով: Այս տեսիլքի առիթով ես ժամանակին կարծիք եմ հայտնել, որ այն կարող էր ձևավորվել զրադաշտական ոգեշնչման⁵ ազդեցությամբ՝ Իսրայելի այս ամենազարմանալի մարգարեին ուղղակիորեն կապելով շամանական կրոնի հետ: Բնավ պատահական չէ, որ թաւմուղյան մի աղբյուր նշում է, որ հենց Եզեկիէլն էր այն մարդը, որին պարսիկները Զրադաշտ⁶ են անվանում:

Պուշկինը հաճախ է օգտագործում Սուրբ գրքի աղբյուրները, սակայն որպէս ելակետ միայն⁷: Եսայու կանչը նկարագրող հատվածի վերջում Աստծո սարսափազդու որոշման անապատը տեղափոխվում է Պուշկինի բանաստեղծության սկիզբը: Կործանման արդյունքում գոյացած հուսահատության անապատի փոխարեն՝ այն վերածվում է ցամաք


2008
 11
 5



մենության, որի կարիքը զգում է քաղաքներից փախչելու մղումով և հոգևոր ծարավը հագեցնելու նպատակով այստեղ եկած ռուս մարգարեն: Այսպիսին է վաղ շրջանի քրիստոնեության ճգնաժամների անապատային կյանքի պարադոքսալ բերրիությունը, ընդ որում, նրանց կյանքի պատմություններն ուղղափառ եկեղեցու ավանդույթների անբաժան մասն են կազմում: Մեր օրերի գիտնական Փոլ Շեփըրդը գրում է. «Անապատը հայտնության վայր է, գեներալներն և ֆիզիոլոգիապես՝ անծանոթ, զգայականորեն՝ խստակյաց, գեղագիտորեն՝ վերացական, պատմականորեն՝ անբարենպաստ... Անապատ են գնում մարգարեներն ու ճգնաժամները, անապատը կտրում-անցնում են ուխտագնացներն ու աքսորյալները: Այստեղ է, որ հզոր կրոնների առաջնորդները որոնել և գտել են առանձնացման թերապևտիկ ու հոգևոր ապաքինման արժեքները՝ ոչ թե իրականությունից խուսափելու, այլ այն վերագտնելու նպատակով»⁹: Պուլչինը սերովբեին հանդիպում է ճանապարհների հատման կետում, ոչ թե տաճարում՝ դրանով իսկ ընդգծելով անցումը դեպի ձեռնադրում: Այդ խաչմերուկը կարող է հանդես գալ որպես փոխաբերություն, ցույց տալով կյանքի ուղու կեսը, կամ կրիտիկական կետը, ինչպես Դանթեի մոտ: Կամ՝ Ռոբերտ Ֆրոսթի ապագաների ընտրությունը¹⁰ է, կամ էլ՝ սոսկ խաչմերուկ: Սակայն այդ պարզ հասկացությունն ինքնին բնավ պարզունակ չէ. գրեթե ամենուր խաչմերուկը մոգական է իր իմաստով, մի կետ է, ուր գերբնական ուժերը կամ համատեղվում են, կամ ցրվում: Ապա նշվում է, որ սերովբեն քնի պես թեթև մատներ ուներ. ռուսերենում «сон» (քուն) բառը զուգորդվում է ոչ միայն անգլերենի համապատասխան բառի և մյուս հնդեվրոպական լեզուներում նշված իմաստն արտահայտող բառերի, այլև Ավեստայի khvafria-ի հետ, այսինքն այն բառի, որը Զրադաշտը գործածում էր՝ արտահայտելու այն տեսիլքը, որում նա տեսել էր աշխարհի սկիզբը և բարու ու չարի միջև առաջին պայքարը: Թերևս այսպես է Պուլչինն այստեղ ներկայացնում տրանսային վիճակի նկարագիրը:

Այդուհանդերձ, բանաստեղծն իրեն պատկերում է ոչ թե քնած, այլ արթուն ու քաջատեղյակ, ըստ էության՝ փոխակերպված: Նրա աչքերն այլևս սովորական մարդու աչքեր չեն, այլ արծվի՝ մի թռչունի, որին սիբիրյան շամանները պաշտում էին սրընթաց, հաստատուն թռչնի, ուժի և սուր տեսողության համար: Մարգարեն օժտվում է զգայարանների գերբնական սրությամբ և կարողանում է ընկալել բոլոր կենդանի արարածների շարժումները, անգամ եթե դրանք անասելի դանդաղ են ու հեռու՝ երկնքում կամ ծովի հատակում: Ժամանակն ու տարածությունը վերանում են, և ամեն բան փոխկապակցվում է կյանքի միասնական հոսքում: Այս կարգի օվկիանոսյան զգացողությունները խորհրդանշում են առեղծվածային փորձառությունը, իսկ կյանքի համընդհանուր միասնականության զգացողությունը հոգեմետ միջոցների ազդեցությամբ առաջացող էքստազային վիճակների հաճախակի վկայակոչվող ասպեկտն է: Պուլչինյան մարգարեի սիրտը հանվում է կրծքից ու հրավառված՝ տեղը դրվում: Այս անդամատումը ևս հատուկ է շամանական հաղորդության ծիսակարգերին: Ապա անշարժ պառկած բանաստեղծին, որն անցել է այս աշխարհի և հրեշտակների քրիստոնեական մյուս աշխարհի նման արտառոց փորձառությունների միջով, պատգամում են ելնել և խոսքով բոցավառել այլ մարդկանց սրտերը:

Մինչև Պուլչինի ծնվելը, ինչպես ռուս, այնպես էլ օտարերկրացի ճանապարհորդների բազում սերունդներ են դիտարկել, պատկերել, նկարագրել և ուսումնասիրել սիբիրյան շամաններին և նրանց ծիսակարգերը: Շամանականության այս գիտակները բնականաբար կարդացել էին Ջերոլդտի «Պատմությունների» չորրորդ գիրքը և զուգահեռ անցկացրել իրենց արձանագրածի և սկյութների ծիսակարգերի միջև: Շատերը համարում էին սակայն, որ սկյութների հետնորդները ռուսներն են, այլ ոչ՝ Արևելյան Ռուսաստանի և նրա հարևանությամբ գտնվող սիբիրյան տարածաշրջանի թուրքական և այլ ցեղերը: Մի քանի լեզուների փայլուն տիրապետող Պուլչինը, բնականաբար, տեղեկացված կլիներ նաև շամանների մասին: Ջոն Բել անունով մի շոտլանդացի վիրաբույժ (մահացել է 1780 թ.) բավական մանրամասն նկարագրել է իր այցելած բուրյաթ շամանին, որը, նստելով մի քանի այրվող ածուխների մոտ, փայտիկների հարվածների ուղեկցությամբ երգում էր: Ապա խորասուզման ու տրանսի մեջ ընկնելով՝ սկսում էր ոտաբորիկ քայլել կրակի վրայով, ժամանակ անց ուշքի էր գալիս ու պատասխանում իրեն ուղղված հարցերին¹⁰: Յոհան Գոտֆրիդ Շերդերը (մահացել է 1803 թ.) մեծագույն հետաքրքրությամբ էր ընթերցում սիբիրյան և այլ շամանական ծիսակարգերին և երգերին վերաբերող հաղորդումները: Դրանք նա համարում էր մարդկության գեղարվեստական և բանաստեղծական հնագույն դրսևորումների մասունքներ՝ համեմատելով ու կապակցելով առասպելական Օրփեոսի և աստվածաշնչյան մարգարեների գործունեության հետ¹¹: Այսպիսով, Պուլչինի բանաս-




տեղծության մեջ երևացող իմաստային նրբերանգներն ու պատմական կապակցումները, որոնք նա կարող էր օգտագործել, լայն տարածում էին գտել այն ժամանակ, երբ բանաստեղծը տակավին չորս տարեկան էր: Շամանականությունն իր տեղն էր հաստատել եվրոպացիների ուղեղներում և նույնիսկ որոշ չափով այն ոսպնյակի դերն էր ստանձնել, որի միջով ռոմանտիկ մտավորականներն ընկալում էին իրենց իսկ անցյալը: Մեր օրերի ռուս գրականագետները և մարդաբանները «Մարգարեում» շամանական հաղորդության ծիսակարգի ազդեցություն են գրանցել¹²:

18-րդ դարի գիտական մտքի անդրադարձը ռուսական կայսրության արևելյան տարածքի տեղաբնակների կրոնական ավանդույթներին կարող է նաև հիշեցնել այն իրողության մասին, որ 19-րդ դարում գրանցվեց Ասիայի մասին տեղեկատվության այնպիսի սրընթաց աճ, որ, ինչքան էլ որ դա զարմանալի թվա, այս ոլորտում միայն մեկ մասնագետներն էին կարող հավաստի աղբյուր համարվել: Դիլետանտներն ու բանաստեղծներն ստիպված էին նահանջել: Սակայն մինչ այդ՝ ռոմանտիզմի ներկայացուցիչ բանաստեղծները անսահմանափակ հնարավորություն ունեին ըմբռնելու այդ տիրույթը՝ իրենց ստեղծագործական նպատակների համար ներդաշնակ թվացող ամենատարբեր երկրամասերի ու մշակույթների նյութերը միատեղելով: Հետևաբար, Պուշկինը ևս կարող էր նույնպես վարվել «Մարգարեում»: Անգլիախոս համայնքում ավելի հայտնի մեկ այլ բանաստեղծության մեջ հանդես են գալիս պատկերներ, որոնք սերում են զարմանալիորեն տարաբնույթ աշխարհամասերի՝ Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի, աղբյուրներից, և զուգորդված են նույնանման գերբնական ունակություններով օժտված և անդրշիրմյան, մոգական աշխարհի տեղափոխված բանաստեղծի քուն-երազում: Խոսքն, իհարկե, Սենյուել Թեյլլը Քուրիջի «Կուբլա Խան» բանաստեղծության մասին է, որի տոնայնությունը, տաղաչափությունը, թեման և հերոսը որոշակի առումներով համահունչ են Պուշկինի լիրիկային: Ջոն Լիվինգստոն Լոուզն իր *Road to Xanadu* («Ճանապարհ դեպի Քսանադու») մենագրության մեջ մանրակրկտորեն վերլուծում է Քուրիջի բանաստեղծության համար հիմք ծառայած բազմաթիվ, հաճախ՝ էգոտերիկ աղբյուրները: Գերբնականի հետ այս կարգի առնչություն ունեցող բանաստեղծություններն իրենց յուրահատուկ ճակատագիրն ունեն, այնպես, ինչպես *habent sua fata libelli*¹³:

Քուրիջն իր երազը տեսել է 1797-ին կամ 1798-ին, իսկ բանաստեղծությունը տպագրել 1816-ին. այդ տարի նա մի նախաբան էր գրել ստեղծագործության համար, որում նշում է, թե դա իր ծրագրած նախաբանի այն մասն է միայն, որն ինքը հաջողեց թղթին հանձնել մինչև մոտակա Փորլոք գյուղից եկած աներես առևտրականների կողմից ընդմիջվելը: (Իհարկե, նրա տեսիլքը սոսկ վերացական երազի պտուղ չէր. Լոուզի տրամադրության տակ են համապատասխան նոթատետրերը, թեև հենց Լոուզի մեկնաբանությունները Քուրիջի ստեղծագործական պրոցեսի մասին, որպես կանոն և ըստ իս՝ իրավամբ, անընդունելի են համարվում): Սակայն միայն 1836-ին առաջին անգամ ի հայտ եկավ Ռաշիդ Ալ-Դինի՝ մոնղոլների պատմության թարգմանությունն արևմտյան լեզուներից մեկով, որում պարսիկ հեղինակը մեզ տեղեկացնում է այն մասին, որ «Կուբլա Խանը պալատ է կառուցել ըստ այն նախագծի, որը տեսել էր երազում և մտապահել»: Այսպիսով, ինչպես նշել է Խորխե Լուիս Բորխեսը, «Մոնղոլիայի կայսրը 13-րդ դարում երազում պալատ է տեսնում և ապա այն կառուցում է ըստ տեսած երազի, ապա՝ 18-րդ դարի անգլիացի բանաստեղծը (ով չէր կարող իմանալ այն մասին, որ կառույցը կյանքի էր կոչվել երազի հիման վրա) երազում բանաստեղծություն է գրում այդ պալատի մասին»: Լոուզը սա տարօրինակ զուգահեռություն է համարում, քանի որ ամենայն հավանականությամբ Քուրիջը չէր կարող կարդացած լինել Ռաշիդ Ալ-Դինի գրքում գետեղված տեղեկությունները: Բորխեսն այդ երևույթը չափազանց զարմանալի է համարում և հայտնում է հետևյալ միտքը. «Միգուցե աստիճանաբար աշխարհ է գալիս մարդկանց համար առաջին անտեսանելի մի նախատիպ, մի հավերժական գոյ (ըստ Ուայթհեդի գործածած եզրի). նրա առաջին դրսևորումը պալատն էր, երկրորդը՝ բանաստեղծությունը: Ով էլ որ համեմատի այդ երկուսը, կտեսնի, որ դրանք ըստ էության նույնն են»¹⁴:

Անշուշտ, կա մեկ այլ բացատրություն, որը, թերևս, ավելի օգտակար կարող է լինել, քան ուրվականանման նախատիպերի մոգական հայտնությունն այլ աշխարհից ու չափումից: Խոսքն այն մասին է, որ պատկերների մեծապես լիցքավորված, խորհրդանշական շարքի բանաստեղծական կամ ծիսական ուղեծներում, երբ առկա են բավարար թվով պայմաններ մատրիցայի կառուցման համար, մարդկային արտագիտակցական երևակայությունը հակված է լինում լրացնելու պակասող պայմանները: Քուրիջը, ապրե-

2008
17
5



լով մի դարաշրջանում, որի ռոմանտիկական ոգեշնչման ոլորտը հեղեղված էր տրանսի, կամ մոգական միրհի մասին ասիական տվյալներով, ընթերցում է երազի որոշ ասպեկտներով շաղախված, սակայն կոնկրետ երազի հետ հստակորեն չկապակցված մի պալատի մասին, ապա՝ ավելացնում է այդ երազն իր բանաստեղծության մեջ, կամ, ավելի շուտ՝ բանաստեղծության ստեղծմանը նպաստած ներշնչանքի իր պատմության մեջ, և ահա հետագայում մենք պարզում ենք, որ մեծ Խանի պալատը, փաստորեն, ստեղծվել է երազից քաղած ոգեշնչման շնորհիվ: Միգուցե Պուշկինի բանաստեղծությունը և՛ս ամնչվել է տարատեսակ աղբյուրների և տպավորությունների արտագիտակցական ընկալման միևնույն հատկանիշների հետ՝ համալրվելով այնպիսի ծավալուն և ստեղծագործական-երևակայական կառուցվածքներով, որոնք տեսանելի են Քուրիջի ստեղծագործության հիմքում: Քուրիջի բանաստեղծությունն ավարտվում է միրհող, խառնված մազերով երիտասարդի պատկերով, որը տեսել է Դրախտը, և որից հավատացյալները պետք է զգաստանան: Սա մասամբ մարգարեի դիմանկար է, սակայն այն նաև քաղաքական իմաստ ունի՝ յուրահատուկ հղում է նապոլեոնյան դարաշրջանի ռոմանտիկ հեղափոխականի կերպարին, որից մարդիկ իսկապես վախենում էին, և դավադրություն կասկածող անգլիական իշխանություններին: (Մինչդեռ Քուրիջն ու իր ընկերները խմում, երազում ու ստեղծագործում էին, Ներքին գործերի վարչությունը հետևում էր նրանց, համոզված լինելով, որ նրանք պատրաստվում են գրկաբաց դիմավորել ֆրանսիական զորքերի ներխուժումը: Մի անգամ գործակալ հայտնել էր, որ նրանք քննարկում էին «Սփայ Նոզի»* անունով մեկին: Սակայն ո՛չ Քուրիջի ընթերցումները Սպինոզայից, ո՛չ էլ նրա հանրապետական հայացքները երբևէ չհանգեցրին այն ճնշումներին ու հետապնդումներին, որոնք բաժին ընկան նրա ռուս գրչակիցներին):

Պուշկինը ճանապարհորդել է Չայաստան, գրել է «Ճամփորդություն Երզրում» նոթերը՝ 1828թ. ռուսների կողմից Երևանի Խանության գրավումից և Արևելյան Չայաստանի ազատագրումից քիչ անց: Թիֆլիսի և տարածաշրջանի այլ քաղաքների կրթված հայությունը ռուս գրականությանը ծանոթ էր արդեն 19-րդ դարում և իհարկե գիտեին Պուշկինի ստեղծագործության և դրամատիզմով լի կյանքի մասին: 20-րդ դարի ակներևաբար ամենանշանակալի ու փայլուն հայ բանաստեղծը Եղիշե Չարենցն էր (1897-1937), ծնված Ռուսահայաստանի Կարս քաղաքում: Մի քանի տարի Մոսկվայում բնակվելով՝ նա ռուսերենին նույնքան լավ էր տիրապետում, որքան հայերենին: Նրա անձնական գրադարանի գրքերի մեծ մասը (մոտ ութսուն տոկոսը, ինչպես ինձ ասացին Երևանի Մաշտոցի պոլիտայում գտնվող նրա տուն-թանգարանում) ռուսերեն են, և Պուշկինի գրքերի նրա հավաքածուն գերազանցում է ցանկացած այլ առանձին հեղինակի գրքերի քանակը: 1934 թ. մարտին նա իր օրագրում հետևյալ գրառումն է կատարել. «Երբ ես տխուր ու հոգնած եմ լինում և ուզում եմ վարձատրել ինձ մեծագույն հաճույքով - ես փակում եմ իմ տան դռները, պառկում - և սկսում եմ կարդալ Պուշկինը - ո՛ր գրվածքն ուզում է լինի...»¹⁵:

Թեև Չարենցը մի շարք ժանրերի վարպետ էր՝ սկսած 18-րդ դարի թիֆլիսահայ գուսան Սայաթ-Նովայի երգասացության ոճից մինչև *fin-de-siecle*-ի (դարավերջի) խորհրդանշական ու հռետորական ոճերը (Բալմոնտի ծոներն առ անորոշն ու տխուրը) և հեղափոխական Ռուսաստանի (Մայակովսկու հուժկու ռադիո-ընթերցումները) գրական ավանդույթները, Չարենցի լավագույն բանաստեղծություններն իրականում ոչ մի առանձին ուղղություն չեն ներկայացնում: Դրանցից մեկը՝ «Կատուններն ու ես», պատմում է վաղ գարնան, հալչող ձյան և խանդի մասին, մյուսը՝ «Մահվան տեսիլ», սկսվում է թավջութակի ձգված լարի ծայրի պատկերից: Վերջում բանաստեղծի լարված հոգում հառնում է իր կախաղան բարձրանալու տեսիլքը: Բոլոր ռուս գրողների, ինչպես նաև Ռեմբոյի, Բոդլերի և Ուոլթ Ուիթմենի մոլեռանդ ընթերցող Չարենցը երբեմն կոկաինի ու հերոինի օգնությամբ էր դիմում՝ մի դեպքում արթնանալու և գրելու, մյուս դեպքում իր պարսկական բազմոցի վրա ընդարմանալու և երազների մեջ ընկնելու, Բուդդային, Քրիստոսին ու Դանթեին հայելու: Մնացած ժամանակ մեծամասամբ խմում էր: Այդուհանդերձ, անխոնջ գրական խմբագիր էր, անհազ ընթերցող և բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն, նաև խենթ, աննկարագրելի սիրահար: Սիրում էր զուռնաչիների նվագը, հաճախ հրավիրում էր նրանց՝ իր ընկերներին հաճույք պատճառելու: Գիշերները հաճախ անց էր կացնում իր մահացած առաջին կնոջ դեմքի ծեփակերտին նայելով: Արդեն 1920-ականների կեսերին Չարենցը Լեֆ-ի բարձրագույն պոեզիայից անցնում է ավելի դա-

* բառացիորեն՝ «մեծ քթով լրտես», իրականում՝ Սպինոզա անվան աղավաղված տարբերակ (ծնթ. թարգմ.)



սական ձևերին (այդ թվում՝ իր իսկ ամենավաղ շրջանի ստեղծագործություններին), որոնց մինչ այդ հեղանակով էր վերաբերվում: Մի առիթով հայտարարել էր, որ Հոկտեմբերյան հեղափոխության մասին Պուշկինի «Եվգենի Օնեգինի» հանգով երգելը նման կլինեի կարմիրբանակայինին ռուսական *կաֆտան* հագցնելուն (նկատի է առնվում հանդերձանքի հնացած, ծանր, շարժումները կաշկանդող լինելը):

Քսանականների վերջին, սակայն, բավական երկար ապրել է Լենինգրադում, որտեղ համակված էր Պուշկինի չարագույժ ներկայության զգացողությամբ և գրում էր այդ մասին, իսկ 1930-ին իր «Էպիքական լուսաբացը» նվիրեց Մամիկոն Գևորգյանին՝ իր այն ընկերոջը, որն իրեն օգնել էր բացահայտել ու սիրել Պուշկինին¹⁶: Պուշկինի և Չարենցի հոգեհարազատությունը նշմարվում է իր ստեղծագործության բազմազան դրսևորումներում, որոնք հակադրվում են Ստալինի դարաշրջանի սովետական գրականությանը հատուկ քսենոֆոբիային, դրա՝ անհատականությունից զուրկ ու հակամտավորական ուղղություններին: Ինչպես և ռուս բանաստեղծը՝ Չարենցն անդրադառնում է համաշխարհային գրականության բազմաթիվ գրողներին ու ստեղծագործություններին՝ անտիկ և ժամանակակից, և բանաստեղծություններ հղում իր մտերիմներին՝ զրուցակցական մտերմության և խորունկ խոհականության այնպիսի ոճում, որը հաստատապես համահունչ էր երկրի առաջին Հնգամյա Պլանի և կոլեկտիվացման մթնոլորտին¹⁷: Եվ բնավ զարմանալի չէ, որ 1932-ին հայ գրաքննադատ Հ. Մկրտչյանը սուր քննադատության ենթարկեց Չարենցի տարվածությունը Պուշկինով, նշելով, որ բանաստեղծը թույլ է տվել «իդեոլոգիական սխալներ»: Այդուհանդերձ, Չարենցն էր նախագահում Հայաստանի պետական հրատարակչությունը (Հայպետհրատ) և հնարավորություն ուներ տպագրելու Պուշկինից թարգմանված գործերը, անդամ էր Պուշկինի մոսկովյան Ակադեմիայի վարչության, որը վերահսկում էր Պուշկինի հիմնական ստեղծագործությունների հրատարակումը, նաև նշանակվել էր նախագահը ՀՍՍՀ այն հանձնաժողովի, որը կոչված էր 1937-ին կազմակերպելու Պուշկինի մահվան 100-ամյակի կապակցությամբ նրան նվիրված միջոցառումները¹⁸: Չարենցը նախատեսում էր թարգմանել Պուշկինի «Պղնձե հեծյալ» (*«Медный всадник»*) պոեմն ամբողջությամբ: Պուշկինի այս էպիկական ստեղծագործությունն օժտված է վարարած Նևայի անողորմ ուժով, որը զուգորդված է Ֆալկոնի՝ ծիռն հեծած Պետրոս Մեծի արծառի ուրվապատկերով՝ տեսիլք, որը հետապնդում, խելացնորության է հասցնում և կործանում հերոսին՝ թույլ ու վտիտ Եվգենին: Պոեմը միանշանակորեն դատապարտում է ինքնակալությունը և չէր կարող ամբողջությամբ տպագրվել Պուշկինի օրոք: Չարենցն օգտագործում է նրա սկզբնական տողերը որպես իր «Չուգունե մարդ» բանաստեղծության բնաբան և բազմիցս անդրադառնում պոեմի թեմատիկ գծերին՝ բնության կործանարար ուժի մոլթ պատկերը փոխակերպելով մարդկանց և սոցիալիստական աշխատանքի դրական էներգիայի, ընդ որում, այստեղ երևան է գալիս բարյացակամ Լենինի արձանը (այլ ոչ՝ Ստալինի, որի անունը բառացիորեն նշանակում է «պողպատյա մարդ»): Ավաղ, Չարենցին վիճակված չէր ավարտել պոեմի թարգմանությունը:

Թերևս անհերքելի է, որ Չարենցը զուգահեռներ էր անցկացնում վաղ տասնիններորդ դարի ինքնակալության ու Պուշկինի ճակատագրի և քսաներորդ դարասկզբի սաստկացող բռնատիրության ու իր սեփական վիճակի միջև: Պուշկինն իր մի երգիծական բանաստեղծության մեջ Բուլգարինին հեղանակով «Ֆիզյարին» էր կոչում, և Չարենցն այս դեպքում էլ բանաստեղծությունը որպես բնաբան է օգտագործում իր իսկ, նույնքան քաղբեմի, քննադատներին պարսավելու համար: 1929 թ. հոկտեմբերին նա մի բանաստեղծություն է գրում («Ձմեռային պալատի ներքնահարկում»), որում քամահրանքով է վերարտադրում «խեղկատակ-թագավորի»՝ Նիկոլայ I-ի կողմից դեկաբրիստներին հարցաքննելու և նրանց բանտարկության, սիբիրյան աքսորի և կախաղան հանվելու դրվագները (ընդ որում, բանաստեղծությունն ավարտվում է *կախաղան* բառով): Այս վերջին պատկերը կարևոր է, քանի որ դեկաբրիստների ձերբակալությունից հետո Պուշկինն իր ձեռագրերի լուսանցքներում կախաղան հանված մարդկանց էր պատկերում, իսկ այդպիսի գծանկարներից մեկի տակ գետեղել էր նաև հետևյալ նախադասությունը. «Ես նույնպես կարող էի խեղկատակի նման օրորվել»¹⁹: Չարենցը ևս ծանր ապրումներ է ունեցել՝ կոմունիստների և դաշնակցական ազգայնականների միջև ծավալված պայքարի տարիներին Երևանում վկա դառնալով ի տես հանրության կախաղան բարձրացված մարդկանց. 1920 թ. հոկտեմբերի 6-ին նա գրեց «Մահվան տեսիլը», որում հենց կախաղանն է գլխավոր պատկերը, սակայն իր բանաստեղծության մեջ Չարենցն առաջարկում է, որ հենց

2008
17
5



իրեն կախաղան հանեն, եթե միայն այդ զոհողությամբ հնարավոր լինի Հայաստանը փրկել կործանումից²⁰: Ինքնագոհաբերման այս տարրը բանաստեղծությանը բարոյական ու քրիստոնեական հուժկու լիցք է հաղորդում, նրա բոցաշունչ պատկերավորությունից կարելի է վստահաբար ասել, որ Չարենցը Դանթեի պոպոսուն ընթերցող էր, որի *Inferno*-ն ինքն իր բանաստեղծության մեջ միտումնավոր նմանակում է, սակայն պատերազմից ջլատված իր իսկ երկրի առնչությամբ. ավելի ուշ ստեղծված մի ծավալուն գործում, որը նույնպես «Մահվան տեսիլ» է կոչվում, նա իր ընթերցողին ճանապարհորդության է տանում դեպի իր քաղաքական հակառակորդներով լցված դժոխք:

1937-ին ստալինյան Մեծ գտումն իր բարձրակետին հասավ. դրա համեմատ Նիկոլայ I-ի զանգվածային ձերբակալություններն ու հետապնդումներն աննշան ու անգամ քաղաքակիրթ սկսեցին թվալ: Վրացի բռնակալի դաժանության զոհ դարձած սովետական մարդկանց հավանական թիվը գերազանցում է քսան միլիոնը: Չարեի ճգնաժամային ստեղծած «Ժողովրդի թշնամի» վավերագրական ֆիլմը (ՀԲԸՄ, 1998 թ.), որը ներկայացնում է Հայաստանում ծավալված ահ ու սարսափը, ներառում է բանաստեղծի որբացած դստեր՝ Արփենիկ Չարենցի հետ կարճ հարցազրույցի մի դրվագ: Չարենցը տնային կալանքի տակ է գտնվել շուրջ մեկ տարի և գիտեր, որ իր հետևից նույնպես գալու են: Այդ սարսափելի ամիսների ընթացքում նա կեսգիշերին մոտ մի տեսակ տրանսի մեջ էր հայտնվում՝ ժամանակը կանգ էր առնում, և բոլոր ձայներն ու գույները տեղի էին տալիս հանդարտ գորշությանը, մոտավորապես այնպես, ինչպես Հարվարդի համալսարանը նոր ավարտած Ուիլյամ Ս. Բեռնոլդի «Փախուստ գորշ սենյակում»-ի դեպքում (նա գրում էր, որ ասում է այդ վիճակը, քանի որ բոլոր առումներով իրեն մերժվածի կարգավիճակում է զգում, թեև Բեռնոլդի փորձառությունը, հավանաբար, անհամեմատ մեղմ էր, քան ստալինյան Հայաստանում մերժված բանաստեղծին): Բեռնոլդը նման վիճակը մեկնաբանում էր որպես նեգատիվների առգրավում այն մութ սենյակից, որտեղ պաշտոնական իրականությունն է կերտվում²¹: Չարենցի համար զգայությունների առկախման այս ժամանակահատվածը, որը դուրս էր ժամանակից ու տարածությունից, ինչպես նաև դաժանության ու խաբեության պաշտոնական իրականությունից, ճշմարտության միակ հանգրվանն էր, իսկ ստալինյան առօրյայի հրեշավորությունը՝ «զառանցանք»: Չարենցն իր մի բանաստեղծության մեջ նկարագրում է, թե ինչպես է իր այս գորշ տրանսի վիճակում տեսել Լեոնարդո դա Վինչիին, ով նույնանման տրանսային վիճակում գտնվելով, արթնացրել է իր աշակերտ Ջովաննի Բելտրաֆֆիոյին, համբուրել նրան և ստեղծել նրա դեմքի գծանկարը՝ դրանում նշմարելով Հիսուս Քրիստոսի դիմագծերը²²:

Չարենցն սկսել է վերագտնել քրիստոնեությունը որպես հավատամք՝ սեքսուալ լիցքերով պարուրված այս տեսիլներում, ինչպես նաև Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»՝ ողբի և խոստովանանքի միջոցով սեփական ես-ի հաղթահարման ուղին առաջարկող, տասներորդ դարի հայ մեղիտացիոն միստիցիզմի շարքի ընթերցմամբ²³: Արդեն 1930 թ. հունվարի 5-ին Չարենցը Նարեկացուն է մեջբերում իր ընկերոջը՝ Ակսել Բակունցին նվիրված գործում. «Մի եղեց անպտուղ ի փոքր վաստակոյս՝ իբր ապաշան սերմանող անբերրի երկրի»²⁴: 1936 թ. դեկտեմբերի 6-8-ին Չարենցն աղոթք է գրում, որի վերնագիրն ուղղակիորեն փոխառված է Նարեկացուց:

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՒ Տեորապտիքոս

Ա

Ինչպես դարեր առաջ - վկան Նարեկացի, -
Քեզ եմ հղում ես ողբոս, ո՛վ Արարիչ,
Ես՝ մեղսավոր քերթողըս աստվածարյալ դարի, -
Ողջակիզյալ²⁵ արյունս վարակածին...
Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ, -
Ուր մեր Ա՛րևն է նոր սուզվում արյունալի,



Որպես կարմիր գլուխ գլխատվածի...
Բորբ աչքերում սակայն հավատացյալ բյուրոց
Ծովածավալ արյան ցուլք շռայլածին -
Ցուլանում է, իբրև ցուլք ցնծության մերո: -
Եվ - արեգակն է հին վերադառնում դարձյալ՝
Արևմուտքից՝ ինչպես մահվան նաշից հառնած
Ղազարեի նման - արևը ետ դառնա...

Բ

Եվ ես դիմում եմ քեզ, ով Արարիչ, դարձյալ,
Ինչպես վկան մեր հին Նարեկացին, -
Քանզի՝ կարոտ ոգու և անարյուն Հացի, -
Տեսնում եմ լոկ - Կացին արեգնացյալ: -
Իբրև մի նոր վկա վաղուց աստվածարյալ՝
Ես՝ երկրային՝ երկրին լոկ հավատացի, -
Չկամեցա, Աստված - ես՝ ինձանից բացի, ⁻²⁶
Ոչ գոյություն՝ ինձ պես գեթ կատարյալ:
Ես անսացի միայն - իմ հանճարի ծայնին: -
Շանաչեցի լոկ նյութն ինքնարարիչ, -
Եվ՝ հանճարիս ուժով՝ ենթարկեցի այն ինձ: -
Եվ - թունավոր ինքյան, որպես կարիճ՝
Ահա կանգնած եմ - զուրկ անգամ դժնի հացից, -
Եվ կախված է գլխիս - մի արեգնյալ կացին: -


Գ

Եվ ես - տխուր, ինչպես վկան Նարեկացի՝
Ե՛վ զարհուրյալ այնպես, և՛ մենակյաց՝
Զարհուրելի կյանքի հանդեպ անօգ կանգնած՝
Ես ո՛ւմ դիմեմ, ո՛վ Տեր, - արդ՝ Քեզանից բացի:
Ինչո՛ւ այսպես անօգ ես մնացի,
Եվ այնքան բորբ՝ հանկարծ անվերադարձ հանգավ, -
Անդրդվելի հավատս՝ դեպի գալի՝քն անգամ,
Եվ ինձ գերող ներկան - դարձավ անծիր:
Եվ ներբողներս՝ հղած ծագող Այգաբացին, -
Արեգակին և՛ իմ, և՛ իմ արյամբ առկայծ, -
Ողբ ու տրտունջ դարձան և փոխվեցին լացի:
Կյանքն եմ մեռած արդյոք ոգեկոչում դարձյալ, -
Երազելով, որ այն վերադառնա՝
Ղազարոսի նման - մահվան նաշից հառնած...

Դ

Քե՛զ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին՝
Հղում եմ ողբըս Քեզ՝ սրտիս խորքից, -
Ինչպես շյուղն է հղում շունչն իր Նորքից²⁷ -
Իբրև տեսիլք՝ Հեռվում հառնած Արագածին...
Ինչպես դողդոջ մի շյուղ բարակածիլ՝²⁸
Մի երգեցիկ ցողուն - օվկիանում բերքի՝
Ես դաշտերում անծի՛ր իմ հրկիզյալ Երկրի, -
Արձագանք չեմ լսում իմ երգածի...
Բայց ես գիտեմ, որ դու՝ շնչով ստեղծարար,
Ինչպես անձրև վարար անեզրական արտում, -
Ո՛չ մի մժեղ, կամ շյուղ - չես թողնելու ծարավ...
Ես - երգեցիկ եղեգ, - ինչո՛ւ այսքան տրտում

2008
11
5



Պիտի դողամ լույսիդ անեզրության հանդեպ,
Երբ երբեք չե՛ս եղել դու այդքան նեմզ...

Բանաստեղծության ավարտը՝ հավատք ի հեճուկս դավաճանված լինելու, ներկայացնում է Չարենցի բացականչությունը՝ որպես արձագանք խաչելության: Նա հակադրում է Աստծո խոսքի ոչ նյութական հացը անգութ Կացնի արյունաշաղախ նյութականությանը (այս թեմային նա անդրադառնում է նաև հետագա բանաստեղծություններում)՝ կապակցելով այս երկուսը *հաց(ին)/կացին* հանգավորմամբ: «Կարոտ ոգու» թեման առանցքային է պուշկինյան «Մարգարե» բանաստեղծության մեջ, և դրա բազում արձագանքները կարող ենք տեսնել հայկական քրիստոնեական բանաստեղծական ավանդույթներում, մասնավորապես՝ Չարենցի ստեղծագործություններում: Նա քննում է իր իսկ մեծամտությունը, նաև իր աթեիստական հասարակության հրեշավոր սնափառությունը զղջման լույսի ներքո: Չարենցն այս բանաստեղծությունը գրել է լիակատար մերժվածության օրոք, երբ ամեն գիշեր լուսադեմին սպասում էր դռան չարագույժ թակոցի: Բակունցի ծոնը կարելի է վաղ անվանել, քանի որ 1930-ին բանաստեղծի համոզմունքներում դեռևս հստակորեն զգացվում էր կոմունիստական արհամարհանքը հայ միջնադարի հոգևոր արվեստի նկատմամբ. 1933 թ. գրված՝ «Գիրք ճանապարհի» 18-րդ տան մեջ (Գովք խաղողի) նա դեռևս կարող էր այսպես գրել.

Օ՛, մռայլախոս դպիրներ սև , —
Դո՛ւ, Շնորհալի՛ , և դո՛ւ, Նարե՛կ,
Դո՛ւք — մագաղաթյա և հանճարեղ,
Դո՛ւք — զարհուրելի, ինչպես Դարեհ,
Դո՛ւք — պատան մտքի, դո՛ւք — անարև,
Որ սրտի համար դարե՛ր, դարե՛ր
Կերտել եք դագաղ — պատյան քարե,
Եվ ոգու համար — դժնյա տառեր: —

Հարկ է ընդունել, որ այս հույզերն անկեղծ են, և որ բանաստեղծն, այնուամենայնիվ, իսկապես հակասական վերաբերմունք էր դրսևորում միջնադարի ժառանգության, կրոնական հավատքի նկատմամբ: Չարենցն ուղղակիորեն անդրադառնում է իր հոգում տիրող այս պայքարին 1936թ. հոկտեմբերի 25-ին գրված բանաստեղծության մեջ.

ՎԵՐՋԻՆ ԱՐՈՒԹ

Տե՛ր իմ, - էություն իմ, - հարագատ իմ, - այսինքն՝
Ա՛յն, որ չունեմ կյանքում և չեմ ունեցել, -
Ա՛յն, որ միակն է ողջ կյանքում այս կամեցել
Լինել ինձ հետ այնպե՛ս հենց, ինչպես իր հետ ինքը, -

Չե՞ս զարմանում, Տե՛ր իմ, որ ես դիմում եմ քեզ,
Ես՝ բանաստեղծս անահ և մարտընչողս արի՝
Յուրաքանչյուր նյարդով կապված այս վեհ դարիս
Յուրաքանչյուր <.....> կրկնապատիկ հրկեզ, -

Տարօրինա՞կ է, չե՞, որ ես դիմում եմ քեզ՝ -
Աստվածային վերին ճանապարհի
Ինչ-որ՝ սրտի՛ս նման անգյուտ ու բարի,
Արարածի՝ թերևս անգո՛ր ինձ պես...

Բայց ես դիմում եմ քեզ, ինչպես հաճախ
Անապատում՝ ահեղ սամունների ժամին՝
Քարավանի տերերն արնաշաղախ -
Թողած այնքան ուշին ու խորամիտ
Փորձառությունն իրենց՝ լոկ ուղտերի դեղին
Բնազդին են կառչում - և գտնում ուղի...




Այս բանաստեղծությունը, որի ցնցող մտերմությունն ու անկեղծությունը նման են ջրից դուրս ցցված ու անասելիորեն խորը գետն անցնելու համար օգտագործվող քարերին, էմիլի Դիկենսոնին բնավ զարմանալի չէին թվա: Մերձավոր Արևելքի ուղտերի պատկերը, հավանաբար, գոյացել է Ավետիք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմի ազդեցությամբ: Այս բանաստեղծության ստեղծման ժամանակաշրջանում Չարենցն արդեն վերադարձել էր ոչ միայն նախորդ դարավերջի արևելահայ և արևմտահայ բանաստեղծների՝ Տերյանի, Իսահակյանի, Դուրյանի և Պեշիկաշյանի քնարականությանը, որը ժամանակին ծաղրածանակի էր ենթարկում, այլև քրիստոնեական հավատքի հանգրվանին: Նա նորից ավանդական հայ էր, մասն էր այն ավանդույթի, որի տիրույթում ծնվել էր²⁹:

1937 թ. հուլիսին, իր ձերբակալությունից քիչ առաջ, Չարենցը փոխանցում է իր ձեռագրերն իր ամենամոտ ընկերներին, որոնք, ըստ մի աղբյուրի, թաքցնում են դրանք՝ մետաղյա տուփի մեջ դնելով ու թաղելով տնամերձ այգում³⁰: Հուլիս ամսին գաղտնի ոստիկանությունը բանաստեղծին ձերբակալում է, իսկ հուլիսի վերջին նա մահանում է Երևանի բանտում: 1998 թ. սեպտեմբերին, երբ համաժողովի մասնակցելու նպատակով Երևանում էի, Արտաշես Էմինը՝ Չարենցին ճանաչած բանաստեղծ Գևորգ Էմինի որդին, ինձ փոխանցեց Չարենցի՝ երկար ժամանակ պահված, երբևէ չտպագրված բանաստեղծությունների, այդ թվում՝ Պուշկինի «Մարգարեի» հայերեն թարգմանության, որոշ ուղղումներով, սևագրության լուսապատճենները: Մի քանի տեղերում սա տարբերվում է այն տարբերակից, որը տպագրվել է 1935-ով թվագրված «Անտիպ և չհավաքված երկեր»³¹ ժողովածուում, և մի քանի բառեր, որ անընթեռնելի էին այդ մյուս տարբերակում, հստակ են այս մեկում, ուր առկա է նաև փոփոխված մի ամբողջ տուն: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Չարենցը շարունակում էր աշխատել թարգմանության վրա, ըստ երևույթին՝ մինչև ճակատագրական ու շատ իմաստներով խորհրդանշական 1937 թվականը՝ ջանալով գտնել Պուշկինի ստեղծագործության անորսալի երաժշտության բանալին: Համենայն դեպս, պարզ է, որ նրա համար այս ստեղծագործությունը վիթխարի նշանակություն ուներ. նա մշտապես իր իսկ հանրային դերն ընկալել է որպես ներքին հակասությունների մի դրսևորում՝ իր ներաշխարհում միատեղելով խենթի ու մարգարեի, փիլիսոփայի ու հալածյալի հատկանիշները: 1933-34 թթ. Չարենցի «Գիրք ճանապարհին»³² գրաքննադատներն ընդունեցին լավ կազմակերպված թշնամանքով: Բանաստեղծին հովանավորող Աղասի Խանջյանը, որը Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարն էր, 1936 թ. մահացել էր կասկածելի հանգամանքներում (այժմ մենք գիտենք, որ Բերիան էր նրան սպանել), և հին բոլշևիկ համարվող Չարենցը, թեև ծանր տվայտանքների ու ցավագին մտորումների գնով, ստիպված էր ընդունել, որ ստալինյան քաղաքականությունն, ըստ էության, Հեղափոխության դավաճանություն էր:

Բանաստեղծի վերաբերմունքը Ստալինի հանդեպ երբեք միանշանակ չի եղել: Բռնապետը կարող էր անսպասելիորեն իր բարեհաճությունը դրսևորել հօգուտ որևէ հալածյալ գրողի. Բուլգակովի և Պաստերնակի գործերում նրա միջամտությունների մասին պատմությունները նմանվում են հրաշապատումների կամ արևելյան բռնակալի այրողպեական քնահաճույքի իրականացման: Ստալինը մի առիթով հարցրել է Չարենցի մասին՝ տեղում նրա նկատմամբ իրականացվող հետապնդումների համատեքստում, որից հետո երևանյան թերթերը ստիպված եղան հոդված տպագրել, ի լուր աշխարհի հայտնելով, որ այս հարցում ամեն ինչ կարգին է: Չարենցը երգիծական բանաստեղծություններ էր գրում (միայն վերջերս տպագրված), որոնցում Ստալինին պատկերում էր որպես հրեշի և խեղկատակի, սակայն նաև երկարաշունչ, ստորաքարշ ներբողներ էր ձոնում Առաջնորդին (այս բառը, ռուսերենի իր համարժեք *Вождь* բառի հետ մեկտեղ, լայնորեն գործածվում էր սովետական իշխանական ամենատարբեր մակարդակներում, սակայն հիմնականում՝ Ստալինի առնչությամբ, մոտավորապես նույն ժամանակ, երբ Գերմանիայում շրջանառվում էր *Ֆյուրեր* բառը), որոնցում նշմարելի է բռնակալի հերոսացման, բայց նաև նրան մեղմելու փորձը՝ վերահաս ձերբակալության, մահվան ահի ճնշման տակ³³:

Բանաստեղծի պատրանքների փարատումը, նրա ներքին մղումները տակնուվրա էին անում ու հրկիզում նրա հոգին՝ դեմ առ դեմ կանգնեցնելով մահվան և դրանից այն կողմ ընկած աշխարհների հետ: Իր «Մարգարեում» Պուշկինի գործածած բառապաշարն ավելի մոտ է հին եկեղեցական սլավոներենին, քան այդ օրերի ռուսերենին. Չարենցն էլ, ապրելով մի ժամանակաշրջանում, երբ հայերենի և՛ բառապաշարը, և՛ ուղղագրությունը ենթարկվում էին ծայրահեղ պարզունակացման, համապատասխանեցվելով բյուրոկրատների ու մարդասպանների երևակայական պրոլետարական մակարդակին, իր բանաս-


2008
17
5



տեղծության հիմնական հատվածներում դիմում է միջնադարի դասական հայերենի արտահայտչաձևերին: Օրինակ, նա գործածում է Նարեկացու սիրած «անսալ» բառը, դասական «լուր»-ը գալիս է փոխարինելու ժամանակակից հրամայական «լսիր» ին: Բացի լեզվական արխայիկ ձևերից, ակնհայտ է վերադարձը աստվածաշնչյան նշանակալից թեմաներից մեկին: Միննույն արտահայտությունն է մշտական թե՛ հին Իսրայելի մարգարեների, թե՛ Չարենցի հոգևոր ուսուցիչ, 10-րդ դարի բանաստեղծ Սբ. Գրիգոր Նարեկացու, թե՛ 19-դարի Ռուսաստանում Պուշկինի, և թե՛ 20-րդ դարում Չարենցի ու նրա ուսուցիչ Ավետիք Իսահակյանի գործերում, և մենք այն տեսնում ենք բանաստեղծության առաջին իսկ տողում՝ «ոգու սով», ռուսերեն՝ «духовная жажда»: Մարգարե Ամոսը 8.11 հատվածում կանխատեսում է, որ Տերը սով է ուղարկելու իր խոսքի դիմաց, սակայն մարդիկ այն չեն գտնելու: Արձագանքելով նրան՝ Նարեկացին գրում է (19.2). (Երեւանյան հրատարակության տող 38), որ իր հույսն առ Աստված է, անգամ «Թէ ի լրութենէ բանի քոյ սովեցուցես»: Ավետիք Իսահակյանի հանրահայտ «Ես ձեզ ասում եմ՝ կըզա Ոգու սով...» բանաստեղծությունը³⁴, որում բանաստեղծը դատապարտում է ժամանակի նյութապաշտությունը, համահունչ լինելով աստվածաշնչյան և միջնադարյան թեմաներին, դրանց հաղորդում է լրացուցիչ, արդիական նշանակություն: Այսպիսով, Պուշկինի բանաստեղծության չարենցյան թարգմանությունը վերահաստատում է ոգու սովին անդրադարձող ամբողջական շարքը՝ ևս մեկ անգամ դառնալով Իսահակյանին և այն ավանդույթներին, որոնցից խուսափում էր տակավին անհավատ հեղափոխական լինելու օրոք: 1936 թ. հուլիս-օգոստոսին գրված «Իմ լուսաստղը» սոնետում Չարենցը կապ է հաստատում ոգու սովի և այն սովի միջև, որը կարող է հագեցվել լոկ բանաստեղծի ոգեշունչ խոսքով, բայց և շարունակում է զգալ իր՝ մարգարեի նման մերժված ու հալածյալ լինելը:

Առավոտ կանուխ բարձրացի՛ր,
Երբ դեռ նո՛ր մարմանդ լուսանում է: -
Կտեսնե՛ս լուսաստղը կապտածիր,
Որ պայծառ ցոլքով բարձրանում է: -
Ա՛խ, այդպե՛ս բարձրացավ մի օր
Աշխարհում, Չարե՛նց, քո անունը...
Բայց հետո - կլանեց անհունը
Քո լուսաստղը - ցոլուն, ոսկևոր...
Այդ ո՛չ թե Արևն էր՝ բարձրացավ -
Եվ սրբեց ոսկեգօծ քո ցոլքը
Իր շքեղ ցոլքերով պայծառ: -
Ո՛չ: - Չնչի՛ն ամպերի սև զորքը
Պաշարեց Արևի՛ց առաջ քեզ, -
Իսկ այնտեղ, ներքևում, - երգի սով էր, -
Բայց ցնծում էր պառնասն առանց քե՛զ...³⁵

Հատկանշական է նաև, որ Պուշկինի մարգարեական տեսիլքի թեման ընդհանուր առմամբ ոգեշնչող ու նշանակալից էր մեկ այլ մոդեռնիստ գրող Միխայիլ Կուզմինի համար (1872-1936). Չարենցը ռուսերենից թարգմանել է նաև նրա բանաստեղծություններից մեկի մի հատվածը: Եվ մի քանի նկատառումներով իսկապես կարևոր է, որ հենց Կուզմինն է ընտրվել: Նախ, ինչպես նշել եմ, Չարենցը բխեքսուալ էր: Նրա հոմոսեքսուալ բանաստեղծությունները երևան են գալիս նրա կյանքի վերջին շրջանում, երբ ինքը նաև առանց վարանման դառնում էր դեպի անցյալ ու աստվածապաշտություն: Քսանականների վերջին Հայաստան է այցելում Չարենցին քաջ ծանոթ Օսիպ Մանդելշտամը: Նրա կինը՝ Նադեժդան, իր հուշերում գրում է, որ ռուս բանաստեղծը Հայաստանն ընկալում էր որպես Խորհրդային Միության տարածքում գտնվող, դասական արվեստի ու քրիստոնեական միջնադարյան մշակույթի օջախ, մի վայր, որտեղ զգացվում էր Իտալիայի, գեղեցկության ու անհատի ազատության շունչը: Չարենցի միասեռական բանաստեղծություններում հնչում են այդ զգացողությունները: Կուզմինն առաջին և, որ ամենակարևորն է՝ չքողարկված միասեռական բանաստեղծն էր Ռուսաստանում³⁶: Նա նաև էսթետ էր, քաղաքական հայացքներով՝ պահպանողական, մոլի հայրենասեր և չափազանց կրոնապաշտ քրիստոնյա: Մերժելով միահեծանությանն առնչվող բոլոր գաղափարախոսությունները՝ Կուզմինը մարմնի ձիրքերն ընկալում էր որպես բնական և քրիստոնեական: Իր կրոնական




համոզմունքները զուգորդելով ուշ շրջանի անտիկ հեթանոսության փիլիսոփաների հանդեպ տածած իր ակնածանքի հետ՝ նա հաստատում էր Պլոտինոսի ուսմունքն այն մասին, որ տիեզերքը գեղեցիկ է, և սերն է այն ուժը, որ մարդուն հնարավորություն է ընձեռում ընկալել այդ սուրբ գեղեցկությունը: Կուզմինը երկու դարերի սահմանագծին մեկնել է եգիպտոս և գրել բանաստեղծությունների մի շարք՝ «Ալեքսանդրիական երգեր», որոնք ընթերցվում էին իր իսկ գրած երաժշտության ուղեկցությամբ: Կուզմինի մահվան տարում, 1936-ին, Չարենցը թարգմանել է շարքի V.5 բանաստեղծության մի մասը.

Երեք անգամ եմ ես հանդիպել նրան երես-երեսի: -
Առաջին անգամը՝ գնում էի ես պարտեզի միջով,
Ընկերներիս համար ճաշի ուղարկված,
Եվ՝ որպեսզի կրճատեմ ճանապարհը՝
Պալատի պատուհանների մոտով ուղևորվեցի ես:
Հանկարծ ես լսեցի լարերի ծայն,
Եվ քանի որ բարձրահասակ էի,
Հեշտությամբ տեսա լայն պատուհանի միջով
Նրան. -
Նա նստած էր տրտում, միայնակ,
Քաշելով բարակ մատներով լարերը քնարի,
Իսկ սպիտակ շունը
Պառկած էր ոտքերի մոտ անտրտունը,
Եվ միայն ջրացայտքի քջջոցն էր
Ձուլվում նվագին:³⁷

Բանաստեղծության մեջ մի քրիստոնյա զինվոր խորհում է գեղեցկության ու մահվան մասին՝ Նեղոսում Անտինոուսի՝ Կայսր Հադրիանի սիրեցյալ փոյուզացի երիտասարդի, խեղդվելու ազդեցության տակ. այստեղ Կուզմինը գործի է դնում քրիստոնեության և հեթանոսության, աստվածապաշտության և միասեռական սիրո ներդաշնակեցումը ստեղծագործության եզրափակիչ տողերում, ուր հրեշտակներն ազդարարում են Կեսարի հրամանը գեղանի տղայի սրբացման մասին: Որոշ ժամանակ Կուզմինը կնքում էր իր նամակները Անտինոուսին պատկերող դրոշմակնիքով, որի անունով նրան կոչում էին մտերիմները: Բանաստեղծությունը համահունչ է Չարենցի մտորումներին ու ցանկություններին, այդ իսկ պատճառով հենց այդ գործն է ընտրել թարգմանության համար: Կուզմինը նաև մի տեսիլք է նկարագրում 1890-ականների վերջի իր «Անապատում» (*В пустыне*) ստեղծագործության մեջ: «Երկար քայլում էի ամուլ անապատում, գնալով ավելի ու ավելի հեռու՝ վրաս ծանրացած մեղքերի անեծքով դրդված: Թևերս այլևս անգոր էին՝ անցյալի գրկախառնությունների բեռից, աչքերս մթնել էին՝ սիրահարների ակնապիշ հայացքներից.... Ու անծայրածիր անապատի, անսահման հեռավոր երկնքի հեռավոր կողմից մի ճաճանչափայլ լույս հայտնվեց: Այն վիթխարի էր, ինչպես ավազամորիկը, ինչպես բաբելոնյան աշտարակը: Սարսափած՝ աչքերս փակեցի: Կարծես արդեն մահացած լինեի: Ճնշող ու համր անդորրի մեջ չէի լսում սրտիս հարվածները: Երբ աչքերս բացեցի, ճաճանչափայլ Մեկը կանգնած էր իմ կողքին: Նրա ձեռքերը չէին երևում՝ զգեստի տակ էին: Նրա ճերմակ զգեստի տակից տեսանելի էր արյունոտ մի վերք՝ կարծես նիզակից կամ վարազի ժանիքից լինեի: Արժանի չէի անգամ նայելու Նրա դեմքին: Ես լոկ սողացի Նրա ոտքերի մոտ, և ծանր ու խոշոր արցունքները, անձրևի առաջին կաթիլների պես, ընկան անապատի ավազի վրա: Բերանքսիվայր ընկա այնտեղ ու արտասվում էի, արտասվում.... Թվում էր, թե երկարուծիզ տարիներ այդպես լաց եղա: Իսկ երբ վերև նայեցի՝ Նա ժպտում էր՝ բարությամբ լի: Ողորմածությամբ ձեռքերը դեպի ինձ պարզեց՝ ի նշան մեղքերիս թողության.... Նրա ժպիտն ու ճառագումը լուսավորում էր ողջ անապատը: Ամուլ տափաստանը վերափոխվել էր ոչ երկրային դրախտի, Հորդանանի պայծառ դաշտավայրերի: Ոտքի ելա գորացած, ուժերով լի: Տապալվել էի որպես ողբացող մեղսագործ: Հառնեցի որպես Աստծո զինվոր»:³⁸

Պրոֆ. Ջոն Մալմստադը, որը ժամանակին լրջորեն ուսումնասիրել է այս տեքստը, թերևս զգուշավորություն է ցուցաբերել այն իմաստով, որ կարծիք չի հայտնել Պուշկինի «Մարգարեի» անապատային տեսիլքի հնարավոր ազդեցության մասին, քանի որ համապատասխան փաստագրություն այդ մասին չկա (թեև Կուզմինը տարված էր Պուշկինով և մի քանի բանաստեղծություն է նրան ձոնել... սակայն ո՞ր ռուս բանաստեղծը դա չէր

2008
17/5




անի)³⁹։ Մալմստադը, սակայն, ընդգծում է հրեշտակի հետ բանաստեղծի հանդիպման հոմոէրոտիկ ասպեկտը և հեթանոսական ու քրիստոնեական պատկերների միտումնավոր կապակցման հնարավորությունը։ Էրոտիզմն, իհարկե, հաճախ համդես է գալիս որպես «առանցքային սնուցիչ» միստիկ փորձառությունների էներգիայի և ընկալման համար, և այս կարգի էրոտիզմը ոչ թե նսեմացնում, այլ ուժգնացնում է տեսիլքի ներքին կրոնականությունը։ Կուլզմինը պաշտպանում էր Համաննի այն տեսակետը, որ սեքսուալությունը անբաժանելի է բոլոր մարդկային և աստվածատուր փորձառություններից, և այն չպետք է դիտվի հոգևորից անջատ։ Մենք նկատել ենք նաև նրա՝ գեղեցկության վերաբերյալ Պլոտինուսի տեսակետների որոշ իմաստով ընտրանքային որդեգրումը։ «Անապատում» Կուլզմինի ինքնամաքրման պարպումը կատարվում է բուն հեկեկոցի միջոցով (կարելի է համեմատել, թերևս, վերը մեջբերված «Ալեքսանդրիական երգերում» զինվորի արտասուքով հետ), այլ ոչ՝ անդամատման, ինչպես Պուլզկինի բանաստեղծության մեջ։ Արդյունքը, սակայն, նույնն է՝ Պուլզկինի մարգարեն Կուլզմինի Աստծո զինվորն է, այսինքն՝ երկուսի հոգևոր ինքնամաքրումը և վերափոխումը տեղի են ունենում գերբնական ուժի տեսիլքի միջոցով, ինչպես նաև հոգեկան ցնցման, որը կապված է ամայի տարածքում հին մարդու մահվան և նորի ծննդյան հետ։ Ես, այնուամենայնիվ, կփորձեմ կարծիք հայտնել, որ Պուլզկինի «Մարգարեն» էր ոգեշնչել Կուլզմինին, ճիշտ այնպես, ինչպես շուրջ երկու սերունդ և երեք հեղափոխություն հետո այն գերեց Չարենցին։

Արդ, ներկայացնում եմ Չարենցի մինչ այժմ չհրապարակված «Մարգարեի»⁴⁰ թարգմանությունն ըստ նրա ձեռագրի, որը պահպանվում էր բանաստեղծ Քևորգ Էմինի արխիվներում։ Տեքստի լուսանցքներում առկա է 9-14 տողերի մի տարբերակ. ինչպես սա, այնպես էլ ավելի վաղ՝ 1935-ին գրված տարբերակը (հրատարակված 1983 թ.), ծանոթագրված են։

Մարգարե

Հոգու ծարավից, սովից հիվանդ՝
Անապատն էի դեգերում ես,
Եվ մի վեցթևյա քերովբե անդ
Ուղեհանգույցում ինձ հայտնվեց։
Մատները թեթև, նման ցիլիի,
Հպեց նա քնքուշ իմ աչքերին.
Բացվեցին աչքերն ամենատես՝
Ահաբեկ արծվի աչքերն ինչպես։
Իմ ականջներին դիպավ ապա
Եվ աղմուկ ու կանչ առան նոքա,
Եվ ես անսացի երկնի սարսուռն,
Եվ հրեշտակների թռիչքը վերին,
Եվ երթն ընդօրյա գեռունների,
Եվ հովիտներում բույսի սարսուռն։
Եվ նա շրթերիս մերձեցավ մոտ,
Եվ պոկեց նա իմ լեզուն մեղսոտ՝
Եւ ունայնախոս, եւ խաբեբա,
Եվ խայթն իմաստունն օձի եւ գեջ
Դրեց իմ սառած շրթերի մեջ
Յուր արնաշաղախ աջով ապա։ —
Եվ նա իմ կուրծքը հերձեց սրով
Եվ իմ դողդոջուն սիրտը հանեց,
Եվ ածուխն՝ այրվող հրկեզ հրով՝
Դեպի իմ հերձյալ կուրծքը հրեց։
Ին(չ)պես դի՝ այնտեղ ընկա լռին,
Եվ ձայնն աստուծո կոչեց առ ինձ.
Ելի՜ր, մարգարե՜, և տես, եւ լուր,
Ներշնչվիր կամոքն իմ անսահման,
Եվ դեգերելով աշխարհն հանուր
Խոսքով հրկիզիր սրտեր մարդկան։



Տող 1. *հիվանդ*, 1983, *տոչոր*, 2. *անապատ*, 1983, *անապատում*, 3. *անդ*, 1983, *հուր*, 5. *մատները*, 1983, *մատներով*; *միրհի*, 1983, *միրհին*, 6. 1983: *Նա հուշիկ հավեց իմ աչքերին*, 8. *աչքերն ինչպես*, 1983, *աչքերի պես*, 9. *Իմ ականջներին*, 1983, *եւ ականջներին*, 10. *առան նոքա*, 1983-՝ տպ. ձեռագրում անընթեռնելի է, 11. *սարսումն*, 1983, *շառաչին*, 14. *բույսի սարսումն*, 1983, *որդերի աճն*, 15. 1983: *Եվ իմ շրթերին մերձեցավ նա*, 16. *լեզուն մեղսոտ*, 1983, *մեղսոտ լեզուն*, 18. 1983, *բացք՝ և գեջ*, 20. *Յուր արնաշաղախ*, 1983, *իր արնոտ*, 22. *իմ դողդողում սիրտը*, 1983, *թարտացող սիրտս*, 23. *ածուխն*, 1983 ավելացնում է *սիրտս (!)* 24. *դեպի իմ հերձյալ կուրծքը*, 1983, *դեպի հերձ ու բոց կուրծքս*, 25 *լռին*, 1983 բացք. 27. *տես և լուր*, 1983, *լուր և տես*, 28. *ներշնչվիր կամոքն իմ անսահման*, 1983, *ամոքվիր կամոքն իմ հար*, 29: *աշխարհն հանուր*. 1983, *ծովեր ու բաց*, 30. *մարդկան*, 1983, *մարդկանց*, 9-14 Ձռ. տարբ. *Իմ ականջներին ապա հավեց -/ Եվ աղմուկ ու կանչ իմ մեջ լցրեց-/ Եվ ես անսացի երկնի սարսումն,/ Եվ հրեշտակների թռիչքը վերին/ Եվ չուն ընդժույա գեղունների,/ Եվ հովիտներում որդի մրսումն*:

Այն հատվածների մեծ մասում, որտեղ ձեռագիրը տարբերվում է Չարենցի անտիպ երկերի 1983 թ. հրատարակված ժողովածուի տեքստից, փոփոխությունները կատարված են հոգուտ հայերենի դասական գրությամբ՝ երբեմն իմաստի զգալի փոփոխմամբ, երբեմն՝ առանց դրա: Նկատի ունենալով Չարենցի կյանքի վերջին տարիներին նրա նկատելի հակվածությունը Նարեկի և ընդհանրապես՝ դասական հայերենի նկատմամբ, կարելի է ենթադրել, որ ձեռագիրը 1983 թ. հրատարակության մեջ տեղ գտած թարգմանության խմբագրված տարբերակն է, ոչ թե նախորդող սևագրությունը: Սույն ենթադրության լրացուցիչ հիմնավորման կարգով կարելի է նշել, որ ձեռագրի 14-րդ տողում, որն, ինչպես նշել ենք, էջի լուսանցքում է ավելացված և, հետևաբար, սկզբնական ձեռագրից ավելի ուշ է գրառված, հայտնվել է ավելի արխայիկ և աղուտ *չու* բառը՝ փոխարինելով ավելի պարզունակ երթը՝ թե՛ ձեռագրում, թե՛ 1983-ի տեքստում: Չեռագրում ներկայացված են ավելի հաջող արտահայտություններ՝ «առան նոքա» (տող 10), «ածուխն» («սիրտս»-ի փոխարեն, տող 23): Նրա ոճը տեղ-տեղ նկատելիորեն մոտեցվում է Պուշկինին՝ 28-րդ տողում *ներշնչվիր* բառը հաստատապես ավելի է համապատասխանում ռուսերենի «исполнись»-ին, քան ամոքվիրը: Մենք նաև կարող ենք նշմարել Չարենցի պայքարը՝ հաղթահարելու ռուսերենի այն արտահայտություններն ու բառերը, որոնք մարմնավորում են Պուշկինի պատկերած գերբնականորեն ազդեցիկ տեսիլքը, ինչպես նաև նրա ջանքերը՝ համարժեք պատկերի կերտման ուղղությամբ: «Прозрачанье»-ի դեպքում, որն իր հիմքում ունի 3я6- արմատը, ունենք *աճն* (1983), որը սոսկ բույսի աճին է վերաբերում, *սարսումն* (ձեռագրում), որն այնքան էլ տեղին չէ (նշանակում է՝ ցրտից դողալը), և՛ *մրսումն* (ձեռագրի տարբերակ), որը, համեմայն դեպս, *մարսել* բառի ակնարկ է պարունակում, ցույց տալով մարսողության ընթացք, էակ, որ շարժվում է, բայց այնքան դանդաղ, որ սովորական մահկանացուն ի գորու չէ նկատել այդ շարժումը:

Ինչո՞ւ է Չարենցն ավելի ուշ շրջանի տարբերակում փոխել *տոչոր* բառը, որը նախընտրում և հաճախ գործածում էր Նարեկը՝ այն փոխարինելով ավելի թույլ՝ *հիվանդ* բառով: Կարծում են, որ այդ փոփոխությունն արտացոլում է նրա ներքին երկխոսության արդյունքը, Չարենցի վերաիմաստավորումը և վերադարձն իր ավելի վաղ շրջանի երկերին, որոնք մերժելի էր համարում ստեղծագործական կյանքի միջնամասում: *Հիվանդ* բառի կարևորությունը կարելի է պարզել 1915-ին գրված մի բանաստեղծության օրինակով՝

Գիշերն ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին:
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար՝
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդում՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արևանման, արնավառ խոսքի—

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար—
խոսքեր չկային, ու արև չկար...


2008
17
5



Իր հրատարակած վերջին՝ «Գիրք ճանապարհի» հատորում, Չարենցի բանաստեղծություններից մեկը հիվանդ մարդկանց լավատեսություն ներշնչելու փորձ է, սակայն հենց ինքն իր հեղափոխական երիտասարդության տարիներին ծաղրածանակի էր ենթարկում 1915 թ. այս բանաստեղծությունը: «Սնոուդոն, կամ ավտոմատ կոմունիզմ» վերնագրված իր երգիծական կինո-ֆելիետոնում Չարենցը պատկերում է կապիտալիստ Մակդոնալդին, որը բոլշևիկներից սարսափած՝ գրում է. «*Ես հիվանդ եմ, ես խելագարվում եմ*». սա միանշանակորեն քամահրական հղում է իր իսկ նախահեղափոխական երիտասարդության օրոք գրած բանաստեղծությանը: Այժմ, հավանաբար համոզվելով, որ Աստծո բաղձանքով պայմանավորված ոգու տկարությունն ավելի նախընտրելի է, քան բարբարոսի քաջառողջությունը, նա վերականգնում է *հիվանդ* բառի «արժանապատվությունը», անգամ՝ Պուշկինի գործածած բառիմաստի փոխանցման պակաս ճշգրտության գնով:

Ինչպես արդեն նշել ենք, Չարենցն իր ուշադրությունը սևեռում էր Պուշկինի և հայ բանաստեղծների սերունդների համար չափազանց կարևոր *ոգու սովի* հասկացության վրա: Մենք տեսանք նաև, որ նրա երկերում միաձուլվում են մարմնական սիրո և հոգևոր հավատքի հասկացությունները՝ ներդաշնակ ամբողջություն կազմելով ճիշտ այնպես, ինչպես Չարենցին հիացնող Կուզմինի երկերում: Չարենցագետ Դավիթ Գասպարյանը ժամանակին հրապարակել է բանաստեղծի թղթերի մեջ պահպանված մի տարօրինակ, չթվագրված հատված⁴¹: Այն կարծես որոշակի արտահայտության մեկնաբանություն լինի, կամ հովվապետի աղոթք իր հոտի բարօրության համար, որում սիրո տենչանքը ներկայացված է հոգևոր սովի և ծարավի հարթության վրա: Անսպասելիորեն մի նոր բառով հարստացող երգեցիկ կրկնությունների միջոցով, *մութ* կամ *լուռ* բառերին անակնկալ հնչեղություն հաղորդելով և գրեթե զուգահեռաբար տանելով իր սիրո և նրա ողբերգականության ընդմիջված, աղոտ, ցավագին նկարագրության գիծը՝ Չարենցը հասնում է ծայրահեղ վշտի ընկալմանն ու հիպնոսացմանը հավասար արդյունքի: Բոլոր ծանոթագրությունները, վերծանումներն ու փակագծերում բացթողումների նշումները Գասպարյանին են:

Մութ (*անապատում*) դեգերում
(*երկու տող անընթեռնելի են*)
Ոգու
Տառապած շրջում էր
Մառ անապատում դեգերում ես
Հոգու ծարավից մղված
(*երեք տող անընթեռնելի են*)
Հոգու ծարավից մղված
Եվ նստած էի և (*ոգելով*)
Քո սիրածն էի տառապելով
Մթին սենյակում (*անընթեռնելի*) ես
Երբ վերից ընկած մի նրբավարդ
Կ (...) գլխի վրա նստած ...
Եվ քաղցից էի ու ծարավից
Մառ անապատում դեգերում ես
Ծարավից էի հոգևոր ես
Հոգևոր սովից, ծարավից կեղ
Մառ անապատում դեգերում լուռ
Գազագում էի սիրուց մղված
Մութ (*անապատում*) դեգերում ես:
Հոգով ծարավ էի, կարոտից սև
Ես սիրուց էի, կարոտից սև
Մութ անապատում դեգերում լուռ, —
Հոգու ծարավից ես ընդմիշտ
Հոգու ծարավից
Ես դավից էի, դավից մղված
Մութ անապատում դեգերում լուռ
հոգևոր սովից
ծարավից էի...




Պուշկինի պատկերած տեսիլքի ազդեցության տակ բանաստեղծի հոգում ծագած խոհերը կարելի է նշմարել նրա մի շարք այլ երկերում, որտեղ Չարենցը սահմանում է պոետական արվեստը, վերահաստատում է հայ ժողովրդի և քրիստոնեության անցած ուղին. այս խոհերը կլանում են բանաստեղծին նրա կյանքի վերջին տարիներին: Սակայն այս փոփոխությունն ամբողջովին անհնար կլիներ ըմբռնել, եթե նկատի չունենանք Չարենցի կողմից իր իսկ մարմնական ցանկությունների ընկալումը, կրքի ու հավատքի, կամ՝ հավատքի որոնումների, համատեղումը, արդի համաշխարհային գրականության մեջ սեփական տեղն ունենալու նրա հպարտ գիտակցումը և նրա չափազանց մտերիմ ու խորունկ վերաբերմունքը մասնավորապես ռուս գրականությանը, և հատկապես՝ ռուս մեծանուն բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինին, որի ուղին զարմանալիորեն նման էր Չարենցի ճակատագրին, որի կյանքի ամսաթվերն իսկ կարծես կանխորոշած լինեն այդ ճակատագիրը: Այս իմաստով, «Մարգարեի» միջոցով ինքնամաքումը, ստալինիզմի, աթեիզմի, բռնության մեղքերի դրժումն ազդարարեցին նաև նրա փոխակերպումը: Չարենցը չէր ձգտում մինչև հեղափոխական Հայաստանի՝ ազգայնամոլության, պետության հետ սերտաճած եկեղեցու և այլնի վերահաստատման: Նա ակնկալում էր միանգամայն այլ մշակույթի հաստատում, որը կտարբերվեր թե՛ միջնադարից, և թե՛ երեսնականների բռնատիրական ժամանակաշրջանից՝ մշակույթ, որի հիմնական արժեքները պիտի լինեին գեղագիտական և կրոնական, մարմնական և հոգևոր ներդաշնակությունը, նաև՝ ազատությունն ըմբռնելու ու ազատ զարգացում ապրող արվեստը: Այսպիսով, Չարենցը, ինչպես և Պուշկինը, իր երկրի մեծագույն բանաստեղծն էր և միաժամանակ՝ ճշմարիտ աշխարհաքաղաքացի, համաշխարհային գրականության քաղաքացի: Չէ՞ որ նա էլ վկա էր դարձել հայտնության և ուներ իր տեսլականը:

Ծ ա ն ո թ ա գ ռ ու թ յ ու ն ն ե Ր


- 1 Ցար Նիկոլայի չարագույժ, Սուրբ Երրորդության օրինակով կազմված կարգախոսն էր՝ «Ուղղափառություն, Ինքնակալություն և Ժողովուրդ»-ը: Այդ ժամանակաշրջանի մասին տես՝ Nicholas Riasanovsky, *Nicholas I and Official Nationality in Russia, 1825-1855* (Berkeley: University of California Press, 1969).
- 2 Այս տողն, իր արխայիկ բառապաշարով, թեթևակի փոփոխել և գործածել է սովետական բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոն իր ծավալուն «Ստեպան Ռազինի մահապատիժը» պոեմում՝ Այսպիսով, այս աներեույթ քառյակը և բանաստեղծության մեջ ներկայացվող պատկերը վաղուց էին հայտնի ռուս ընթերցողին՝ տես՝ նաև՝ John Bailey, *Pushkin: A Comparative Commentary* (Cambridge: Cambridge Univ. Press, 1971, 146).
- 3 Bailey, *Pushkin*, 145. 18-րդ դարում Աստվածաշնչյան գրաքննադատությունը, փոքրիշատե սկսվելով նշված աշխատությունից, հետագայում տարածվեց հիմնականում Գերմանիայում: Այն կարևորում էր Սուրբ Գրքի բանաստեղծական և առասպելաբանական վերլուծությունները: Այսպես՝ Մարգարեները բանաստեղծներ էին, սակայն ժամանակակից բանաստեղծը ևս Մարգարե էր դառնում: Այս հարցի մեկնաբանությունների մասին մասնավորապես Քոլրիջի երկերում տես՝ E.S. Shaffer, "Kubla Khan" and "The Fall of Jerusalem": The Mythological School in Biblical Criticism and Secular Literature, 1770-1880 (Cambridge: Cambridge Univ. Press, 1975).
- 4 Ավելի վաղ տարբերակում Պուշկինն իր այս բանաստեղծությունն սկսում էր «Великой скорбью томим» տողով (А.С. Пушкин, *Полное собрание сочинений, том 3.1: Стихотворения, сказки* (Издательство АН СССР, 1948), որտեղ տեքստը էջ 30-ում է, իսկ տարբերակները՝ 578: Այսինքն՝ նա վերաիմաստավորել է այդ տողը և ընտրել ոգու ծարավի թեման՝ որպես առավել կարևոր:
- 5 J.R. Russel, "Ezekiel and Iran," forthcoming in S. Shaked, ed., *Irano-Judaica V*, Jerusalem.
- 6 Albert de Jong, *Traditions of the Magi: Zoroastrianism in Greek and Latin Literature* (Leiden: Brill, 1997), 320, citing Dr. Peter Kingsley.
- 7 Б. Коплан, *К стихотворению "Пророк", Пушкинский сборник памяти профессора Семёна Афанасьевича Венгера* (Москва-Петроград: Госиздат, 1923) (=Пушкинист IV, ред. Н.В. Яковлев, 1922), 327-8, քննադատում է Լերմոնին այն թեզի համար, ըստ որի աստվածաշնչյան տեքստերի ազդեցությունը բանաստեղծի վրա աննշան էր: Կոպլանը նշում է, որ Եսայյու 6-ից օգտագործված է բավականին մեծ հատված:

2008


17/5



- 8 *Man in the Landscape: A Historic View of the Esthetics of Nature*, cited by Jon Krakauer, *Into the Wild* (New York: Anchor Books, 1997), 25.
- 9 "The Road Not Taken": «Դեղին թավուտում ճանապարհը բաժանվեց երկու մասի», և այլն: Հեղինակն ընտրում է այն ուղին, որն, ասես, «անցորդի կարիք էր զգում», բայց հետո խորհում է, որ սխալվել է: Չայրացած բանաստեղծը կարդում է իր երկը մեծահարուստ բոստոնցի նախագահի երդմնակալության ժամանակ. այս երկուսի նորանգլիական կեղծ ու պարզունակ միատիկան գրողին թվում է միանգամայն զուրկ որևէ հմայքից կամ ճաշակից, բայց, դրա հետ մեկտեղ, Իոսիֆ Բրոդսկին բարձր էր գնահատում Ֆրոսթին, այնպես որ՝ երկի կա մի բան, որ ես լավ չեմ հասկանում:
- 10 Մեքսերումը՝ Georgia Flaherty, *Shamanism and the Eighteenth Century* (Princeton: Princeton University Press, 1992), 47.
- 11 Նույն տեղում, ch. 6.
- 12 Տե՛ս Ֆրեյդենբերգի և Կաբոյի ուսումնասիրությունները, մեքսերված Ե.Վ. Ռևոնենկովայի կողմից՝ "Shamanism and Poetry," M. Hoppal and O.J. von Sadovszky (eds.), *Shamanism: Past and Present*, vol. 2 (Budapest: Ethnographic Institute of the Hungarian Academy of Sciences, 1989), 395.
- 13 (լատ.) Գրքերն ունեն իրենց ճակատագիրը (ծնթ. թարգմ.):
- 14 "The Dream of Coleridge," in Jorge Luis Borges, *Other Inquisitions 1937-1952* (New York: Simon & Schuster, 1965), 14-17.
- 15 Մեքսերումը՝ ԵԺ VI: 483, Էդուարդ Ջրբաշյան, *Պուշկինը և հայ բանաստեղծները* (Երևան, ԳԱ, 1999 թ.), 172.
- 16 Ջրբաշյան, *Պուշկինը*, 150-1.
- 17 Դավիթ Գասպարյան, *Եղիշե Չարենցը և 1920-ական թվականների սովետահայ պոեզիան* (Երևան, ԳԱ 1983), 352-4. Պոն, Վերլենը, Բողերը և այլոք հայտնվում են նրա բանաստեղծություններում սկսած քսանականների վերջից:
- 18 Հարցազրույց է տվել *Խորհրդային Հայաստան օրաթերթին* 1936 թ.-ի հունիսի 12-ին և *Ha pyбeжe Bocmoкa*-ին հունիսի 21-ին գրքերի, ֆիլմերի, պիեսների, պարզևատրումների, նույնիսկ՝ Հայաստանի Ստեփանավան քաղաքից ոչ հեռու գտնվող ռուսական Գյառզառ գյուղը, որտեղ կանգ էր առել Պուշկինը, «Պուշկինո» վերանվանելու մասին: Տե՛ս՝ Չարենց, ԵԺ, հատ. VI, 358-64, ժանոթագրություններ 698-700-ում, որտեղ նշվում է, որ «2-ի վերջին տարիների սևագրություններում պահպանվել են թարգմանական էջեր Պուշկինի բանաստեղծություններից»: 1936 թ. կեսերից հետո, տեղեկանում ենք նույն ժանոթագրություններից, «արդեն 2-ը չի մասնակցում» բոլոր այդ միջոցառումներին: 1967 թ. լույս տեսած այդ ժողովածուի խմբագրական կոլեգիան, իհարկե, չէր կարող նշել, որ բանաստեղծին ուղղակի հեռացրել էին դրանից: Հայաստանի Կոմկուսի կենտրոնական կոմիտեն 1974-ին մի գրքույկ հրատարակեց՝ «Պուշկինին՝ հայ բանաստեղծներից» վերնագրով, որում, Ավետիք Իսահակյանի 1949 թ. գրած հիացական նախաբանից հետո, տպագրված էին քսանյոթ հայ բանաստեղծների երկեր՝ նվիրված Պուշկինին: Չարենցի բանաստեղծությունն առաջինն էր (*Իմ սենյակում երեկ նստած/կարդում էի Ալեքսանդրին...*): Բանաստեղծություններից տասնհինգը գրվել էին 1934-ի և 1938-ի միջև ընկած ժամանակահատվածում, ճնշող մեծամասնությունը՝ 1937 թ., այսինքն՝ ռուս մեծամուն բանաստեղծի մահվան հարյուրամյակի տարում: Այդ նույն տարում իր գրած «Պոետն ու արքան» բանաստեղծության մեջ Հովհաննես Շիրազն անդրադառնում է Սիխայ-լովսկոյեից Պուշկինի ճանապարհ ընկնելու դեպքին, սակայն չի հիշատակում «Մարգարեն»: «Ճանապարհ դեպի Երզրում» (1949) բանաստեղծության մեջ Գևորգ Էմինը Պուշկինի ուղևորության փաստը գործածում է որպես փոխաբերություն՝ Արևմտյան Հայաստանի բաղձալի ազատագրման հետ այն կապելով:
- 19 Bayley, *Pushkin*, 24
- 20 Սուրեն Աղաբաբյան, Ե. Չարենցի «Մահվան տեսիլը», *Սովետական Հայաստան* ամսագիր (Երևան), 8, 1982: 24-5, մեքսերում է բանաստեղծ Պարույր Սևակի բարձր գնահատականը, ըստ որի այս բանաստեղծությունը հազվագյուտ հանճարի դրսևորում է, առկայում է չափազանց ազդեցիկ աստվածաշնչյան ոգով, և որոշ իմաստներով մոտ է միատիկ Նարեկացուն:
- 21 Conrad Knickerbocker, interview with W.S. Burroughs, St. Louis, Mo., 1965, in G. Plimpton (ed.), *Beat Writers at Work: The Paris Review* (New York: The Modern Library, 1999), 16.
- 22 Չարենցի մարգարեական անուրջների մասին մեկնաբանությունները տե՛ս իմ հետևյալ հոդվածում՝ *The Armenian Counterculture That Never Was: Reflections on Yeghishe Charents*. Հատկանշական է, որ Չարենցը Բելտրաֆֆիոյին 16-ամյա է կոչում ոչ թե արդի արևելահայերենով, այլ դասական *վեշտամամյա* ձևով, և այն շեշտում է՝ բանաստեղծության ամենավերջին բառը դարձնելով: Այս խզումը ժամանակակից լեզվական միջոցներից համառող արխաիզմի դրսևորում չէ, այլ՝ Հայաստանի քրիստոնեական անցյալի վերահաստատման ու ընդունման վկայություն, ընդ որում այն միախլուսվում է Չարենցի բիսեքսուալության նույնքան խիզախ ու պայմանականություններից զուրկ դրսևորման հետ: Անտիպ արխիվային նյութերի



- մեջ պահպանված մի բանաստեղծության մեջ նա գովերգում է երիտասարդ տղայի սերը և կրկին գործածում *վեշտասնամյա* բառը:
- 23 1998 թ. սեպտեմբերին հնարավորություն ստացա տեսնելու *Նարեկի* Չարենցին պատկանող օրինակը Երևանում գտնվող նրա տուն-թանգարանում: Փոքրիկ գրքույկ էր, այնքան շատ թերթած, որ էջերն արդեն մաշվել էին, իսկ կազմը՝ թուլացել: Միանգամայն պարզ էր, որ բանաստեղծն աղոթքների գիրքն ընթերցում էր մշտապես ու լրջորեն:
- 24 Գրիգոր Նարեկացի, *Նարեկ: Մատենան Ողբերգութեան*, Բուենոս Այրես: *Արարատ* Հրատարակչություն, 1948), գլ. 2, 5; CW IV: 114.
- 25 *Ողջակիզյալ*. այս պատկերն ուղղակի փոխառություն է *Նարեկի* առաջին գլխից, որտեղ սուրբն ինքն իրեն և իր աղոթքներն առաջարկում է որպես զոհաբերություն, այն հույսով, որ դրանք որպես խուկն կընդունվեն, երբ ողբի հուրն իրեն կլանի, և չեն մերժվի իր մեղքերի այրվող ճարպի գարշահոտի պատճառով:
- 26 Բացահայտ հղում Առաջին Պատվիրանին:
- 27 Նորքը, Երևանի արվարձան լինելով, նաև հանդես է գալիս որպես 1933 թ. գրված մի բանաստեղծության վերնագիր («Գիրք ճանապարհի» ժողովածու): «Նորքը» նվիրվել է քնարական բանաստեղծ Վահան Տերյանին, որի բանաստեղծական ոճը Չարենցն իր հեղափոխական երիտասարդության օրոք ծաղրի էր ենթարկում, սակայն հետագայում համակվեց Տերյանի հանդեպ մեծագույն նվիրումով ու ակնածանքով:
- 28 Շյուրը կարող է սրինգ կամ շվի լինել (պարս. *մեյ*) Ջալալ ալ-Ռիմ Ռումիի Մատնավիի ձեռքում, որն իր նվագով պատմում է իր Պաշտելի Աստծուց բաժանվելու ցավի մասին, կամ էլ՝ այն եղեգը, որով բոց էր ելնում և ծնվեց հայ վիշապաբաղ, Ջերակլեսյան աստված Վահագնը, կարող է և լինել այս ամենը միաժամանակ:
- 29 Կարելի է չափից շատ տարվել բանաստեղծի հակակոմունիստական հատկանիշների վերհանմամբ: Սակայն հարկ է նրան ընկալել այնպես, ինչպես կար՝ որևէ առանձին գաղափարախոսական ուղղությանը նրան չդատապարտելով: Ըստ իս, վերջերս բանաստեղծի դստեր՝ Արփենիկ Չարենցի հրատարակած գրքույկում (*Եղիշե Չարենցի աղոթքները*, Երևան: «Անտարես», 1999, 76 էջ) նրան սրբացնելու փորձ է արվում, որպես աղոթք ներկայացնելով այն բանաստեղծությունները, որոնք չեն եղել այդպիսին. բանաստեղծը հավատացյալ է ներկայացվում գրեթե իր կյանքի սկզբից, իսկ նրա ուշ շրջանի զղջումը համարվում է հավատքի մեջ ապարած կյանքի եզրափակիչ փուլ, այլ ոչ՝ վերագնահատման արդյունք, որը հաճախ հանգեցնում է նման զղջման: Հետաքրքրական է, որ հեղինակը քննում է քրիստոնյա հավատքի՝ հոգևոր վերափոխումն ու մարդ արարածի մեղավորությունը, անգամ հավատափոխության ու Աստծուն վերագտնելու հնարավորությունն ընդունող դիրքորոշումները, և ներածում դրանք ճիշտ ու սխալի մասին մարքսիստական աշխարհայացքի անողորմ պատկերացումների դաշտ: Արդյունքում ստանում ենք մի անիրական, երկչափ, անբիծ Չարենց, որը հետևողականորեն անցնում է իր կյանքի ճանապարհին աստվածապաշտ մանուկից մինչև իր վերահաս մահը խաղաղությամբ ընդունող հասուն անհատ, ինչպես կանգներ խորհրդային իշխանության նախանշած «հոկտեմբերիկ – կոմերիտական – կուսակցական» ուղին... Միանգամայն հասկանալի է բանաստեղծների մերձավորների կողմից նրանց հետմահու սրբացման մղումը. Ռեմբոյի մայրը պաղատում էր Վերլենին ոչնչացնել որդու բանաստեղծությունները, Ֆեդերիկո Գարսիա Լորկայի ընտանիքի անդամները պահանջում էին, որ նրան նվիրված հանդիսությունների ժամանակ և հրապարակումներում չհիշատակվի մեծ բանաստեղծի բիսեքսուալությունը՝ մի պահանջ, որը, բարեբախտաբար, Իսպանիայի ժողովուրդն անտեսեց: Տվյալ պարագայում, կարելի է միայն համաձայնել Դայանա Տեր-Հովհաննիսյանի և Մարգարետ Մարկոսյանի՝ Եղիշե Չարենցի ընտիր երկերի ժողովածուի նախաբանի վերջին պարբերություններում արտահայտված հետևյալ մտքի հետ՝ եթե Չարենցն արևմտյան բանաստեղծ լիներ, նրա թուլություններն ու ըմբոստ պահվածքը կենթարկվեր իրական ուսումնասիրության, սակայն քանի որ այդպես չէր՝ բանաստեղծին շնչահեղձ արած ու կործանած խորհրդային ամբողջատիրական համակարգը փոխարինվել է ազգայնական ու կրոնական շովինիզմի գաղափարախոսությամբ, որն իր ուրույն ձևով է շնչահեղձ անում ու կործանում բանաստեղծին:
- 30 Այդ մտերիմներից ամենահայտնին նկարչուհի Ռեզինա Ղազարյանն էր: Տես՝ նրա «Հուշեր Չարենցի մասին»-ը Դավիթ Գասպարյանի «Չարենցի հետ. հուշեր» գրքում (Երևան, «Նաիրի», 1997 թ.), 339-374:
- 31 Ե. Չարենց «Անտիպ և չհավաքված երկեր», Երևան, 1983թ., 424-5:
- 32 Գրքում տեղ են գտել Պուշկինի մի քանի բանաստեղծությունների թարգմանություններ, արված 1933 թ. մայիսին, այդ թվում՝ «Ապրում էր մի աղքատ ասպետ...» և «Որթատունկի աստվածն ուրախ...») բանաստեղծությունները:
- 33 Տես Դավիթ Գասպարյան, «Ողբերգական Չարենցը. կյանքի և ստեղծագործության) նորահայտ էջեր» (Երևան, «Նաիրի», 1990 թ.), և նույն գիտնականի լրացուցիչ նյութերը՝ «Նորահայտ էջեր» (Երևան, 1996 թ.): Գերմանական *Ֆյուրերականության* և խորհրդային *առաջնորդի* իմաստիտուտների համաժամանակ ձևավորումը հստակորեն վկայում են այդ երկու համակարգերի բազմաթիվ սմանությունների մասին: Երբեմն նույնիսկ այդ երկուսի գեղանկարչությունն էր համահունչ, տես Իգոր Գոլոմշտոկի *Totalitarian Art in the Soviet Union, the Third*



- Reich, *Fascist Italy and the People's Republic of China* (New York: Icon Editions, 1990) նախաբանը: «Ջառանգանք» հասկացությանն անդրադառնալով, որն արտահայտում էր Չարենցի առօրյա կյանքը երեսնականներին, տես՝ Sheila Fitzpatrick, *Every day Stalinism. Ordinary Life in Extraordinary Times: Soviet Russia in the 1930s* (New York: Oxford University Press, 1999).
- 34 Այս բանաստեղծությունը հաճախ տեղ է գտնում ամենատարբեր ժողովածուներում, տես՝ Ավետիք Իսահակյան, «Երկեր» (Երևան, Հայպետհրատ, 1955 թ.), 39:
- 35 Ե. Չարենց, *Հատընտիր* (Երևան: Սովետական գրող, 1987), 453:
- 36 Կուզմինի «Крылья» վեպը մեկ դար առաջ նախանշում է Ժիդի "Corydon"-ը, նա շատ ավելի բացախոս է, քան Պրուստը: Բուլշևիկների օրոք միասնականությունն ապաքրեականացվեց, սակայն ստալինյան բիրտ վարչակարգն այն կրկին օրենքից դուրս հայտարարեց 1934 թ. ընդունված օրենքով, որով բանտարկության դատապարտվեց հայ հայնրահայտ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը 1980-ականների սկզբին: Կուզմինն անթաքույց ապրում էր իր սիրեցյալի հետ և մահացել է բնական մահով՝ Երեսնականների համար սա ճակատագրի աննախադեպ բարեհաճության նշան էր: Միասնականությունն այժմ օրենքով չի հետապնդվում ո՛չ Ռուսաստանի Դաշնությունում, ո՛չ Հայաստանի Հանրապետությունում:
- 37 Ե. Չարենց «Ամտիպ և չհավաքված երկեր», Երևան, 1983թ., 407:
- 38 Տես՝ John E. Malmstad and Nicolai Bogomolov, *Mikhail Kuzmin: A Life in Art* (Cambridge, MA: Harvard University Press, 1999), 4.
- 39 Պրոֆ. Մալմստադն ինձ հայտնել է, որ իրականում ինքը ևս շատ է խորհել Պուշկինի և Կուզմինի տեսիլքների հնարավոր կապի մասին, սակայն ի վերջո որոշում է ընդունել՝ չհամեմատել նրանց: Այդուհանդերձ, ցանկացած ռուս մտավորական այդ կապը կարող է տեսնել՝ այն ակնհայտ է:
- 40 Չարենցը գուցե ևս այդ մասին չգիտեր, բայց հայերենում *մարգարե* բառը, որը որպես կանոն գործածվում է այնպես, ինչպես հունարենում prophetes-ը և ռուսերենում prorok-ը, իր ծագումնաբանությամբ փառահեղորեն համապատասխանում է բանաստեղծության գործառույթին. այն առաջացել է հին պարսկերենի *manthra-karya* (մանտրաների ստեղծող) հասկացությունից, այնպիսին՝ բանաստեղծ, որն օժտված է հոգեկան ուժ և մոգական, երկրային ազդեցություն ունեցող բառեր ստեղծելու գերբնական կարողությամբ: Այդպիսով, մարգարեն խոսում է ոչ միայն Աստծո անունից, այլև դա անում է, բառի բուն իմաստով, արարչական, հատուկ ստեղծված խոսքի միջոցով: Հրեական և քրիստոնեական մշակույթները խարսխված են միևնույն կուռ համոզմունքի վրա, որ Աստված արարել է աշխարհը *Logos*-ի միջոցով, անգամ Թալմուդն էլ հաստատում է, որ ճշմարիտներն ի զորու կլինեն սուրբ տառերի օգտագործմամբ նոր աշխարհներ արարել, եթե չլինեն մարդկանց մեղավորության գործոնը:
- 41 «Նորահայտ էջեր», 297:





Միսաֆ Խոստիկյան

Էլի

Սիրն Paradram

(Սկիզբը «Իմնագիր» 3-ում)

«Հողը ի սկզբանե չունեւ, իսկ երկնքի բեկորները վաղուց արդեն ի վիճակի չեն տալիս չափը: Պարսֆը դարձել է անսահմանելի չափ: Միջուկային սղառնալիքը անսահմանափակ տառասխանասվության է կոչում»:



Ծ ա ն օ թ ա գ ռ ու թ ի լ ն ն ե Ր

1. Դասական ժողովրդագրության մեկը են՝ Ժան-Լյուկ Նանսիի "Бытие единично множественное" գրքի "Мара со" գլխում:



2008
#5



Սերգեյ Դանիելյան

Չէի ցանկանա, որ այս պիեսը ընկալվեր որպես ինքնակենսագրություն, որովհետև կարծում եմ, որ ոչ միայն իմ կենսագրությունը կարող էր լինել: Բոլոր կերպարները և կոնկրետ են, և հավաքական: Կարծում եմ՝ չկա որևէ հայ ընտանիք, որին հարազատ չէ այն, ինչի մասին գրված է: Եթե, իհարկե, նա ապրել է այն ժամանակ, երբ ձեռք ահավոր կեղտոտ ապակյա շշերի մեջ էին վաճառում, դրսում տեղադրված հեռախոսի ապարատները աշխատում էին երկու և տասը կոպեկանոցներով, և տրոլեյբուսի շտանգաները միշտ գցում էին: Ի դեպ, դա արդեն գուտ երևանյան առանձնահատկություն էր: Անծայրածիր երկրի բոլոր մեծ քաղաքներում կային համ տասը կոպեկանոցներով աշխատող երկու կոպեկանոց հեռախոսներ, համ էլ՝ ձեռքի կեղտոտ շշեր, բայց տրոլեյբուսի շտանգաները միայն երևանում էր գցում... Երևի Վովա փղի նախն էր:

Սերոժիկ

Ինքնակենսագրական դիմապատկեր՝ մի գործողությամբ
68-70 ական թվականներ

Գործող անձինք

ՆԵԼԼԻ	Սերոժիկի մայրը
ԴԱՆԻԵԼ	Սերոժիկի հայրը
ԼԻԶԱ	Սերոժիկի քույր՝ մոր կողմից
ՋԱՅԿ	Սերոժիկի տղա՝ մոր կողմից
ՎԱՐԴԱՆՈՒՇ	Սերոժիկի քույր՝ հոր կողմից
ՄԱՐՈ	Սերոժիկի հորաքույրը
ՋԱՐՈՒԹ	Սերոժիկի հոր տղա
ԼՈՒՅՍԻ ՄԱՐԴ	

ՏԵՍԱՐԱՆ 1

Դուրսի սխուր երաժշտություն:

Թույլ լուսավորված դասարկ բեմում երևում է երեխայի մահճակալ՝ սև մեռափետ սավա-
նով ծածկված: Մոմեր: Մահճակալի կողքին մի ֆանի ծաղկետուսակ: Ամեն ինչ լուրջ է հիշեց-
նի հոգեհանգստի արարողություն: Մահճակալի կողքին մտած են դիմապատկերներ և կա-
մաք գրություն են:


ԼԻԶԱ - Դու ես մեղավոր, որ Սերոժիկը մեռավ: Ասում էի, չէ՞: Երեխին եղբան մառոժնի
մի առ: Թող ա, հո դուռնանդ չի:

ՋԱՅԿ (բարձր)- Ինչ ախմախ...

ԼԻԶԱ - Կամաց: Երեխեն:

ՋԱՅԿ (կամաց)- Ինչ ախմախ կին դուրս եկար, Լիզիկ: Երեխան մառոժնից չմեռավ, այլ
բալկոնից վեր ընկավ, բալկոնից: Ուզում ես՝ Նելիկին հարցրու: Նելիկ ջան, ճիշտ չե՞մ
ասում:

ՆԵԼԼԻ - Պառա, перестань! Եթե даже բալկոնից չընկներ, մեկ ա, սկվազնյակներից



կուգա, Սերոժիկ տղա:

ՀԱՅԿ - Լիզիկ, էրեխեն ընկավ՝ խայսառակ էղանք աշխարհով մեկ:

ԼԻԶԱ - Божье наказание!!! Ես էլ առաջին դեղին չի:

ՆԵԼԼԻ - Ընկավ, որովհետև հեր չունի:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Զա ընչի՞ չունի: Թաղեմ քեզ: Բեմուրազ:

ԴԱՆԻԵԼ - Հերը ի՞նչ անի: Հերը ի՞նչ անի, եթե էրեխեն իդիոտի մեկն ա: Իդիոտի մեկը, իդիոտ:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Չէ, չէ, չէ, ընգավ, որովհետև տուրուկի հետ խաղ կեներ: Պուրուկի՞:

Պուրուկիի՞...

(Ընդհանուր աղմուկ, մթություն: Ռադիոյի ձայն, երաժշտություն, յիշմունքական լուսաբաց):

ՏԵՍԱՐԱՆ 2

(Բեմը դասարկ է և լուսավորված):

ՆԵԼԼԻ - Սերոժիկ, բալիկ ջան, просыпайся, գոգլիդ տասրաս ա: Ձեռքերդ լվա, արի կեր: Կուռանաս: Դանել, էդ անես ռադիոյի ձայնն էլ իջացրու, մերվեր չունեն:

ՏԵՍԱՐԱՆ 3

(Վարդանուշը դանդաղ անցնում է բեմով):

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Սերոժիկ... էդ ի՞նչ կենեիր զուկարանը: Չի՞հիկ: Էդքան երգա՞ր: Հըր օր չի՞հիկ կենեիր, երեսներդ ընչի՞ է էդդես կարմրած:

ՄԱՐՈ - Էդ էրեխով մարդ չի զբաղվե: Մերը սաղա հեռախոսով կխոսի: Էդոր համար էլ էրեխեն անդերի ձեռքը կրակն է ընգե:

ՏԵՍԱՐԱՆ 4

(Հեռախոսազանգ: Նեյլին մտնում է բեմ, դժգոհ քղավում):

ՆԵԼԼԻ - Էդ անես տասուհանը որ ես չփակեմ, մարդ չի փակի (Շարունակում է հոգնած ու քանջված ինտոնացիայով, կարծես թե նոր իմրը չէր գոռում):

Այո, Ժորժեսա ջան, դու է՛ս, չճանաչեցի, представляеш, Ջուլիկը բաժանվեց: Մաման sraգեդիայի մեջ ա: Ее она всегда больше любила, чем меня. Հա, բա ես կմոռանամ:

Ասում ա՝ եթե Նեյլիս բաժանվե, մի ռոդե էլ չէի մսածի: Она не пропадет! А видите ли, Լյոկան Ջուլիկից գնացել ա, մաման չի հանգստանում: Սաղ օրը դրա մասին ա խոսում:

Ջուլիկը արդեն հանգիստ ա, а она все успокоиться не может!(Դադար): Ճի՞շտ ա, դրա համար էլ ճնշումը 200 ա! Ամբողջ օրը մսածում ա:

Օ՛ֆ, չգիտեմ, փոքր ժամանակ էլ տե՛նց, все самое лучшее Ջուլիկին, а мне ничего! Է, էստե՛նց ես էլ որո՞քեսուր կլինեի, я такая способная была, просто անսերի դես եմ մեծացել: Հեսս զբաղվող չկար: Համ էլ, Ժորժեսա ջան, եթե ես էլ ամբողջ օրը կանֆերենցիաների մեջ լինեի, իմ մարդն էլ ինձնից կգնար: Չմայած՝ ուր ա ինձ էդքան բախտ: Որ գնա, մի հաս ախ էլ չեմ փափ: Յա եղած, յա չեղած: Бревно на диване!

ՏԵՍԱՐԱՆ 5


(Լիզան ֆայլում է բեմով՝ ձեռքերը թափ տալով):

ԼԻԶԱ - Վայ գյոռքագյոռ լինես դու, Լյոկա: Գյոռ-բա-գյոռ, որ էդ էրեխեի վիզը ծուռ թողեցիր:

(Հեռախոսը զանգում է):

Այո՞: Հա, Սոֆիկ ջան, դու է՛ս, չճանաչեցի, ի՞նչ դիտի անեմ, էլի նույնը: Մսածում եմ՝ ոնց էդ սվորչը գնաց Ջուլիկից: А ты видела эту корову, слушай, она как жаба! Как жаба, правда я никогда ее не видела, բայց ինձ Մոսյան Սաթիկն ա ասել:

Լսիր, էդ սաղ հե՛շ: К нам кто-то звонит и не разговаривает. Наверное, эта сука опять...



(Լսվում է Հայկի ձայնը՝ Լիզա):

Դե լավ, Հայկը եկավ: Ես գնացի: Յը, էկա:

ՀԱՅԿ - ԼԻԻԻԻԶԶԶԶԻԻԻԿԿԿ...

ԼԻԶԱ - Յըըը...

ՀԱՅԿ - Լիզիկ, ես գնացի բաղնիս:

ԼԻԶԱ - Այ տղա, գնա՛յր մարդավարի Զուլիկի կամ Նելիկենց սանը լողանայիր: Մի որ բաղնիսում ոտդ սառնո՛ւմ վրա տո՛ւ ա՛ սալու, ընկնես ջարդո՛ւթուրդ լինես, երեխերը խայտաճակ լինեն աշխարհով մեկ:

(Հայկը սանրվում է):

Հա, էդ փոխաններդ էլ որ բերես, թող ես կլվամ: Թե չէ դնում ես գազին ու ժամերով եռացնում ես, եռացնում ես, եռացնում ես: Անցյալ անգամ մասկիներդ ճաշի ամանի մեջ էիր եռացրել: Նելիկի կաստրուկեն ա: Որ իմացել ա է՛...

ՀԱՅԿ - Դե լավ, Լիզիկ, ես գնացի: Բաղնիսից հետո գնալու եմ Պարսեգովենց տուն:

ԼԻԶԱ - Լսի՛ր, էդքան տարի ընենց էլ չհասկացա՛՝ էդ Պարսեգովը ո՞վ ա, որ մի՛տս բաղնիսից հետո գնում ես իրանց տուն:

ՀԱՅԿ - Դե ասել եմ էլի, ֆրոնսիս ընկերն ա, ֆրոնսիս:

ԼԻԶԱ - Ըըըըըը: Բախսավար գլխիդ: Տարիփոց ամաչիր, տարիփոց: Я, что дура что ли?!

(Հեռախոսը զանգում է, Լիզան վերցնում է լսափոքը):

ԼԻԶԱ - Ալո (դադար): Ալո: Դե խոսա է՛, խոսա: Ջանգում ես՝ չես խոսում, հա՞: Պոռնիկի մեկը, դոռնիկ: Սուկա (դադար):

Վայ, Ռոզիկ ջան, դո՛ւ ես: Չճանաչեցի: Լրիվ ցնդել եմ: Ես էլ գիտեի, թե էդ աляха-ն ա զանգում: (Լսում է): Ռոզիկ ջան, Слушай, интересно, я увижу их когданибудь в двоём в одном гробы! Վայ, Ռոզիկ ջան, երանի էն օրը, որ դրանց երկուսին էլ սիրուն հագած-կաղած մի դագաղի մեջ կեսնեն: Միասին մի փոսի մեջ դնեն, մի փոսի:

ՏԵՍԱՐԱՆ 6

(Լսվում է Վարդանուծի ձայնը, դանդաղ մտնում է բեմ):

ՎԱՐԴԱՆՈՒԾ - Շոկ է, շոկ, ըստեղ օր էսքան շոկ է, Երևան հրմի մարդ կեփի: Ան, ջուրն էլ է անդերես կերթա (մտնում է): Սերոժի՛կ: Արի, արի, մադաղ ֆեզի, արի ֆուս մսի՛՝ խոռատա էնեն:

(Դադար): Փախնեիմ գը: Չորս կամ հինգ տարեգան էի: Ես, Հրուհը, ախրերներս: Մորս ու հորս ասկյարները սքանել էին: Ան էտդես դաշտով փախնեիմ գը, մեզ էլ տեսիմ մի լեռ: Արդեն հողել էր: Սիրուն հագած-կաթած: Անդերս էլ կոբել էին, դեղ էին բերանը: Յըմի մոր կիսակնամ, թե ըդիկ ինչ էր: Քեռուս լեռն էլ գդամ գեղի մեճը: Կուզեիմ գեղից դուրս ֆաշեն, մադները ան ըստես դուրս կուզային: Յըբը՛, Սերոժիկ ջան, մադաղ ֆեզի:

Հեղո ընգամ որքանոց, ամերկանցոնց մոտ: Հորս ամուսնը Աբգար էր: Ազգանունս բիլա չէի հիշի: Անունս դիմ Աբգարյան Վարդանուծ Աբգարի: Ամերկերեն էնդեղ սորվա խոսել: Քլոզ դը դոզ, օփըն դը դոզ: Հավ ար յու, յանի՛՝ ինչխես: Ամերկացի լավ մարդ եմ: Թե ընչի՞ «Վրեմյան» կըսես օր վաղն եմ: Չեմ հասկնա: Ընոն օր չեղնեին՝ մենք չէինք եղնի: Քլոզ դը դոզ, օփըն դը դոզ: Յըբը, Սերոժիկ ջան, մադաղ ֆեզի:

(Դադար, մազերը սանրելով): Է՛, լիզուս չորցել է, ինչխ օր շները ֆախն բերանս:

Հեղո էլ, ըոժը, ընգամ Լեննագան: Տեֆուխը կաշխադեի: Մե անգամ դռններիս կրասկա էի ֆսել, գնացել էի գործի: Ջահել էի: Պարսիագան ժողով ըրին, ընձի ըսին՝ մեսչանկա: Յըբը:

Ջա, այ տղա, մերդ էդ ինչխ օր փետրով կֆսե, դուխլամիս կեղնի: Մի բանըմ էլ օր կըսես, իրեն դադեղադ կուդա: Անդերը կդադրես: Առաջ ըդոնց կըսեին՝ բոզ է, հըմի կըսեն՝ ներվային է: Յըբը Լիզա՛ն, Լիզա՛ն՝ էն մեզ էլ մամդ, էն օր ռսերեն կխոսի: Յանի իմը կուլդուրագան է: Մենք էլ ամերկերեն կխոսինք: Քլոզ դը դոզ, օփըն դը դոզ:

Ջա վայ, այ տղա Սերոժիկ, էդ ընչի՞ գուլաս: Մադաղ ֆեզի: Վայ թե երեխեն թուրքերի խոստեփից վախցավ: Արի, արի ֆոռանամ ես: Մե հողըմ ֆաշեն:


(Հոտ է ֆաշում երեխայից):

Ուխա՛յ: Բայց էդ Լոկան շատ գոթվեան մարդ էր: Էդ ինչըխ էդ երեխեփի վիզը ծուռ թողեց: Մի հավգիսը մի բերան կենե: Կուբին դնեն Լոկային: Ինչըխ թողեց գնաց:

(Դադար):

Լավ օր Դանելս չի երթա: Յըբ իմ տղիս ջանը ֆար է, օր էդ էրևանցոց կդիմանա: Էդ լիբը

2008
17
5



սաղա Դանելիս վրա կրոռա:

(*Լացում է*):

Մառլեն ջա՛ն, երբ որդի գամ փվդդ դառնո՞ւմ, փռնամ ես, քեսար ինչ էղավ...

ՏԵՍԱՐԱՆ 7

(*Լիզան խոսում է հեռախոսով*):

ԼԻԶԱ - Սոֆիկ ջան, а ты знаешь, что сказал Рубик? Он сказал: «У хирургов не сердце, а мешок со льдом!!!» Բա քեց երեխին կթողնեն-կզնան էն բոզի մո՞տ: Она ведь шлюха говорят, սաղի քակ դառնկել ա, սաղի(*դադար*): Нет, правда, я ее не знаю, բայց Մոսկան Սաթիկն ա ասում:

А моя **Ջուլիկ** профессор! А у нее даже образования нет. Лека говорит эта жаба ему кофе в ванную подает. Վայ գյոռբագյոռ լինես դու Լյոկա, գյոռբագյոռ՛ն:

(*Դադար*):

Հա, հա: Է... Ի՞նչ ա ասում:

(*Դադար*):

Հա, հա: Յա՛: Հա, բա հեսո՞: Վա՛յ, Վովային սղանել ե՛մ, ինչ ա ասո՞ւմ, բա հեսո՞: Ո՞նց թե, Վովան տալեյբուս ա շուռ սվե՞, գժվել ե՛ս: Այ ախչի, ի՞նչ կնճիթ, ты что, совсем сума сошла на старости лет. Բա Վովան կնճիթ ունե՞ր... (Դադար, սարսափած մտնում է աթոռին): Վա՛յ, ինչ ա ասո՞ւմ, ախչի, հլա քես ջանս ինչ էղավ...Ո՞նց թե, քանկերով բարձրացել եմ վրե՛մ, դու՛ր հո ֆաշիստ չե՛ք, բա հեսո՞...

(*Ներս է մտնում Հայկը*):

ՀԱՅԿ - Լիզա՛, ախմախ-ախմախ դուրս մի տուր, դու ի՞նչ գիտես՝ ֆաշիստները ինչ էին անում, ֆաշիստները... Հլա քես է, ժամերով էլի հեռախոսով ա խոսում: А я звоню, звоню, она все висит.

ԼԻԶԱ - Հա: Յա՛: Բա հեսո՞:

ՀԱՅԿ - Խոսում ա ու խոսում: Սերյոժիկ ջան, բաբուլյադ, որ էլ ասելու բան չի ունե-
նում, ասում ա՝ «հա, հա բա հեսո»:

Տո զահրումար քեզ, հա: «Բա հեսո»: Բալի մեկը կարևոր զանգ ա անում: «Բա հեսո»:
Ախմախի մեկը, ախմախ:

ԼԻԶԱ - Հա: Բա հեսո՞:

(*Հայկին, լսափողը դառնալով*):

Не мешай, ая сгла: Убирайся, ты что, сумашедший, что ли?

Տեսնում ես՝ Սոֆիկի հես եմ խոսում: Հա, հա: Բա հեսո՞:

(*Հայկը բարկացած թու է անում ու դուրս գալիս*):

ՏԵՍԱՐԱՆ 8

ՆԵԼԼԻ - (*Բարկացած մտնում է բեմ*):

Ես ֆանի անգամ ձեզ ասեմ՝ չի՞նկ անելուց եղ անտեր ունիսազի կոչեկեն բարձրացրե՛ք:

ԴԱՆԻԵԼ - Ես էսօր չեմ շո՛ւ:

ՆԵԼԼԻ - Էլի ունիսազդ բացեցի՞ր: Ես ոնց ընկա էս լեմինականցիների մեջ:

ԴԱՆԻԵԼ - Հա դե, չեմ շո՛ւ, ասում եմ՝ չեմ շո՛ւ էլի:

ՆԵԼԼԻ - Хватит.

ԴԱՆԻԵԼ - Դե շո՛ւ լինեի, կասեի՝ շո՛ւ եմ:

ՆԵԼԼԻ - Լսի, քեզ խուլիզանի դես մի դա՛հի: Թե չէ կթողնեմ ճնից կզնամ, քեսնեմ՝ ո՞նց ե՛ք յուլա զնալու առանց ինձ:

ԴԱՆԻԵԼ - Շո՛ւ, մոռ գնա:


ՆԵԼԼԻ - Очень смешно!!! Плебей!!! Ռաբի՛զ:

(*Երեխային*):

А ты убирайся делать уроки: Урод: Հորիցդ ի՞նչ դիժի սովորես: Խուլիզանի մեկը խուլիզան:

ՏԵՍԱՐԱՆ 9

ՀԱՅԿ - Լիզիկ, երեխեն չի ենթարկվում: Բալկոնից կընկնի ներքև, խայտառակ կլինենք աշխարհով մեկ:



ԼԻԶԱ - Երեխի հետ մի փչ զբաղվի, ես գործ ունեմ:

ՅԱՅԿ - Երկի կովից լուսմեմ: Արի սեղ, Յոժիկ ջան:

ԼԻԶԱ - Հա, բայց վախենալու բաներ չկան:

ՅԱՅԿ - Չէ՛կէ՛կէ, ես հո ախմախ չեմ: Հա, Յոժիկ ջան, արի էստեղ լուսմեմ, աչքերդ փակի,

нет, глаза закрой, эй, ачкеры факли, нр лусմեմ:

В 1943 году... հա՛, էդ արդեն լուսմեմ էմ, դե լավ, 44 թվին, весной ֆռնսում մի մեծ լուսմեմի լուս էի: Սալոնների շուրջ, սաղոններ, տուփեր: Գիտե՞ր իմ սմեմն էր: Աաա... (գոռում է, մայում է երեխային): Ասեցի աչքերդ փակի, չէ՛: Մի ռուս ընկեր ունեի, իրկունը եկավ թե՛ товарищ капитан... Չէ, հըլա կադիսան չէի, ասեց՝ Հայկ Բալաբեկովիչ, կողի գյուղը танцы կա, танцы: пойдём на танцы: Դե գարմոնկով-բան էլի: Առաջ մագնի-սաֆոն հո չկար: Ասում եմ՝ լսի, բա որ լուսմեսը գող մսա՛վ: Մի խոսով՝ համոզեց: Կալսոն-մերս-բան փոխեցի, ու գնացին на танцы: Դե, Նյուրայի հետ էլ, որ էմեղ ծանոթացա... Դե լավ, էդ չեմ լուսմեմ: Իրկունը արդեն վեր էին դառնում, մի փչ էլ խմել եմ, մեկ էլ բամբու-կա սկսվեց, բամբուկա: Դալիսի վրա прямое попадание, սաղ վառվեց: Հիմա մի կող-մից ուրախացել եմ, որ լուսմեսում չէին ու չեմ մեռել, բայց մյուս կողմից չգիտեմ՝ կաման-դովանային ո՞նց բացատրեմ, որ չեմ մեռել:

Առավոտը գեներալը կանչեց: Մեզ փչ էր մնում գնդակահարելին: Բայց որ լավ ծառայող էին (բարձր հորանջում է), համ էլ ջախել էին, մեզ սկեցին շահաֆ-բա: Էդ գիտե՞ս որն ա, իա՛, չգիտե՞ս: Դե штрафной батальон! Որ գնում են в атаку, է: Դե որ կինյում ցույց են տալիս՝ ակողից վեր են կենում ու ասում են՝ հուռաաա!!! Հետ հետևից գործը գալիս ա: Как правило էդ առաջինները շահաֆ բաժանից են: Провинившиеся, էլի провинившиеся: Համարյա девяносто процентов սաղ մեռնում են: Դե առավոտը ընկերոջս հետ попросились, որով-հետև չգիտեմ կեսնեմ իրար, թե չէ (հորանջում է): Ու գնացին в атаку: Հիմա ասում եմ՝ հուռա՛, ու վազ եմ տալիս: Ջորմ էլ ըսեմ հետևիցս գալիս ա: Շինել սաղ ծակ էր գնդակնե-րից: Էդ ռուս ընկերս էլ կողիս էր վազ տալիս ու ասում էր՝ հուռա՛: Մեկ էլ մի սնարայի ձեմ լսեցի: Տեսնեմ ընկերոջս գլուխը լուսվել ա, բայց ջանդակը հալա վազ ա տալիս ու ասում ա՝ հուռա՛...

(Դադար: Հորանջում է):

Թե՛ չէր ասում: Չեմ հիշում: (Երազկո): Մի խոսով, ահագին երկար վազ սկեց... (հորանջում է)... հասավ մինչև Բեռլին... Ես էլ կանոնադա ստացա, կանոնադա... Թե՛ Սա-լինգրադում ստացա... Չեմ հիշում: Դե լավ, Յոժիկ ջան, остальное потом: Լիզիկ, երեխեն լաց ա լինում: Արի մոտը, ես դուրս ելիս մերկեմ մինչև «Վերմյան» սկսելը:

ԼԻԶԱ - Ինչի՞ ա լացում: Այ տղա, կարող ա՞ վախեցրել ես ֆո էդ աղու լուսմեմները: Հը, ասա:

ՅԱՅԿ - Ախմախ-ախմախ դուրս մի տուր: Միտ էլ լացում ա, էլի: Էդ ռադիոյի ձեմն էլ բարձրացրու: Սոյուզ-Արդյունի մասին եմ խոսում:

ՏԵՍԱՐԱՆ 10

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Կըսեմ՝ ամերկացի կասամաֆներն ու մերոնք օդի մեջ սանցի են շի-նել, սանցի: Սուս, էդ ինչքի վար չի ընկնի: Էհ, ասված, ասված, սաղ սուս է: Աժխարհ սվիր գողին ու բոգին:

(Լացում է):

Մառնեմ ջան, աժես երբ դրի գամ ֆովո լուսմեմ, ֆռնում ես... տեսա՞ր ինչ եղավ...

ՄԱՐԻ - Վարու՛, երեխուն էլ թուրքերի խորատեղ չենես: Վախենա գը:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Զա ի՞նչ ըսի օր:

(Դադար):

Հա, էդ աղջկա դուրսներն էլ կորել էին, դրել էին աչքերի տեղը: Վայ թե աչքերը հանել էին՝ նոր էին դրել:

(Դադար: Հիշելով):

Հըբը աչքերն օր հանել էին, ուրեղ էին կոխել: Չեմ հիշ: Բան չեմ հիշ:

(Դադար):

Զա Սերոժիկ ջան, ընչի՞ գուլաս: Մարո, աղջի, էդ երեխեն էլի գուլա:


ՄԱՐԻ - Ախ մա, ես ֆեզ ըսի, օր երեխուն էլ թուրքերի խորատեղ չենես: Խելոցրի էլի:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Զա ի՞նչ ըսի օր, ես ինձ համար կսկծու կխոսիմ:

Յանի փչ հաչացող կա վրես, հմի էլ դու: Մառնեմ ջա՛ն, աժես երբ...

(Լացում է):

2008
11
5



ՏԵՍԱՐԱՆ 11

ՆԵԼԼԻ - Զուրդ դեղնախոտ էր, բժիշկը դիտեաւ եր մեանակել: Վախենում էի՝ դառնալը ինձ հակառակ երեխուն սխալ բան տուցի: Դե ո՞նց որ մեր հարևան Ռոզայի կիսուրը:

Ժիլսովսայով հիվանդ երեխային ձու եր սվել, երեխեն մեռել էր:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Հա՛ա, թե չէ մենք ոչ երեխա ենք բերել, ոչ էլ մենձցրել ենք: Հըբը մարդդ, մարդդ որ կարգինկիդ տես թե՛ր գցած ման կուգաս, ուրդեղի՞ց էլավ, դադի ծագի՞ց: Ան էս անդերովս են բերել, անդերովս: Հմի էլ դու ես տղիս կոխել ողու...

ՄԱՐՈ - Մա, հանգստացիր...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Դանել ջան, աշես էդոր ընչին հավնար, բերիր ֆցիր մեր յախեն (*օձի՛րը թափ է տալիս*):

Ոյ ոյ ոյ...Ոչ վերը ունի, ոչ վարը:

ՆԵԼԼԻ - Մինչև շուտ եկա, տեսնե՛մ՝ կախարդը ժիլսովսայով հիվանդ երեխիս ժարիս արած կասկե՛ս ա տալիս: Լավ ա՛՝ տեսա: Հագիվ ձեռքից վերցրեցի:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Դանել ջան, էդ սայլուգ էրևցին երեխին սաղ օրը սովամահ կենե, այ տղա: Ես սաղ օրը գուլամ ըդոր ձեռքը, մե բանըմ էրա:

(*Լացում է*):

Դանել ջան: Հէէէէ...

ԴԱՆԻԵԼ - Մա, ինչի՞ գուլաս: Ի՞նչ է երել քեզ:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Զիդեն, գուլամ:

ԴԱՆԻԵԼ - Ի՞նչ անեմ, դանակը կոխե՛մ փորը:

ՎԱՐԴԱՆՈՒՇ (*Լացելով*)- Մառլեն ջաաաա՛ն, աշես, երբ դիդի գամ փվդ դառնան...բալա ջան...

ՆԵԼԼԻ - А твой отец тряпка! Հենց առաջին օրը, որ մեա իրանց տուն, մեզ ըսկի առանձին սենյակ չէին տվել: Բոլորս միասին էինք փնում: Թե դուք ո՞նց ծնվեցի՛ք՝ ես էլ չհասկացա:

ՏԵՍԱՐԱՆ 12

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Հարութ բիձեն՝ կեսրարս, Դանելի դադը, Վարսիս հերը, ֆա, Նոյեմի ախտերը, ֆա Նոյեմը՝ Տիգուի ու Ռոզայի կիսուրը, ֆա Ռոզան՝ Մարկոսի... (Դադար, փորձում է հիշել), ֆա դե, ինչ օր ա, է, ինչ կըսեի՞... Հա, էդ Հարութ բիձեն կորիս, այլանդակ, փուֆուրջի, գլոթվեա՛ն մարդըմ էր... Իսկը դու, Սերոբիկ ջան, աչքերը՝ կաբո՛ւղ, կաբուր, շա՛ս ես մման, մադաղ քեզի, փռնամ ես: Փախեփախի վախսը օր փախե էգել էր Լեննազան իրա կնիկ Գյուլիզարի հե՛ս, ջուլիս եզ էր բերե, երեխանցը: (*դադար*) Զա եզների անունը չեմ հիշե: Ինչ է, կոխել ես, չես հանե... Հա, ու մի դուրսդ էլ օսկի էր բերե: Էդ դուրսդը դադվալը փոս էր երե ու դայ էր տվե: Դադվալ օր կմդիս, փոսըմ չկա՛մ ան էտդես: Այ ըդիգ հենց էդ փոսն է: Կմվի վախս հի՞ճա դադվալ, օր աձուխ բերեմ: Մեկ էլ կաբլուկս մդավ հողը: Աշեն օր՝ նոր է փորած, փուխ է, փուխ: Նայսեմ հողը տվի էն թարաֆ, տեսնիմ դուրսդը, մեջն էլ լի՛ր օսկի:

ՄԱՐՈ - Տադիկը կըսե, օր էտդես երեք լիսրանց բանկա էր, մեջն էլ օսկի:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ան սղեսնա կարմիր տասը մանե՛ս էլ դրած վրեն: Վերու:

ՄԱՐՈ (*ծիծաղելով*) - Հարիֆս հենց ըդիգ էլ վերցրել էր վրայից: Էհ, բիձեն մախսուս էր դրել վրեն, որ ըդիգ վերցնես՝ իմանա:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Սով էր: Մարդս ֆռնսում, իրեք երեխա, Դանելս դեղոյից աձուխ կգողնար, կարտը կբերե Ամասիայից: Մառլենս (*Դադար, սկսում է լացել*) դդիգ էր հլե, Մառլեն ջաաա՛ն... երբ դիդի գամ փվդ... փռնամ ես... (*միանգամից լրջանում ու շարունակում է*), հա, էդ օրը գնացի բազար, ան սղեսնա խաղող առա, լավըմ մսով ճաշ էփի: Մեզ էլ իրգվա թարաֆ Հարութ բիձեն, մաֆսի բալոնը ձեռքը, մերս մդավ: Գլխու ընգավ, օր օսկեփը գդել եմ:

ՄԱՐՈ - Ըսավ՝ ախչի, էդ ուրդի՞ց քեզ էդքան փող, օր էտդես էփ ու թափ ես երե: Ու տափ-կին ծեծեց, Սերոբիկ ջան:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Երգա՛ր կոսըմ ունեի, ան ըսդես փաստեց ձեռքին ու՝ տուր թե կուդաս, լավըմ փոթկեց: Թեմա՛ս անդերը: Կուտկը: Ես ջանդամ, երեխես վախցան: Ջաթի կուտս փորով հաց կերանք: Թաղման ժամանակ, երբ Հարութ բիձին դնեին զը փոսը, ան ըսդես աշեցի վար, գուգեի իմանամ՝ օսկեփը հեղը տարա՛վ, թե՛ չէ:

ՄԱՐՈ - Բայց շա՛ս դադվով մարդ էր, մամուսով: Բոլորը վախենային զը: Հարևանները բիլա ձեռը գուլային: Հըբ չէ, էն խղոր դադը, կնիզը սադա վրեն կբռա: Ըդոր հմար էլ կան-տուգիա է տալե:



ՏԵՍԱՐԱՆ 13

(Լսվում է Հայկի հորանջը):

ԼԻԶԱ - Բախսավար գլխիդ: Մի փչ զգույժ հորանջի, էլի, չանդ էլի դուրս կընկնի, ես սկո-
րիի հավեսն չունեմ: (Դադար, Հայկի կոճիկները նկատելով) Լսիր, էդ դուրեքը ներկել ես, լավ ես
արել: Ты фли почему покрасил, ты фли: Բա ափսոս չէ՞ր:

ՀԱՅԿ - Ինչն էր էլի որ, Լիզիկ, շատ էլ սիրում ասացվել:

ԼԻԶԱ - Վայ! Я с ума сойду, էդ դու դուրսն ես հագնելով, հո դու խայսառակ չես:

ՀԱՅԿ - Չէ, մենակ գիրիլ թափելու, մեկ էլ՝ հացի: Ավելի լավ ա՝ էրեխուն բալկոնից բեր:
Կընկնի ներս, խայսառակ կլնենք աշխարհով մեկ:

ԼԻԶԱ - Սերյոժիկ, А ну ка иди сюда! Божье наказание. Էլի բալկոնից չի՞նք ա արել
հարևանի վագֆին: Հայկ, լսո՞ւմ ես:

ՀԱՅԿ - Ախմախ էրեխա ա, էլի: Խայսառակ եղանք Մոսկվայի Սաթիկի առաջ:

ԼԻԶԱ - Ֆռռնիցդ դասնի, մի փչ հանգիստ վեր ընկնի Տեղը:

ՀԱՅԿ (միանգամից) - В 1943 году а́нсамбль ма́ршбанди́нских и́нст ру́ководи́тели и́нст
էինք ընկել: Գնացի ընկերոջս հետ ջուր խմելու ու Տեսնեմ աղբյուրից մի հաս ֆաշիստ ջուր ա
խմում: Հետոս ընկերը ռուս էր, ավստմասը հանեց, որ խփի: Ես էլ ասեմանակս հանեցի ու
ասեցի՝ եթե դու իրան սղանես, ես էլ եմ կսղանեմ: Մարդ չի իմանա: Էդ ընկերս ասեց՝
«Товарищ капитан! Это ведь враг!!»: Ես էլ ասեցի՝ տ ախմախ, ինչ անենք что враг, իրա
համար հանգիստ ջուր ա խմում, թող խմի՝ գնա էլի: Կարող ա ինքն էլ Գերմանիայում իմ Նե-
լիկիս ու Ջուլիկիս դես էրեխեք ունի: Բա մեղի չե՞մ: Հո վայրենի չես: Ես վաղեք կռվում մարդ
չեմ սղանել: Վայ, Յոժիկ ջան, ֆնեցի՞ր, դե լավ ա, լավ: (Ուզում է անձայն վեր կենալ):

Ես անցեր ոտս ոնց ա ցավում: Երևի գնամ սանասորիա:

(Դժվարությամբ ոտը ձգելով: Գոռում է):

Ասաաաաաաաաաա: Վայ, Սերյոժիկ ջան, զարթնա՛ր: Ինչի՞ ես դողում, այ տղա: Հո չե՞ս
վախեցել: Լիզա, Էրեխեն լացում ա: Երևի էլի վաս երազ Տեսավ: Ես էրեխուն դեմ ա Տանենք
վախ չափենք: Զնի մեջ վեր ա թռնում ու վախենում ա: Լիզա:

ԼԻԶԱ - Հը, ասա: Վայ, փռանամ ես: Էլի վախեցել ա: Դու էդ վախը չափող դառնալին
ճանաչո՞ւմ ես:

ՀԱՅԿ - Դե հա: Էսենց մեծ թով, մորուքով, կասիլներով դառնալ ա: Տղամարդու մման:

ԼԻԶԱ - Հա, հա: Լսի, վայ թե էդ էն կնիկն ա, որ փոքր վախս իմ վախն էլ ա չափել: (Դա-
դար): Բա էդ մինչև հիմա աղորում ա: Եսդես գլխիս հալած արձիճ էր դառնում: Էրեխին ան-
դայման մոտը կսանես: Որ իրա գլխին էլ արձիճ լցնեն, որ էլ չվախենա:

ՀԱՅԿ - Յոժիկ ջան, դիմացի, դիմացի մինչև առավոտ, ֆո գլխին էլ արձիճ կլցնեն... ու
все, как рукой снимит (Դադար): Չէ, այ տղա, ախմախ-ախմախ հարցեր մի տուր, էդ
դառնալը անհառում չի աղորում, Սվերդլովի վրա: Լիզա, Էրեխան էլի լացում ա, երևի ինչ-որ
Տեղը ցավում ա, Լիզա՛:

ԼԻԶԱ - Հե, սուս մնա, այ տղա: Не плачь, ты что, девочка, что ли? Հայկ, գնա Նելիկի
համար միս առ՝ տղմա ա դնում:

ՀԱՅԿ - Հա՛, էն մեղավներով դիզակս բեր, որ առանց հերթ առնեն:

ԼԻԶԱ - Առ: Լսի, էդ ներկած կոճիկները չհագնես, էն թագեղ հագի:

ՀԱՅԿ - Ախր դրանք էլ մազուկներս են ցավացնում, մազուկներս: Ես տարի էլ եմ գնալու սա-
նասորիա՝ մազուկներս բուժեն:

ԼԻԶԱ - Բախսավար գլխիդ: Էդ դու ֆանի՞ տարի ես դաստասվում աղբես, որ հա սանա-
սորիա ես գնում: Ադեն 87, тебе.

ՀԱՅԿ - Պարսեգովի բժիշկը ասել ա՝ մինչև հարյուր տարեկան կադրեն:

ԼԻԶԱ - Պարսեգովի բժիշկը ավելի լավ ա թող կանոնադրի բուժի, կանոնադրի:

ՀԱՅԿ - Կանոնադրաս՝ չգիտեմ, բայց դեղ ա թվել, որ ֆսեմ գլխիս: Մազերի համար օգուտ
ա:

ԼԻԶԱ - Հա, հալա ո՞ւր ես: Էդ գլխիդ մազերն էլ ա հալա աճելու, թագա, ջահել կնիկ ես
առնելով: Конечно, конечно:

ՀԱՅԿ - Ինչն ախմախ կին դուրս եկար, Լիզիկ: Դե լավ, ես գնացի:

ԼԻԶԱ - Էրեխին մառոժնի չառնես, հագում ա:(Հետևից չանչ է անում):

2008
11
5



ՏԵՍԱՐԱՆ 14

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Սերոժիկ, մադադ ֆեզի, բարձիս սազը մալ մանեթըմ կա, վերու, բոշի սադից մի հաղըմ դլոմբիր բեր, բերմիս համը փոխեմ: Այ տղա, ինչ կեղմի, էդ էսկիմոս է, ինչ է՝ չառնիս: Նեզրի անդեր կյմանե: Դե ֆելե, ֆելե, մադադ ֆեզի: (*Դադար, երկար մայում է հայելու մեջ*): Մարու:

ՄԱՐՈ - Ըսա, մա:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Աժե, զաբնել եմ: Զիսս էլ սրվե՝ ինչխոր թուրփի անդեր:

ՄԱՐՈ - Վարդու, էդ ինչըխ իմացար, որ թուրփի անդերը սուր է:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Էհ, չիդեմ, չիդեմ:

ՄԱՐՈ - Զբը կըսեիր՝ ղզդիկ էիր, ազգանունդ չէիր հիժե:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Ազգանունս չէի հիժե, բայց...

ՄԱՐՈ - Այ ֆեզի խայդառակություն: Ըդիզ էրեխին չղադմես, մա:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Զա, ի՞նչ ըսի, ախչի, ի՞նչ ըսի:

ՄԱՐՈ - Տո դե ֆեզի շաս չգա: Սաղ օրը անդես, անդես, դուծա...

ՏԵՍԱՐԱՆ 15

ԼԻԶԱ - Этот ребенок весь день гадости говорит! Էդ ուռունցները որսեղից ա սովորում: Ախր հայաթ էլ չեմ թողնում:

ՆԵԼԼԻ - Պարզ չի՞ որսեղից, մամա: Էդ անես Լենինականը հենց գնում ա՝ բերանը դառնում ա ունիսազ: Փողոցայինի մեկը, փողոցային: Բերանդ բիբար եմ լցնելու՝ մի անգամ էլ ուռունց տաս: Խուլիզանի մեկը, խուլիզան:

ՏԵՍԱՐԱՆ 16

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Զարուք՝ բիձեն, դաբիդ՝ Վարսի հերը, շաս ֆյուֆուրջի մարդ էր: Փախեփախից որ էզել էր, իրա եզներով Արփաչայը գործ կեներ, ընսանիփ կղահեր:

Ջարդի վախսը, թուրֆերն որ մդան Լեննագան, Զարուքը Արփաչայը գործ էնելուց կեսանին ու խնդրեն գը, որ Զարուքը իրա սելով գեսը անցկցնի: Գեդն էլ՝ վարա՛ր: Վով լողմալ գիդեր՝ լողցավ անցավ: Վով լողմալ չիդեր՝ ըսին. «Էֆենդիմ, անցկցու էն ափը, թե չէ աղզվը սիփի-յուրուզե: Էհ, Զարուքն էլ ինչ ընե: Կորորմ մլուլ գուդա՝ յանի կալոսը փչացել է, որ էն լողցողները էրթան հեռվման: Վով որ լողմալ չիդեր, գնա մի ֆան հոգի, մսցրել էր սելը ու մդել ջուրը: Զասել էր մեջսեղը ու եզները շուռ էր սվե: Իմֆն էլ լողցել-ելել էր էն ափը: Ասկյարներն էլ խեղճվեին գը ու կրոռային՝ յարդըմ էլա բիզա Ալլահըն յոլմդա յարդմե:

Վով որ քրից կելներ՝ բիձեն ֆարով կզարկեր ու ֆյալլեն կցխեր: Կըսեր՝ սիփմ սիզին ալլա-հըվըզ: Սիփմ սիզան անաբաջըվըզե:

Սադին կորորեց: Էդ որ կղադմեր, լավ գիժեմ, կսկծու դարդ կեներ հարիֆը: Եզներս էին ափսոս, կըսեր, եզներս: Էրեխես անոսի մնացին:

ՄԱՐՈ - Զբը որ կըսեմ կուսոզ էր՝ կուսոզ էր էլի:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Էհ, դե ինչ որ ա, է մարդ էր էլի: Կըսեր Ղարսից որ փախե-էզել էր՝ սաղ իրա կնիզն էր մեղավոր՝ Գուլիզարը: Մարդուն կռիվ չէր թողե: Վեժերը հավաքել էին ու՝ յալլա Ալեֆանդրադուլ: Ես էի, որ իմ մարդուս չկրցա դառնեի: Գնաց ֆռոնսը՝ զոյվավ:

ՄԱՐՈ - Էհ, դու էլ չուղարգեիր դադային: Ընչի՞ ուղարկիր ֆռոնս:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Զա ես ի՞նչ կրնայի էնեի որ: Պավեսկեն էզավ, իմֆն էլ գնաց զոյվավ: Զոռնամ ես:


ՄԱՐՈ - Պավեսկեն: Զըբը կըսեիր՝ դաբան դաբաժվուլեց է եղե՛:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Էհ, եսիմ, էի: Դանֆսըսցել եմ, բան չեմ հիժե:

ՄԱՐՈ - Զնչի՞: Էդ թուրֆերի անդերը կիժես, իսկ մարդդ ինչըխ գնաց ֆռոնս զոյվավ՝ չե՛ս հիժե:

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Էհ, հա, հա, թուրֆերի անդերի մասին ընձի Զուլուն է դադմե: Իմֆը մենձն էր, ես ղզդիզ էի, բան չեմ հիժե: (*Դադար*): Նոյեմենֆ կըսեին՝ Ղարսը Ղոջաբերդ կար: Ահագին գորֆ կար, թնդանոթ կար: Օչխարի ղես փախե էզել էին Լեննագան: Մոսի ֆովը կաբրեին: Էհ, Նոյեմենֆ մենձ էին, սաղ կիժեն: Ես բան չեմ հիժե: Զարուքը կըսեր՝ յեյմ որ հասանֆ Լեննագան, Ղարսը իրեֆ ժամվա սվին ասկյարներին: Խեղճ հարիֆը գիդեր էդ է, ուրիժները սեղը ղդի կռվին: Զիմֆն էլ կռվից հեղո ես ղդի երթա: Զա կերթաս, հըբը չէ: Խալիները փռած մեզի կսղասեն:

ՄԱՐՈ - Բան չի հիժե: Բան չի հիժե: Զբը ինչըխ: Էդ էրեխեն ի՞նչ էղավ: Սերոժիկ, ծակը ընկա՛ր, այ տղա: Զուկարանից դուրս արի, անդերդ կողոզես:



ՏԵՍԱՐԱՆ 17

ԴԱՆԻԵԼ - Նեյլի, էն բուֆուկեֆը տուր տանեմ հանձնեմ:

ՆԵԼԼԻ - Սերյոժիկը ծեֆը դեն ա գցել:

ԴԱՆԻԵԼ - Իդիոտի մեկը, իդիոտ: Ասա՝ հինգ կոդեկի օգուտ սվել ա՞: Հիմա ո՞նց մածուն առնեմ:

ՆԵԼԼԻ - Էն դարակի մեջ փող կա, վերցրու գնա: Ի՞նչ ա ասածդ:

ԴԱՆԻԵԼ - Իհարկե, օդից ա գալի փողը, օդից: Էն լակոսն էլ ֆեզ ա ֆափել: Իդիոտ:

ՆԵԼԼԻ - Слушай, ты отстанешь от меня? Или мне опять отравиться? Ավելի լավ ա՝ տանը տնուսիկով մի ման արի: Գոնե երեխեֆից ամաչի: Սաղ էղած-չեղածդ դուրս ա գալիս, կախվում ա:

ԴԱՆԻԵԼ - Ինչ անեմ, շոգ ա: Համ էլ՝ ինչ ա երևում որ:

ՆԵԼԼԻ - Էլ ի՞նչդ միտի երևա: Որ շոգ ա, ուրեմն свои прелести должен демонстрировать Մարդու հեն տալիս ա գալիս: Разве можно тридцать лет говорить одно и то же, одно и то же! тридцать лет одно и то же:

(*Հեռախոսի զանգ: Խոսում է ուրիշ, հանգիստ ու դժբախտ ձայնով*):

Ալո՞: Հա, Ժորժեսա ջա՞ն, դու ե՞ս, չճանաչեցի: Դե լավ չեմ, էլի, ночью не сплю, էլի ֆո սված դեղն եմ խմել, Դաննիլ:

(*Ծիծաղում է*):

Իհա՛ն ի՞նչ ա եղել որ: Սաղ օրը բոքիկ ու տնուսիկով ման ա գալիս: Ոչ մրսել ունի, ոչ բան: Ջուլիկի բախսը ոնց բերեց: Լյուկան էլ էր, չէ՞, տանը բոքիկ, տնուսիկով ման գալի: Ես չեմ որոնում սրանից էլի: Ռաբիզ: Էդ լեմինականցիները ոնց որ նուդիս լինեն: Ամառ-ձմեռ՝ սկյուր: Լավ ա՝ մամայիցս մի ֆիչ ֆափում ա, а то вообще առանց տնուսիկի ման կգար: Ոնց որ կարոտ եմք իրա կախված անսերներին: Լսի, Ժորժեսա ջան, մի բան հարցնեմ. ֆո մարդն էլ ա՞ տանը տնուսիկով ման գալիս: (*դադար, զարմացած*), Առանց տնուսի՞կ: Բա չե՞ս զգվում:

ՏԵՍԱՐԱՆ 18

ԼԻԶԱ - Սերյոժիկ, Хватит! Ծակն ես ընկե՛լ, ինչ ա: Էդ զուգարանից դուրս արի, այ տղա:

(*Հեռախոսի զանգ*):

Ալո՞: Հա, Սոֆիկ ջան, դու ե՞ս, չճանաչեցի: Представляеш: Ես էլ գիտեի՝ եդ դռնիկն ա գանգում, չի խոսում: Оказывается, Սերյոժիկն ա, Մարգոյենցից զանգում ա ու չի խոսում:

(*Ծիծաղում է*):

Откуда узнала? Մարգոն ասեց: Սերյոժիկն էլ ասում ա՝ բաբուլյա, եդ դռնիկը ի՞նչ ա: Ես էլ միանգամից երեխու բերանը բիբար լցրեցի, որ հիօ՛ի՝ էլ ուռումնց չսա: Էն օրն էլ գիտես ի՞նչ արեց՝ աղջկա շոր էր հագել՝ Գագայիս շորը, ես էլ գլխին բանջիկ էի կապել, լսի, ոնց որ աղջիկ ըլներ, նենց սիրում էր (*դադար*), էլ մի ասա, եդ մեյմունը վերջը դերասան ա դառնալու, խայտառակ ըլնենք աշխարհով մեկ:

ՏԵՍԱՐԱՆ 19

(*Վարդանուժը հանդարտ անցնում է բեմով: Դռան զանգ*):

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ախչի, եդ դուռը բաց, ա՛սես վով էգավ:

ՄԱՐՈ - Լույսի մարդն է, մա:

ԼՈՒՅՍԻ ՄԱՐՈ - Սորժուր ջան, եդ դուք տանը լուս չե՞ք վառի:

ՄԱՐՈ - Ես սաղ օրը կաճխադիմ: Մերս էլ ինվալիդ կնիզ է, տանը գործ չի էնե:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Տղա, արի ըսեմ, արի տես:

(*Հանում է բարձի տակից կուսակցական տոմար*):

Ա՛սե: Ես թարաֆ ես եմ, մյուս թարաֆ՝ Լենինը: Ես սուտ խոսել չեմ սիրե: Էդ ախչիժը լուս կգողնա:

ՄԱՐՈ - Լավ, Վարթուժ, հանգստացիր:

(*Նայելով լույսի մարդուն*):


Դանգալըսցել է լրիվ, խելքն իրենը չէ: (*Լացում է*):

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Մառլենինս գերեզման կերպիմ՝ կգողնա: Ա՛ն՝ լուցկու չոփը զարգել է տո՛ւս չի՞զի ոռը ու կգողնա:

ՄԱՐՈ (*լաց է լինում*): Ախ մամ ջան, ախ դու ընչի ըդդես եղար:

ԼՈՒՅՍԻ ՄԱՐՈ - Լավ, լավ, մամ ջան: Բան չկա, ես երթամ, երթամ:

2008
11
5



ՍԱՐՈՒ - Հա, հա, ախրե՛ր ջան: Գնա, ջահել վախճը տղա էրեխա է կորցրել...խելից դուրս կուդա:

(*Լույսի մարդը գնում է*):

ՎԱՐՂԱՆՈՒՇ - Աֆերիս գող: Սալիմը ողի էղներ, որ ոռդ փե՛ս կոխեր: Մարուս ախչիկ:

ՍԱՐՈՒ - Վարդու՛, հանգսացի: Հեղինակային երեկոդ չէ:

ՏԵՍԱՐԱՆ 20

ՆԵԼԼԻ - Որ հորդ հե՛ս դե՛ռ Լենինականում էի աղու՛մ, ինձ համար սառաֆան էի կարել:

Ну я ведь все умею: Её́мն ու հիմա հավես չունեմ: Одним словом. Կարել էի, բայց տղադ լը չէի բլանդել: Գնացել էի դասի, վերադառնա՛մ տեսնեմ՝ հասա՞ռոռը, հորհուրդ, նստել ա տղայեզդի մո՛տ ու բլանդում ա: Էն բո՛ւա Արուսը՝ առաջի հարկի հարևանը, հարցնում ա՝ Մառուս, էդ դու ես կարե՛լ:

Эта проститутка, ասում ա՝ հա: Ես կողմը կանգնա՛ծ: Представляешь!! Она ведь ничего не умеет!! Ничего! Только завидовать и гадости делать! Этот Гуго её любовник, потому и на ней не женился. Что бы он с ней делал. Не шить, не готовить, да, и вообще в молодости она была блядьё! Думаешь у неё был только Гуго? До него она со всеми таксистами переспала, от Гуго у неё была внематочная беременность! Потому и осталась без детей,старой девой! Как будто я виновата что у неё жизнь не сложилась!

ՏԵՍԱՐԱՆ 21

ՍԱՐՈՒ - Ջահել վախճս, Սերոփիկ ջան, ես որ Լեննագան ուլիցները դուրս կուզայի, ամբողջ դվիժեմին շոֆերների անդերների հե՛ս կկանգներ: Էն՛քան որ ողս էր կաղ, էդոր հմար չա՛մուսնացա: Գուզոյի հե՛րը չթողեց: Է ջահանդամ թողներ: Մեզ է, Գուզոս էս 30 տարի է՝ հեղս է, հո իրա կնգա հե՛ս չէ՞: Մերդ ըդոր հմար կցխկվի: Ընձի մի՛ո՛ս էլ սիրել եմ, որդւ ես կարիին կնիզ եմ, զաբում սիյո՛սկա չեմ: Ես տարիփս, ա՛ւե, վերս էլ ունիմ, վարս էլ: Էդոր խաթ է, որ Գուզոս հեղս է: Հըբը չէ, իրա կնիզը... Գուզոս կըսե, որ իրա կնիզը իմ ջարդած ոսփս եղունգն էլ չարժե: Հըբը որ կնգան տեսնիս, Սերոփիկ ջան, ցոկիս գը: Ջաբո՛ւն, անդո՛ւր(*լրջանում է*), իսկը՝ մերդ:

ՏԵՍԱՐԱՆ 22

ՆԵԼԼԻ – Լսի, հերիֆ չեղա՞վ ես կարիդորի լույսը ինձնից հե՛տ հանգցնես: Ты что, с ума сошел, что ли? Կուսո:

ԴԱՆԻԵԼ - Շիզոյի մեկը, շիզո... Անդայմա՛ն ողիսի իլումինացիա լինի:

Ավելի լավ ա՝ էդ ողիոմնիկի ձե՛նը բարձրացրո՛ւ «Վրեմյա» նայեմ: «Սայուզ-Ադալունն» ա գալիս:

ՆԵԼԼԻ - Պրիոմնիկ չի, շիլիվիզր ա:

ԴԱՆԻԵԼ - Մի հաս էլ լիմոն կճղի՝ ուտեմ:

ՆԵԼԼԻ - Լիմոն չի, մանդարին ա: Դեղդ խմե՛լ ես:

(*Չի տատասխանում, շարունակում է թերթ կարդալ*):

Դանիել, դեղդ խմե՛լ ես: (Գոռալով) դեղդ խմե՛լ ես, Դանիել:

ԴԱՆԻԵԼ – (Սթափվելով): Նիֆիոցի՞նը:

ՆԵԼԼԻ - Նիֆիծիոցինը, Դանիել, նիֆիծիոցինը:

ԴԱՆԻԵԼ - (Հասուկ ջղայանցնելով)էդ ասվյորկեն տուր, հացը կտեմ:

ՆԵԼԼԻ - Ասվյորկա չի, դանակ ա:

ԴԱՆԻԵԼ - Լավ է: Հիմա դանակը կառնեմ՝ կկոխեմ փորդ:

ՏԵՍԱՐԱՆ 23

ՀԱՅԿ - Լիզա, էրեխուն տատա՛սի, գնում եմ տարադ:

(*Կանգնած անդադար սանրում է մազերը*):

ԼԻԶԱ - Էրեխեն վաղուց տատա՛ս ա:

(*Հայկը շարունակում է սանրվել*):

Բախսավար գլխիդ: Էդ յանի գլխիդ մազ ունե՛ս, որ մազերդ դեսից դեն ես անում, դենից էլ դեսը: Թե՛ տարադից հե՛տ գնալու ես Պարսեգովե՛նց տուն:

ՀԱՅԿ - Ինչ ախմախ կնիկ դուրս եկար, Լիզիկ: Յոժիկ ջան, пошли:



ՏԵՍԱՐԱՆ 24

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Հարութ բիձեն օր կմեռներ, էրեխանցը ուղարկեցի իմանային՝ օսկեքը ուր-դե՞ղ էր դառն: Հարութը աչքերը բացավ ու ըսավ՝ թուրքերը տարան, չկա:

ՄԱՐՈ - Թուրքերը հըբը չէ՞, ան՝ Նոյեմենի կռվից հետո էրկու հարկանի տուն սարհին Տի-կուսենց համար: Էդ դ՛ըմ փողերով: Մեջների հարի՜քը մենի էին: Գոնե կեսը մեզ տար, կեսը՝ աղջկան: Կուսոգ անդերը:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - (Luցում է): Ախ, Մառլեն ջան: Երբ ողորի գամ փվդ դառնո՞ւմ: Բալա ջան:

ՏԵՍԱՐԱՆ 25

ՆԵԼԼԻ - Երկրորդ երեխես, քեզից առաջ, Յոթիկ ջան, սրեսներից հիվանդ ծնվեց: Տա-սիդ ասում էի, երեք անգամ խնդրեցի երեխին նայես, որ դասի գնամ: Կախարդը շուտ գա ի՞նչ ասի:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Երեք ցավի ռաս գաս, երեք անգամ ջիգյարիդ վրա մոմռաս:

(Դադար):

ՆԵԼԼԻ - Ամբողջ օրը ինձ անիծում էր տառ: Համ էլ ի՞նչ եմ զարմանում որ: Հաստառը, հորհուրդ ամբողջ օրը տակը լցնում էր: Կախարդը ведь была примитивной, даже писать не умела! Дура! Կռվի վախս իրա մարդը բռնոյա ուներ: Պաղդ՝ Վարսը, իրենց տեփսիւում էր աշխատում: Մասնագետ էր: Единственный грамотный человек в этом говне! Կ ունեցավ այնտեղ, Դե էդ կախարդի հետ աղորդող դարձ չի՞, որ դիտի սիրած դառն: Так твоя бабка когда узнала пошла к военному и попросила чтоб ее мужа призвали на фронт! Представляешь? Собственного мужа, собственного мужа на фронт! ! Հետո էլ հաստառը՝ հորհուրդ, զարմանում ա, թե ինչի՞ Դանելի դառն՝ Հարութը, ոսկիները աղջկան՝ Նոյեմին սվեց: Բա ի՞նչ անեք: Հարսի՞ն տար: В благодарность за то, что она его сына убила?

ՏԵՍԱՐԱՆ 26

ՀԱՅԿ - Լիզա, ջրերը սվել են: Դաբոյիները ջուր լցրու: Սերյոժիկ, էդ ի՞նչ ես անում:

ԼԻԶԱ - Լսի, էդ երեխի գլխին փորձամբ ա գալու: Ամբողջ օրը գազի վրա մեխ ա եփում: Հետո էլ մեխը դնում ա խալադիլիկ, որ տեսնի՝ մեխի հետ ինչ ա լինում:

ՀԱՅԿ - Երեխեն գիտնական ա դառնալու, Ջուլիկի նման էփտերիմենտառ:

ԼԻԶԱ - Ախր վախում եմ՝ եռման ջուրը վրեն շուտ տա խաշվի:

ՀԱՅԿ - Ինչի՞, դու մեխի գլխի ես: Կողմը կանգնի, որ շուտ չտա:

ԼԻԶԱ - Լսի, ես հիմա իմ ձառը եփեմ, թե՛ երեխի մեխերը:

ՀԱՅԿ - Ավելի լավ ա՝ իմ մասկիները եփի, մասկիները: Հենա էն хозяйственный սա-րոնը մանրացրել եմ, որ փոխանա եռացնես:

ԼԻԶԱ - Դե ասա թող էլ քեզ ա փաշել, էլի: Ինքը մեխ ա եռացնում, դու էլ՝ փոխանները:

Լավ ա գոնե Գագան ձեզ չի փաշել: Կարգին խելոք երեխա ա: Просто двоичница!

ՏԵՍԱՐԱՆ 27

ՆԵԼԼԻ - Ես ջախել երեխա էի всего двадцать лет հղի, она весь день меня проклинала: Մի անգամ ֆրոջդ՝ Գագայի համար, ձառ դիտի սարհի: Իրա կերասիակեն էի վերցրել: Ну газа ведь тогда не было: Կախարդը եկավ ասեց...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ըսի՞դ ձեռք չդաս, ըսիկ բղինձ է: Դու փուղ ունես, ինչ փափ կուզես՝ կեր:

ՆԵԼԼԻ - Բայց հետաքրքիր ա, հա, որ մեռնում էր՝ ինձ էր կանչում: Հաստառին, հորհուրդ մոտ չէր թողնում...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Աղջի, դու քեզ եմ թարաֆ, աֆերիս: Նելում կանչեք, Նելում:


ՆԵԼԼԻ - Թաղման ժամանակ, որ արդեն դառնալին դնում էին փոսը, սենց մայեցի փո-սի մեջ: Կողմի կանգնածը, հիմա չեմ հիշում՝ ով, ասեց էդ ի՞նչ ես մայում Նելի: Ասեցի՝ հե՛, մայում եմ տեսնեմ՝ կերասիակեն հետը տարավ, թե չէ:

(Դադար):

Ребенок из за них больной родился, они от меня еду прятали, Կախարդը ասում էր...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Սադա կծամե: Քա աղջի, քերանը սադա ժաժ գուրա: Սաղ թարեմներս դարդակ են: Ամբողջ մուրաբեֆս կերավ: Էն տղին բամ չթողեց:

2008
17
5



ՏԵՍԱՐԱՆ 28

ՆԵԼԼԻ – Вообщем чему я удивляюсь? Она кого хочешь может угробить. Даже собственного сына. Հորիսմորդ էլ տեխիլում սիրած ուներ, у них это наследственно, կախարդը, видите ли, լուս հարս չէր ուզում, ասա ինձ էլ չուզեիք, էլի: Вообщем, эта девочка естественно с этой семейкой ничего общего иметь не хотела. Не все же такие дуры, как я! (ծիծաղում է) увидев мать отказала Марлену, и ушла от него так он, իրա դատարանների տակ էր գնել ու մտել էր, а тогда это было смертельно!!!, тут же подхватил туберкулез и умер. Сейчас она весь день воет!! «Մառլեն ջան, Մառլեն ջան», - արի ու մի ասա, տղա հարսնումար քեզ «Մառլեն ջան»: Կախարդի մեկը, կախարդ: Հըն իմ ծնողներին էլ անուն են դնում: Про бабушку гадости говорит и про маму тоже! Ասա մի հաս ձեզ նայի, էլի: Все как будто персонажи Гоголя или Островского, Кабаниха! Я была у них “лучом света в темном царстве”! Ну ты это потом пройдешь! (Դադար) Кстати, Сережик, ты прочел Ревизора? Թե՞ ուզում ես հաստատո հորաբողոք նման ամբողջ կյանքի բաղնիսում տոնա տալես: Прочел бы лучше Анну Каренину: Ոնց որ իմ մասին գրված լինի, միայն ֆինալը ավելի գեղեցիկ ա քան իմը:

ՏԵՍԱՐԱՆ 29

ՀԱՅԿ – Լիզա՛, երեխային մի թող հաջաթներես հեռ խաղա:

ԼԻԶԱ - Չէ, մենակ մեխ ա եփում, ուրիշ գործիքները դառնել են:

ՀԱՅԿ - Հիմա լավ հաջաթ էլ չես ճարի, նորը բանի դեմ չի, միանգամից ցրվում ա: Են ղյալիսթինն էլ Մարգոյենց ասա՝ քերեն, արդեն չորս օր ա, ինչ տարել են, Совесть тоже надо иметь! Ասա, հաջաթ ա էլի, վերցրել, օգտագործել եմ, քերեմ... Հա, Գազային էլ վաղը դուրս չուղարկես, կողի դասարանում ժիլոսկա են հայտնաբերել, ժիլոսկա: Մինչև սաղ երեխեքը չիվանդանան, չեն ասի ավանդները:

ՏԵՍԱՐԱՆ 30

Նելլի– Гага маленькая была, я беременна, все девять месяцев на нервах. А отец твой тряпка, ничего не говорил ни сестре, ни матери. Դա համար էլ երեխես հիվանդ ծնվեց (դառնալով) :

Через шесть месяцев в Москве в клинике Сережик умер! Разве это я им прощу!? Да, բայիկ ջան, его тоже звали Сергеем, как тебя. (ծիծաղում է) Я так любила это имя. Твой отец, когда мы только познакомились, (դառնալով, հանգիստ) будь проклят это то день, знал что я люблю это имя и первый раз назвался Сергеем. Я так удивилась! Как дура, поверила, а его то звали всего лишь Даниел! Ленинанское плебейское имя! Я потом узнала, но уже было поздно!

ՏԵՍԱՐԱՆ 31

ԼԻԶԱ - (Կանչում է դասգանձի):

Տիկին Մարգո, տիկին Մարգո: Հայկը իրա հաջաթն ա ուզում, հաջաթը: Հա, հա: Չէ, Մարգո ջան, Սերյոժիկին չեն կարող ուղարկել, աղուլը ոտին եռման ջուր ա լցրել, սաղ սենց փուչիկ-փուչիկ խառվել ա խեղճ երեխու ոտը: Չէ, փառք ասածու, մենակ ոտն ա: Ենենց էր մղկսում խեղճ երեխեն: Ախր հազար անգամ են ասել՝ գազի հեռ գործ չունես: Չի լսում էլի լակոսը: Երեկ սաղ օրը մեխ էր էփում:

ՏԵՍԱՐԱՆ 32

ՆԵԼԼԻ – Оставили ребенка в морге и пошли к Вере Григорьевне. Отец у них жил. . Գիտեք հորը ստիպեցի վերադառնալ հիվանդանոց, որ երեխին մասկի հագցնի: Մորում դատարանները բաց էին թողնում: Տուրս էր: Ինձ հա թվում էր, որ երեխեն սկզբնականի տակ ա դառնալով: Գազան հա հարցնում էր, Где братик, где братик? Ես չգիտեի՝ ի՞նչ ասեմ: Տա-տիկիդ հարցու՝ где братик! Ե, ուզած-չուզած՝ քեզ քերեցի: Через год, բժիշկը ստիպեց էլի: Օ՛հ, չգիտեմ: Ես էլ չէի ուզում: Ասում էր՝ քեզդ համար դեմ ա: А то у сестры будет травма.



Հետո էլ դու ծնվեցիր: Սերոժիկ ջան: Յոժիկ, Սերոժիկ: Հիմա լաւ ուրախ եմ, որ դու կաս: Յոժիկ:

(Ծիծաղում է):

ՏԵՍԱՐԱՆ 33

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Մաղաղ քեզի, Սերոժիկ ջան: Արի, արի մի հաղմ տագեմ:

(Պաշտում է նրան): Օխա՛յ:

Հիչի հայաթը, Մելանենց հետ թոփ խաղցի: Տեյ՛մ or քնելո՛ւ:

(Դադար):

Է՛... Ափսոս էն երեխեն չմնաց: Հիմի Սերոժիկն էլ ախրեր կունենար, Գայանա էլ:

ՄԱՐՈ - Մա, or կըսես անդերին քնելու խելք չունիս՝ կնեղանաս:

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Հնչի՛:

ՄԱՐՈ - Էն երեխեն or չմեռնիր, էդ լիքը Սերոժիկին չէր բերի:

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Ափսոս: Դանելս հիմա էրկու տղա կունենար:

ՄԱՐՈ - Համ էլ էդիկ հլա մենձ հարց է: Սերոժիկդ Դանելիդ երեխեն է՞, թե՞ ով գիտի...

(Դադար: Վարդուռը վախեցած նայում է Մարոյին):

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Քա աղչի, էդ ի՞նչ կըսես: Մեղայ ասածու:

ՄԱՐՈ - Հեչ: Ի՞նչ ըսի or: Հարութ քիձի աչքերն or չունենար, ըսկի չես ըսե, or երեխեն մեզ հետ կաթ ունի: Ըսկը: Մերն է՝ սայլուգ, սայլուգ: Սաղ օրը անդերը կփաշե ու փութուր կուդա: Մերն էլ կըսես, or մենք ենք սուրվեցրել: Սուս:

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Հըբը՛, հըբը ինչըխ: Էրանցիկ կուդուրական են, գրագես կխոսին: Ի՛նչ փութուր, ի՛նչ բան: Լիզան մարդու կլիրը բիլա լիմցեսով կըմեն: Զուգարան էլ or կերթա՝ չի փաշե, աղոթք կենես: Էդոր հմար է ախչիկը էդդես նամուսով: Էրանցիկ նամուսի հըմար ոռ գուդան: Հըբը ինչըխ:

ՄԱՐՈ - Լավ, Վարդուռ, մի ոգևորվե, երեխեն էգավ:

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Ինչ էնեմ էգավ, ավելի լավ է՝ փութուր էնել սուրվի, քան թե մոր ու մամի լիքս սայլուգ էդնի: Տղամարդը փութուր էնել է լիքի սուրվի, կռիվ էնել է:

ՄԱՐՈ - Հա՛, թե չէ Հարութ քիձեն or սաղա փութուր կուդար, կռվելեն զոյվա՛վ: Կուսով անդերը մե բուռըմ օսկի էլ ընձի տար: Ես or օժիտ ունենայի, Գուգոյի հոր գլխուն կփաշեի: Լավ, մա, էս երեխուն քնցնեն, արդեն ուռ է:

ՎԱՐՂԱՆՈՒՄ - Կեցի, կեցի գամ հեփաթ տասմեն:

ՄԱՐՈ - Քա ի՛նչ հեփաթ, այ կնիկ: Էդ խորատեկը հեփաթ չեն: Հա կողորին ու սքանին: Սքանին ու կողորին: Էդ երեխեն մեղք է, դիվողի գը: Պառզի, այ տղա, տառզի, Սերոժիկ ջան: Էդ ձեռք էլ վերմակի տղից հանի, անդերը կողոզես: Աչքերդ կփռնա: Մեջքդ կծովի: Ձեռքդ կչորնա: Լեզուդ կաղ կընգնի: Քա էլ ի՛նչ ըսես, or չընես, այ տղա:

Հարութ քիձեն or տատ կտասմեր, Սերոժիկ ջան, հիշես գը, լուրջովի հետ խաղ կենես, ըդոր հմար մեռավ: Հասկցա՞ր: Դե, դե քնի, լուրջ երա:

(Օրորելով):

Գիդես: Կըսեն, or գիտերը վով որ լուրջովի հետ խաղ կենես, Հարութ քիձեն էրագին կուգա, լուրջով կխաձե կսանի: Հըբը հեղդ ի՛նչըխ լիքի չիտիկ էնես: Զոռնամ ես, փռնամ ես: Ուղեն լուրջով: Քնի, քնի:

ՏԵՍԱՐԱՆ 34

(Հայտնվում է Հարութի ուրվականը, կուգ ունի, մի ձեռքը չորացած, մյուսին թուր, բեղերով, փափախով, փայտե ձի հեծած):

ՀԱՐՈՒԹ - Սերոժիկ... Սերոժիկ: Ես եմ, Հարութ քիձեն: Պաղիդ հերը: Էգել եմ, or անդերդ լողես: Անդերդ... անդերդ: (Ծիծաղում է):

Ձեռքերդ վերմակի տղից հանի: Ըդիկ խաղալիք չէ, or սաղ օրը կփաշես, այ անդեր լալոս: Ես էլ եմ քեզ լիքս էդ: Ընձի տես, քեզի մեղք արի: Հըբը ընչի՞ Դարսից փախա-էգա: Պաղիկ վախս, or անդերիս հետ խաղ կենես, մեջքս ծռվավ, ձեռքս էլ չորցավ: Ըդոր հմար էլ թուրերի հետ չկրցա կռիվըմ էնեն, օղու: Թողի փախա, էգա էս անդեր երկիրը: Դայդին տես ունես մոտիկ փովը: Արուս ու ջուլտ եգ: Սաղ թողի էդ անդեր թուրերին: Էգա Լեննագան: Դա համար տղիս ու թռնան գլուխը էդ տեսիլի բոզը կերավ՝ տատ: Սերոժիկ, ընձի աշե: Էհուց մեկել or դողոց կերթաս, մարդ կդառնաս: Քեզի խելքով տալի: Էդ անդեր մայմունու-թյուններդ թող: Ի՛նչ ես մաքողջ օրը...

(Ծամածռություն է անում):

2008
17
5



Ըդիկ տղամարդուն վայել չէ: Ըդիկ ավելի ամոթ է, քան թե անդերդ բաց ուլիցները ման գաս: Ամբողջ օրը...

(Ծամածռվում է):

Անդերիդ հետ սաղ օրը խաղ կենես, հերիք չէ, հիմա էլ մեյմունություն կենես: (Թրեմեն հայհոյում է):

Ու Տայիր, իմալ չէր եղնի՞, քան թե մեյմուն եղներ: Այ հենց ըդոր հմար էն թուրը, օր թուրի գլուխը դդի կդրեր, անդերդ կկդրի:

(Բարձրացնում է թուրը):

Հըը:

(Լսվում է ախլորի կանչը: Հարուքը կամաց-կամաց հեռանում է):

Էս անգամ բախտդ բերեց, մյուս անգամ անդերդ կկդրեն, անդերդ...


(Հեռանում է):

ՏԵՍԱՐԱՆ 35

(Ռադիոյի ձայնը՝ «Եթեումդ դիտներական լուսաբաց»: Լսվում է Նելլիի ձայնը):

ՆԵԼԼԻ - Սերյոժիկ, վեր կաց, զոգլիդ դասրաս ա: Ձեռներդ լվա: Տեղերդ հավաքի: Օրագիրդ գցի: Որտեղ որ դրել ես, էնտեղ էլ ման արի: Գրերդ դառի: Դասերդ արա: Շուտ բարձրացի վերև: Գնա հացի: Ձոր չիջնես: Էդ այլանդակների հետ խաղ մի արա: Տիլիվիդից հեռու նստի: Взрослым не отвечают: Չփրսնես: Չուժանաս: Կզանգես: Гадости не говори, не ругайся, не хулигань, осторожно: Հեծանիվով չգնաս: Չուզարանից հետո ձեռներդ լվա: Սառը ջուր չխմես: Մառոժմի չուտես: Լուցկին դիր տեղը: Էդ կլուբնիկան մուտաբայի համար ա, չուտես: Բալկոնից մի կախվի: Շան հետ չխաղաս: Տափ հագնվի: Եղունգներդ կտրի: Շոտերդ հավաքի: Շալվարդ չկեղտոտես: Հայաթ չիջնես: Կռիճ չբարձրանաս: Կոճիկներդ մաքրի: Բոքիկ ման չգաս: Մինչև ճաշը չուտես՝ շոկոլադին ձեռ չսաս: Перестань кривляться, боню կմնաս: Էդ լեմինականցիներից ի՞նչ դիտի սովորեիր: Ուռող:

(Կամաց-կամաց ձայնը կորչում է):





Ալան Սեմերձյան

Վերջին տասնամյակում Ալան Սեմերձյանը խաղացել է ավելի քան 900 շոու, իր երաժշտությունն է տեղադրել հեռուստահաղորդումներում ու ֆիլմերում, կատարումներ է ունեցել wfuw-ով (իր ամենասիրած ռադիոկայանը) եւ մասնակցել College Music Journal-ին՝ վաստակելով բազմաթիվ քննադատների եւ հանդիսականների համակրանքը։ Մի քանի տարի ալբոմներն ալանը փորձարարական ռոք խմբերում ելույթ ունենալուց հետո Ալանը 2005-ին թողարկեց When there was something wrong with you (Երբ քեզ հետ ինչ-որ բան էր պատահել) ալբոմը։ Պատրաստվում է շուտով թողարկել իր երգերի նոր շարքը։

Նշույորքցի 35-ամյա Ալան Սեմերձյանն իր առաջին բանաստեղծությունը գրել էր թղթե ինքնաթիռի վրա, որը դուրս թռավ Քուինս թաղամասին վերնից Նայոդ նրա պատշգամբից։ Հեղինակը մինչև հիմա փնտրում է այդ բանաստեղծությունը եւ հույս ունի՝ «Ինքնագրի» ընթերցողները կարող են իմանալ դրա տեղը։ Ալան Սեմերձյանի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք www.alanarts.com (տեքստեր, արվեստի գործեր, դասավանդում) եւ www.alansemerdjian.com (երաժշտական գործեր) կայքէջերը։

Անգլերենից թարգմանեց Մարինե Պետրոսյանը

Սեր և դաժնեգութ

Լուսինը՝ անցք դանդաղորեն
մերկացող մարմնի,
մնացած երկինքը՝
դեռ չծնված որդու սիրեկանը։
Ե՞րբ կսկսի նա փորձել,
որ հասկանա այս ոչ հեռ
անցումները դեռի մեկ ուրիշը,
դեռի ուրիշները։ Ե՞րբ կշարժվի
դեռի սիրը։ Աստղերը՝
գոհարներ, մոլորակները՝
հրանոթներ, ռաւ վսանգավոր
հրանոթներ։

Ինչդեռ սխուր հրեւ

Ինչդեռ վիճ փնտրող սխուր հրեւ,
ինչդեռ հեթանոս սաճարների հողմահարված ավերակները,
ինչդեռ առանց կրակի այրվող մարմին,
իրենց աղյուսակը կորցրած միլիոնավոր ճչացող թվեր,



Ինչդեպ փոքր հողի մեջ, որ վախենում է թաղումից,
 ինչդեպ մոգությունն առանց դավանողի,
 ինչդեպ հանցանքն ու դրա խորթ ծնողները,
 ինչդեպ շերտի օգնական անդամ ֆաղափում,
 որսել դիակիզման մի խարույկը հաջորդում է մյուսին,
 ինչդեպ անհասկանալի բոցավառումներ,
 ինչդեպ իր սիրուն հակառակ գնացող սիրահար,
 ինչդեպ մեկ ուրիշ սիրահար, որն ընդառաջ է գնում իր սիրուն,
 ինչդեպ անփութ հողագործ, որ բերքի մասին մտածելու փոխարեն
 տարփանքի մասին է մտածում ու գիշերների, ոչ թե ցերեկվա,
 ինչդեպ ծովահեն, ինչդեպ գող, մարդաստան, ուրվական,
 ինչդեպ աշխարհի ողջ չարիքը, որ ննջում է արկղի մեջ՝
 անդամալի մի գործողության ճիշտ կողմին,
 այդ գործողության ամենուր հասնող շոշափուկները,
 երբեք չավարժվող ներկայացում, աթոռ, որին մտելն անհնար է,
 ինչդեպ վարագույրը, մուգ կարմիր վարագույրը, որ վերջում ցած կիջնի
 եւ միգուցե արդեն էլ չի բարձրանա, էլ չի բացվի,
 մենք տարունակում ենք հավասալ նրան, ինչին անհնար է հավասալ,
 տարունակում ենք անել այն, ինչ անդամակերպներն են:


Ցեղաստանության թռռները

Ցեղաստանության մասին մտածելիս մենք մտածում ենք
 ռմբահարված տարածքների մասին եւ մտածում ենք լայնորեն:
 Մենք մտածում ենք զանգվածային զոհումների մասին:
 Մտածում ենք փոսից: Մտածում ենք ամբողջական էջը:
 Մտածում ենք, թե ինչ կա դրա տակ, թե ինչ էին թափցնում:
 Մենք մտածում ենք, որ այդ էջերում կարող էին մաշել մարդիկ լինել:

Ցեղաստանության մասին մտածելիս մենք մտածում ենք
 խցիկների մասին: Մտածում ենք լացող մարդկանց մասին:
 Մտածում ենք մազլցող մարդկանց մասին: Մտածում ենք մարդկանց մասին,
 որոնք մազլցում են ու լացում, լացում են ու մազլցում: Մտածում ենք
 թե մազլցող մարդկանց մասին, թե լացող մարդկանց մասին:
 Մենք մտածում ենք խցիկներում: Ցեղաստանության մասին մտածելիս
 մենք մտածում ենք այն սարսափելի խցիկներում: 20-րդ դարի
 այն սարսափելի խցիկներում:

Ցեղաստանության մասին մտածելիս մենք չենք մտածում լեռների ու
 անառիկների մասին: Մենք չենք մտածում շուկաների մասին:
 Իսկ երբ մտածում ենք դրանց մասին, չենք մտածում երիտասարդ ու ժողովրդավար
 մարդկանց եւ նոյնի մասին: Ցեղաստանության մասին մտածելիս
 մենք չենք մտածում երիտասարդ ու ժողովրդավար մարդկանց
 եւ նոյնի շուկաների մասին: Մենք չենք մտածում նրանց մասին՝
 մեր ժողովրդի կողմին: Նրանց կողմին մենք չենք մտածում:

Կան մաշել երիտասարդ ու ժողովրդավար մարդիկ, որոնք նույն չեն ուտում
 եւ չեն մտածում ցեղաստանության մասին: Մենք սրանց մասին նույնպես
 չենք մտածում:



Ցեղասպանության մասին մտածելիս մենք սրանց մասին չենք մտածում,
բայց բեղերի մասին մտածում ենք: Մենք երկար ու սիրուն բեղերի մասին չէ,
որ մտածում ենք: Բայց ցեղասպանության մասին մտածելիս մենք բեղերի մասին
մտածում ենք:

Ցեղասպանության մասին մտածելիս մենք մտածում ենք հարազատների մասին:

Մենք մտածում ենք հարազատների դեմքերի մասին, բայց չենք մտածում
ծնունդի մասին: Իսկ երբ ծնունդի մասին ենք մտածում, մենք չենք մտածում
նորածիկների մասին: Մայրերի մասին ենք մտածում:

Ցեղասպանության մասին մտածելիս մենք մայրերի մասին ենք մտածում:

Մայրերի մասին մտածում ենք, բայց կանանց մասին չենք մտածում:

Մենք դարձել կանանց մասին չենք մտածում:

Ցեղասպանության մասին մտածելիս մենք երաժշտությունը չենք լսում:

Սրանց մասին ենք մտածում եւ չենք լսում՝ ցեղասպանության մասին մտածելիս:

Մենք փաղափարական դաշտերում մասին չէ, որ մտածում ենք որդես
ցեղասպանության: Մենք լսում ենք սրա մասին: Մենք նման ժողովրդական
հաճախ չենք զանգահարում: Մենք մտածում ենք հաշտության մասին,
բայց մենք հաշտության մասին չենք մտածում ցեղասպանության մասին
մտածելիս: Մենք չենք ուսումնասիրում հուշարձանները,
չենք բացատրում խաղը թերթերում, չենք սեղմում իրար ձեռք ու հաշտվում:
Ցեղասպանության մասին մտածելիս մենք ուրիշ բան ենք անում ձեռքերով:

2008
11
5



Տասներկու հնգյակ

Անվան կնիքը

Արմեն-
յանը կնիքն է
անունի, ժողովրդի
որ փնտրում է բաժանված
մյուսին:

Արարատ

Նրանք երբեք
չէին հասնի
սրան: Մեծագույն հաճույքը
մեռածների համար թողնված
լեռան լանջին:

Ներգաղթյալ


Ես լեզվի մեջ եմ
որ գողացված է
ու հեղափոխված
ոչ թե հորինված
կամ ժառանգված

Շղար

Նրանք կրում են
երկար, հյուծված դեմքեր,
ինչպես սիրիական լուսինը
ժող օրվա մեջ,
հիշողության կարմիր մողեսը
ժուրթերին:

Գործիք

Ուղի վիզը
կամ կողի ոսկոր,
կյանքի կոնֆուսյուսը
եւ մի լար,
որ բաժանում է այն
երկուսի:



Երեկոյան լուրեր

Չորս ժամ
հարազատները
հավասում էին միայն մրան
ինչին լուրերն էին ասում որ հավասան
մինչեւ որ:

Իմ ամերիկացի ընկերները դադարիս խորհանոցում

Նրանք դրան ասում են
գալափոխութեամբ լցված
սեղեր, չնայած ես հիշում եմ
ֆրիմը այդ սեղերի,
եւ օղը, որ կար:

Կուրփիս - իմորեսիոնիս

Անադաշի
ավազը աչքերում
մա նկարում է, որ գեցնից ղոկի,
ինչ որ տափակել է ու չորացել և
սոսկալի հիվանդ հորիզոնը:

Սեր

Քաղցկեղը
սիրտեց մրան բարձրանալ
վերջին շնչում, դուրս ցատկել
մահճակալից դեղի իր աղջիկը.
Ես չեմ ուզում մեռնել,
դեռ ոչ:

Արասավոր

Հայրը
ծխի մեջ կորած
ձիգ մկան է, եւ կյանքը
ձեռք է բերում ծանոթ
բուրմունք / հոս:

2008
11
5



Pressure Cooker

Սոխ,
իմ առաջին, ծեծված
սերը, լիզում էր մորս
մասը շոգուց խոնավացած
խոհանոցում:

Հրեշը Saburbia-ում (Տան շուրջփոխը գիշերով)

Երբեք
որեւէ բան չի տեսնվում,
միայն դրա տեսականությունը
որդես ուրվական, որ հենց հիմա
նեսր կմտնի:





Վահագն Կ. Թերզեան

Ծնունդը եմ 1984-ին, Երեւան: Հիմիկ ու հիմա, 1992-ից ի վեր, հաստատուած եմ Փարիզ:

Ուրեմն, 24 տարեկան եմ: Եւ որքան յիշում եմ ինքս ինձ, առաջին հալումս եղել է գիտութեան մէջ դերակատար լինելը: Ցատկապէս ատոմային ֆիզիկայի ասպարեզում: Եթէ երբեք մէկն ինձ ասէր, որ մի օր վերջնականապէս հեռանալու եմ չճգրիտ գիտութիւնից, կանոնների եւ մաթամատիկական ուրիշ պաղ հասկացողութիւններից եւ ակադեմիական բարձրագոյն դեկարտականութիւններից, որպէսզի հոգով ու մարմնով նետուեմ գեղարուեստի ստեղծագործութեան մարզ, ես նրան կը նայէի սառն ու անտարբեր հայեացքով եւ գուցէ թէ $a+b$ սկզբունքով ապացուցէի, որ այդպիսի բան բացառուում է:

Մակայն փաստը արդէն կայ: Իմ գրական ողնաշարը հայ, ֆրանսացի, ամերիկացի, ռուս գրողներից եւ, որոնց անունները թուարկելիս հնարաւոր է նաեւ այնպիսի տպաւորութիւն ստանալ, թէ խօսքս ոչ թէ ոսկրոտ ամուր ողնաշարիս, այլ խորովածի շամփուրի վրայ սոխով ու քացախով կակղեցրած չալաղաջի իւղալի կտորների մասին է: Այդ գրողները որքան հզօր են, նոյնքան եւ իրարից տարբեր ու երբեմն իրար հակասող: Եւ ինձ ինքնավստահութիւն ու ազատութիւն տուող ուժն էլ հենց այս յանգամանքն է:

Այնուհանդերձ, ծնողներիս համառ խորհրդով ինձ գտայ քիմիական ֆիզիկայի բարձրագոյն կրթական հիմնարկութեան մէջ: Այս դիմակահանդէսը տեւեց մէկ տարի: Քսան տարեկան հասակիս հիմնաւորապէս քաշուեցի չճգրիտ գիտութիւններից, գնեցի լուսանկարչական մի գործիք եւ սկսեցի լուսանկարել ամէն ինչ եւ ինչ ասես: Կարծեմ անելորդ է անելացնել, որ դասերից փախչելով՝ գնում էի լուսանկարելու:


Եւ մի գեղեցիկ ու պայծառ առաւօտ էլ ինչ-որ անբացատրելի բան պատահեց ինձ հետ:

Նախաճաշելիս յանկարծ ելա տեղից եւ մտորելով շարագրութեան մասին, սկսեցի ինչ որ տառեր գրել, յետոյ էլի ու էլի տառեր ու բառեր գրուեցին այնքան ժամանակ, մինչեւ որ մեկուկէս տարի անց այդ ամէնը դարձաւ իմ առաջին վէպը:

Լուսանկարել սկսել եմ 2004-ից, իսկ գրելը՝ 2006-07-ից: Երկու գործով միաժամանակ զբաղուելիս բնաւ չի խանգարում ինձ: Ճիշտ հակառակը: Ստեղծագործական աշխատանքս թեթեւանում է:

Այսօր, 2008-ին, աւարտել եմ իմ երկրորդ՝ «Այդ մսակեր ոչխարները» վէպը եւ ուսումնա շարունակում եմ Սորբոնի համալսարանի ֆրանսական ժամանակակից գրականութեան բաժնում:

2008
17
5



Եղեստյակի զգայախաբութեանը բախսագուշակները

La Sauge des Devins
Դրուագ վեպից

Հեղինակագործուած թարգմանութիւն ֆրանսերէնից՝
Լիլիթ Կ. Սիմոնեանի

Ես թարմ էի ու սթափ. եւ որեւէ աղմուկ չէր կարող խանգարել իմ այս ուղեւորութիւնը:


Հէնց այս սենեակի մէջ, այս լաւահարանի վրայ էին գտնուում կեթամիսի՝ հարիւր միլիգրամանոց հաբերը: Որոշեցի երկու հաբ վերցնել: Դժբախտաբար մեկնելն ու վերադարձը աղաւաղելու համար ազոսի դոզոսով չկար: Ափսոս: Բայց չեմ կարող ամէն բան ունենալ ձեռքի տակ: Հաբերը կոտրելով՝ դրեցի արծաթէ սկուտեղի վրայ: Երբ կռացայ Ջութակահարի գործ այցեֆարսով, որի վրա կարմիր տառերով գրուած էր «Գալիս եմ», տեսայ իմ արձագոյնը, որ արծաթը նետեց իմ ձեխին: Այծի մօրուով այդ դէմքը, այդ կարճ կտրած սեւ մազերը, կիսուած հոնքերը լուրջ ու լարուած աչքերիս տեղեկութիւններ էին հաղորդում շատ կարեւոր գործով տարուած իմ ուղեղին: Երբեք այնպէս, կարծես վերահասութեան սեղանին տառակած եւ աչքերս բաց՝ տեսնում եմ, թէ արնաշաղկապ գործիքները խաղացնելով՝ վիրաբոյժը ինչպէս է ղեկավարում մարմնիս շարժումը (յուսամ, որ ցաւազդուած է). ինչպէս է մաշկում ինձ, ինչպէս է կտրւում, ձեւում, կարում՝ միեւնոյն ժամանակ կտրւելով իրենով հրաշալիութեամբ բուժողների հետ... Եւ այս ամէնը առանց ցաւի նոյնի: Եթէ լինէի արծաթի վրայ դրուագուած իմ արձագոյնը, աղաւաղում զգացողութիւնը կ'ունենայի՝ տեսնելով առաջ թեքուած ու կենսոնացած իմ ԵՍը:

Ներերակային սրտկումներ այնքան էլ չէի սիրում, քանի որ յետոյ, մի քանի օր շարունակ, ծակոցներից ցաւեր էին մնում: Հէնց այդ պահապանով էլ առանց շարժելու կեթամիսով փաշտեցի մի երկար, փոշոտ եւ ուղիղ գիծ՝ ասես ինքնաթիռի մի գեղեցիկ թռչնուղի:

Ես այսպէս եմ հասկանում իրերի դրութիւնը... Մտածում եմ, թէ կեթամիսը անդամաւոր էր ինձ: Եւ ինչպէս է խառնել կոկաինի կամ դոպամինի հետ: Յետոյ ինքս ինձ ասում եմ, որ ի վերջոյ՝ միեւնոյն է. իմ այն վիճակը որտեղ յայտնուելու եմ, ոչնչով չի փոխուելու: Ուստի այլեւս ոչ մի բանի մասին չեմ մտածում:

Ահաւասիկ ամառեցի թռչնուղիով մախադարձութիւններ: Բայց լոյսը շատ ուժեղ է: Չի կարելի: Կեթամիսը գիշերային թռչն է: Ինքս ինձ ասում եմ, որ ամէն բան փչացաւ. ոչ ոք չի կարող կարգաւորել լոյսի շարժումները: Յուսահատուած եմ: Բայց ուշադրութիւնս կենտրոնացնելով՝ նկատեցի, որ լաւագոյն դոզայով դոզաւորում եմ մի կարգաւորիչ կայ եւ շատ հարմար է լոյսի մակընթացութիւնը կանոնաւորելու համար: Առաջին անգամ է, որ տեսնում էի: Բաւականին տարածական զգացողութիւն է, երբ անդադարում ես, թէ ամէն բան գոյութիւն ունի, եւ բոլորը հնարաւորութիւն ունենալով լաւաւարելու համար: Բայց ոչ ոք ոչինչ չի նկատում այնքան ժամանակ, քանի դեռ չի զգացել դրա ծայրահեղ անհրաժեշտութիւնը: Ուշագում եմ ասել, որ ամէնից դժուարը որեւէ բան անելու ցանկութիւն ունենալն է... Որեւէ բան անելու ցանկութեան անհրաժեշտութեան զգացողութիւնը:

«Վարագոյրներս փակեցի» եւ դարձաւ մտած ականջ դրեցի. ոչ մի ձայն... Ոչինչ... Ամէն բան տեղը տեղին է... Սկուտեղը ձեռքիս փայլեցի դեղին անկողին: Արծաթէ սկուտեղի հարթութեան վրայ փայլում էին արծաթ շողերը եւ սփռում դեղնակարմիր ցոլեր: Եւ ուրիշ ոչինչ: Մայր անկողին, մէջքս հենցիկ դարձաւ, վերնակի տակ ծալեցի ոտներս: Մեկնելու տոնակը ձեռքս փակ էր եւ իմ մէջ ներխուժելու դոզա: Սկուտեղը մօտեցի դէմքիս ու խորը ներշնչեցի: Կարծում եմ՝ բաւականին օգտակար է ֆֆիս համար: Ոմանք ունենում են արիւնահոսութիւն եւ ցաւ-



եր... Ես նրանց շատ եմ խղճում, զի կլինիկական առումով կասարեալ չեն կեթամին ընդունելու համար: Ես՝ այո՛, դասրաս եմ: Եւ զգացի, թէ ինչդէս է միւրը տարածում ու բարձրանում մինչեւ աչքերս, հասնում է ուղեղիս: Արծաթին դեռ մի փչ մնացած միւր կար, որ ես մոլայով ու սնոցներով լիզեցի (կարծես իմ առջեւ զոյգ փոփրիկ ու հաստիկ շրթունքներ լինէին, եւ ես շատում էի իրականացնել մարդակերութեան իմ գործը), յետոյ հիւանդիս վրայ հառուած լայն բացուած աչքեր՝ որ վախեցած ինձ էին մայում: Երջանիկ մի ծիծաղով սկուսեղը նետեցի դասին: Եւ նուաստացած սկուսեղը զնգոցով ընկաւ ցած՝ դառնալով իրերին միշտ գահավիժել ստիպող այդ զարհուրելի ձգողականութեան օրէնքի հերթական զոհ: Բարձրանալու ոչ մի հնարաւորութիւն չկայ... Բացարձակապէս... Փութալով մտայ անկողին եւ վերմակը փաշեցի մինչեւ կզակս: Զինգ ըրող ստասելուց յետոյ միայն ականջներս մէջ հնչեց ջութակի փնուտ սիմֆոնիան: Մի ներդաշնակութիւն, որ բնաւ չէի լսի առանց իմ իւրահասուկ K²-ի: Այսպէս, ուրեմն...


Միջավայրը փերուած հայելու բեկորներ է դառնում: Ամէն բան ջախջախում է, որդէսզի երկուսի բաժանուած դռներից ներխուժի փառսի մէջ. դասերից մինչեւ յասակ. աթոռից մինչեւ առաստաղ. մագնիսական ուժագծեր. էլեկտրամագնիսական ալիքներ... Եւ ահաւասիկ. երկու աթոռ իւրար գրկած՝ սանձարձակօրէն վալս են դարում: Միաժամանակ դանակներն ու դասառաքաղներն են դարում տանգո: Քիչ այն կողմ էլ աներեւակայելի սուփնգ են դարում երկու բարձ: Թմրամոլային իսկական տօն է սկսուել: Աչքերս կկոցած՝ նոյնիսկ կարողանում եմ տեսնել, թէ ինչդէս են մոլեգնօրէն զալարում մալուխները, որդէսզի փչ յետոյ հանդարտեն N չափողութեան իրենց տարածութեան մէջ: Զութակի խռովը դառնում է աւելի սաստիկ: Ես տեսնում եմ, թէ ինչդէս են ինձ հասնում ձայնի ալիքները: Երբ դուրս եմ ելնում մարմնական իմ դասեանից եւ տեղաւորում հնչիւնների կենտրոնի վրայ, ամէն բան վերածւում է երաժշտական կասարեալ ներդաշնակութեան: Դա իմ սեփական K-hole-ն է: Ոճանք էլ տեսնում եմ Սասանային. կամ Աստուն. յայտնագործում են իրենց գոյութեան այլեւայլ չափողութիւններ, որեղ դառնում են իրենց անցեալի կամ աղագայի սոսկալի բացայայտումների վկան: Պարզապէս աղուութիւն է այդ ամէնը: Նրանց բացայայտումները միայն իմնադաստանութեան գործողութիւններ են, որդիսիկ կասարում են ուղեղները, որոնք, չնայած թմրանիւրի կասաղի հարուածներին, փորձում են իրենց այցելուին ճիշտ ճամբի վրայ դնել: Պատգամներ՝ որ այս փոփրիկ junkie³-ները խորը արմատներ ունեն նրանց եմբազհսակցութեան մէջ եւ որոնք լողում են դէղի մակերեսոյթ: Բայց նրանք անդունդի եզրին հասնելով՝ իրենց իսկ ուղեղից ցցուած փրկարար ձողին աղափնող flingué⁴-ներ են: Ես բացայայտումներ կասարելու որեւէ կարիք չունեմ. եւ ես ինձ ոչ մի բանում յանցաւոր չեմ զգում: Զենց այս դասառաքով էլ իմ փորձառութիւնը տարբեր է: Այստեղ, իմ ալեքախուղ աշխարհի մէջ, ես ձգտում եմ փմիական կասարելութեան... Նիւթի եւ Զոգու կասարեալ մի ներդաշնակութեան:

Երբ վերադարձայ իմ միւրեղէն անհասականութեանը, տօնակասարութիւններն արդէն սկսուելու էին: Նորէն լսեցի տօնաձայներ, կանացի ծիծաղ, գետինը դոփող կօշիկների աղմուկ: Այն տարբերութեամբ միայն, որ ես գիտէի այդ մարդկանց ով լինելը: Երէկ, երբ տուտափոյթ վար էի իջնում, չյաջողուեց տեսնել նրանց տարբերակող միւրերը, բայց նկատել էի, թէ որդիսի արագութեամբ են նրանք ջնջել զոմբիացած հանդիսականների երկային նկարագիրը:

Իմ սենեակն ունի իր ամենօրեայ տեսքը. դիմագուրկ՝ բոլոր նախորդող օրերի դէպ: Եւ բոլոր առարկաները զտնում էին միւրի անողօփ ֆիզիկական օրէնքի գերութեան մէջ. անկարող որեւէ երազանքի. յալիտենական մի գոյութեան հետ դասկուած այն իրերի նման, որոնց տեղը թմրամոլ չէ: Այնքան ժամանակ մինչեւ մի օր նրանք էլ են ջախջախում, փերում, սակայն դասադարտուած են մնում հանդուրժել մի օրէնք, որ իրենք չեն ընտել: Նրանք, ովքեր չգիտեն թմրանիւրը օգտագործել ինչդէս հարկն է՝ չգիտեն, թէ ինչ է նշանակում ազատագրուել դասական ֆիզիկայի անողօփ օրէնքներից եւ մխրճուել փլանսային փոփոխական տատանումների աշխարհի մէջ. աշխարհ, որեղ ամէն բան հնարաւոր է:

Արագ հագնուեցի: Այս անգամ հաստատ որոշել էի չխուսափել տօնակասարութիւնից: Տօնակասարութիւնը արհեստականօրէն դարձել էր մոգական: Իսկական հրաշքը մոգական փայտիկով չէ, որ յայտնում է: Ոչ մի գերմական ուժ հարկաւոր չէ, որդէսզի կարողանաս անցնել դասի միջով կամ գուռակէս աղագան: Ի հարկէ... Բաւական է ունենալ մի փչ երեւակայութիւն եւ չափից աւելի շատ փմիա:

2008
#5



Երկրորդ անգամ մենք անելի իմնավաստի ենք մեզ զգում: Արդեն գիտենք, թե դա ինչ է նշանակում: Իմ բնից դուրս գալով կարծեցի, թե գիտակցութիւնս կորցնում եմ ու չեմ հասկանում, թե ինչ եմ խօսում: Նա այստեղ էր: Իրողն ձակարմիր մագերով: Իր սեղմիրանով: Երկու կողմից ձեղնուած սաքառով: Երկարաձիծ կոշիկներով... Բարձր կրունկները ձկնէ էին սրունկները եւ ձգել նուրբ ազդերի մկանները: Ոտերի նայլոնն ու ընդհանուր լուսաւորութիւնը անելի էին ընդգծում լարուած մկանները՝ իրենց թմբիկներով ու փոստրակներով: Ես չգիտէի ո՛ր փախցնել հայեացքս, ուր նայել... Իսկ ինչ վերաբերում է նրա դէմքին, ժողիտին, նրա կանաչ աչքերին... Ժողիտը նրա դէմքին այսերի փոսիկներ չէր ստեղծում: Այդ չէր ինձ մտահոգողը: Նա ղէտ էր սեղեակ լինէր երէկուայ ճահճային իմ արկածին: Հոգու խորքում նա գիտէր այդ մասին:

- Ողջոյն... Անունս Նէթ է:

Հրաւալի ձայն ուներ, բաւականին ուժեղ ձայն: Շատ կուզենայի ըմբոխնել այն ալիքները, որ նա արտաբերում էր իր նուրբ կոկորդով եւ վարդագոյն ձայնալարերով: Մորու անուշ շնորհով վանիլի թաղաղաղակ էր նա: Անելիքս չգիտէի: Նա ինձ գամել էր կանգնած սեղոյ: Մարդուն շփոթեցնող թաղաղաղակ էր. բնութեան կատարելութիւն: Նա նոյնքան կատարել էր, որքան GHB®-ն: Նրա իւրաքանչիւր ասոյնը ղէտ էր որ թրթռար ներդաշնակ մեղեդայնութեամբ, ինչը թաքտաւ էի լսել ամբողջ կեանքիս ընթացքին: Նրան համեստելը կը լինէր կեանքիս լաւագոյն փորձութիւնը. չափից անելի թմբաբաժին, որ կարող էր խափանել իմ վերադարձը:

- Գնամք... Շուտով կը սկսուի: Եւ նա ձեռքը ինձ դարձեց: Երկար ու նուրբ մի ձեռք, որ վանիլի սերուցքի գոյնն ուներ: Սեղմիրանը գրկել էր նրա կուրծքը եւ աչքերից սադրում էր անզուսպ մի մարտահրաւէր՝ կը կարողանա՞մ նայել, մնալով սակայն անմկաս: Ես ծածուկ նայում էի, բայց նրա թափերը այնքան էլ չէր հասնում աչքերիս խորքերի ցանցաթաղանթներին: Զիչ անց հայեացքս ուրիշ կողմ էր ուղղուել, եւ նրա թափերը չփախաւ: Տեսողական յիշողութեան սկաւորութիւն: Ես նրան ուզում էի այս պահին եւ այստեղ, բայց ոչինչ անել չէի կարող: Հոտած դասփարակութիւն եւ զսպարածութիւն:


Երբ բռնում եմ ձեռքը, նա ծիծաղում է բիւրեղային ծիծաղով՝ ցուցադրելով հաւասարաչափ ու ճերմակ հրաւալի ասամնաւարը, վարդագոյն լեզուն, գրգռիչ կոկորդը: Ամէն բան կը տայի, միայն թէ հնարաւոր լինէր տեսնել, թէ ինչ տեսնում ես: Ամէն բան կը տայի իմանալու համար, թէ որդիսի մոռութիւնն արուեստի արարուած այս գեղեցկութեան կողմին:

- Ազդեցութիւնը կայ, չէ՞:

Շրթունքներս արանքից միայն խուլ հնչիւններ ելան ու ինչ-որ գոմոռոց: Նա իր ուժը գիտակցող գիշատիչ էր: Գիտէր, որ ինքը միայնակ կարող է կործանել ամբողջ մարդկութիւնը: Նա ինձ դարձրել էր մեռել մի կոյտ, դարձրել էր բոյս: Ես բազմաթիւ մարմնամասերի սոսկական միացութիւն էի: Պարզապէս բուսական թափանցականութիւն: Ես մի վիճակի մէջ էի, որ աշխարհում դեռ ոչ մի թմբանիւթ չէր յաջողաւորել նետել ինձ:

Կանայք կան, որ թափու են համարում (եւ նոյնիսկ վերջնական թափանցականութիւն) իրենց թափառելով զգալու այն հարթութիւնները մագլցելու անհրաժեշտութիւնը, որոնք բաժանում են տղամարդուն եւ կնոջը: Ձգտում են ձեւափոխել իրենց տարածքային տեղագրութիւնը այն հաշուով, որմէսգի հասնեն ու հարմարուեն յասկաթէս նրան, ինչ տղամարդիկ գերադասում են: Մեզնից շատ հեռու են այն ժամանակները, երբ տղամարդիկ էին տեղագրական իմաստով ձեւափոխուում՝ հասնելու տղամարդկային մի կատարելութեան, որդիսին ընկալում էին կանայք: Այս միտումը Երկրի վրայ անակնկալ կերպով փոխուում է վերջին շատ որոշակի ժամանակներին: Բայց տեղագրական այսօրինակ ձեւակերտութիւնը դեռեւս բաւարար չէ: Հետոյ էլ ամորձիք ունեցողներս մակարդակին հասնելու համար այդքանը դեռ բաւական չէ: Ինչպէս կան տղամարդիկ, որ կոտորուած են կանանց նման, կանայք էլ կան, որ կանգնում են տղամարդկանց մակարդակին: Այսինքն, ես համոզուած եմ, որ տղամարդու հասկացողութեամբ կանացի իդեալին հոգով ու մարմնով հասնելու ձգտելիս ձեւափոխուող կանայք իսկական կանայք չեն: Որովհետեւ իսկական կինը փոխակերպուելու կարիք չունի: Իսկական կինը շատ լաւ գիտէ իր իրական ուժը: Նա գիտէ, որ ոչ մի բանի կարիք չունի. եւ առաւել եւս բնաւ կարիք չունի հաւասարուելու ամորձիքի տիրոջ՝ սեփական արժէքը աղագուցելու համար: Իսկական կինը երբէք չի կամենայ հաւասարուել տղամարդուն, քանի որ իսկական կինը գիտէ, որ ինքն առաւել արժէք ունի, քան տղամարդը:

Եթէ ակնառու է որեւէ բան, ապա այս է. աղջիկներ կան, որ ամորձիք են կոտորում, աղջիկ-



ներ էլ կան, որ փորում են սրեր: Դժուարությունը դրանք իրարից տարբերել կարողանալն է:

Բարեբախտաբար ես ճանաչում եմ մէկին (նոյնիսկ մի ֆանիսին), որ ամորձիք էր կոտրում: Նա աւելի շուտ իմ ամորձիքն էր կոտրում, քան սիրս: Երէկուայ ինձ հանդիպած աղջիկը նախ փորել էր սիրս, իսկ յետոյ անցաւ ամորձիքս կոտրելուն այնպէս, ինչպէս որ կարգն է: Առաջինը, որ փորեց Նէթը՝ իմ սիրսն էր: Ինչ վերաբերում է ամորձիքիս՝ նա նոյնիսկ չդիմացաւ:

Նէթը իսկական կանանցից էր: Նա գիտակցում էր, որ շողոքում է. որ գեղեցիկ է. որ մազանի է: Նէթը երբէք իր ամբողջ կեանքի ընթացքին չէր կամենայ մամուլել որեւէ մէկին: Հեռանալով Ջութակահարից ու ինձ մօտենալիս... Այս արարածները բացառիկ են թէ՛ հեռանալիս, թէ՛ մօտենալիս: Ուղղակի նրանք այնքան են, որքան մենք չկանք: Ես բախտաւոր հնարաւորութիւն ունեի կեանքումս հանդիմելու իսկական մի կնոջ: Նա առաջինն էր, զորոյը տանի, եւ յոյս ունեի, որ վերջինը չի լինելու:

- Մի փչեց տատենք,- ասաց Նէթը,- մէտք է գնալ: Եւ արագացրեց ֆայլերը: Օծանելիքի բոյրն իբրեւ աննշան մասնիկներ տարածուեց նրա ետեւից: Տնորոյ այդ մասնիկները փորձեցի որսալ իմ քով: Իմ փորը, որքան կեթամիմն ու կոկաինը արդէն մի խոռոչ էին փորել, հիմա որսում էր աշխարհում ամենամեծ եւ ամենից թունդ թմրեցուցիչը: Չէի ասի, թէ նա հրեշտակային բոյր ուներ, քանի որ անտեղեակ եմ, չգիտեմ, թէ ինչ հոտ ունեն հրեշտակները: Բայց այդ բուրմունքը բնաւ հեռու չէր զուտ ոգեղէն լինելուց: Նէթը հրաշալի էր բուրում: Ես աւելին չեմ կարող ասել: Այլապէս կը սկսեմ լաց լինել:

Ընկերուհի ունենալու մասին ուրիշների մէկ մասնելու այն բացառիկ առիթներից ունեի, որ նոյնիսկ համաձայն էի մամուլել նրանց: Նէթը կենդանի աղագոյց էր, որ ես ժամանակի ընթացքում հասունացել եմ, եւ ինչ-որ բաներ փոխուել են դէպի լալ: Դեռ երէկ ես միայնակ էի, իսկ այսօր՝ արդէն ոչ: Նա ֆայլում էր ինձ հետ, նա կողքիս էր: Նէթը ձախ ձեռքով գրկեց մէջքս եւ իմ աչքերն էլ փակեց դէպի իր գոտեւորը. մենք միահիստուել էինք ինչպէս անխառն՝ անխառն: Ջգում էի նրա ուժը: Ջգում էի նրա նուրբ մկանների իւրաքանչիւր թեթեւ շարժումը: Սեղմիրանը, որ գրկել էր նրան, ամուր տատնեց էր փխրում մարմնի եւ իմ միջեւ: Եւ այնքան, որքան տիրել սեղմիրանի եզրը հասնում էր տաքացի գոտուն, մի նեղ շերտ կար: Ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր նշանելու նրա կատարյալ տիրել որովայնը: Նա հիպնոսական կատարելալ ֆանդակ էր: Ես տատնեցայ նրա, թէ ինչպիսին է նրա մարմինը տարօրինակ զգեստի տակ. ծայր չունեցող նրա երկար ոտները մէտք է մեծաքանակ տեսք լինեին: Նրա կուրծքը, նրա մասները, նրա բերանը, նրա աչքերը, նրա հոտը, նրա շրթունքները, նրա ձայնը, նրա հետքերը, նրա վարսանդը... Մարմնի վրայ մազի նշույլ անգամ չկար: Բացառութեամբ գլխի ղողմնակարծի մազերի: Նա ղիտի որ նոյնքան հարթ ու մաքուր լինէր, որքան լոյս աշխարհ գալու ղապին: Արդեօք Ջութակահարը օգտագործե՞լ է այս արարածին: Պղծե՞լ է այս մարմինը: Հնարաւոր է, որ մէկ ուրիշը... Ես գտնում էի. սարսափում, որ այլեւս նրան չեմ տեսնի. որ նա կը մնայ մէկ ուրիշին: Դեռեւս Նէթին համեստ չարած՝ ես արդէն նրա մոլին էի դարձել:

Ի դէպ, ահաւասիկ, թէ ինչ է իսկական կինը:

- Ես ձեզ նորէն կը տեսնեմ: Ուզում եմ ասել՝ յետոյ,- այս հարցը անդադրեցի սալու էի՝ գիտակցութիւնս մաքրելու համար:

- Աշխարհը փոքր է,- ասաց նա՝ շրջուելով դէպի ինձ եւ վրաս նետելով տառապեցնող մտքիս սաւանդը: - Ի՞նչ իմանաս:

- Ճիշտ է, որ փոքր է, բայց շատ են վիթխարի տարածութիւնները:

- Ի՞նչ կարիք կայ նորէն տեսնուել: Մէկ անգամն էլ բաւական է: Մնացեալը թող մնայ յիշողութիւններին:

- Բաւական չէ... Իմ յիշողութիւնները ինձ հաճախ են դաւաճանում: Ես դժուարութեամբ էի զրուցում: Քանի որ նա ոչ ոքի չէր տատանում:

Ես նոր միայն կռահեցի, թէ ինչ զգացողութիւն էր ունեցել Պոտոն, երբ հանդիմել էր իր մէկ ուրիշ ԵՍ-ին, որ իր կանացի տարբերակն էր: Միայն թէ բոլորը չէ, որ տարբերեցնում են հանդիմողականութեան նոյն մակարդակին այն ամէնի մկանսմաք, ինչը շրջապատում է մեզ: Եթէ Պոտոն կարողանար ընտրել մի խխունջ եւ կամենար ամէն գնով ունենալ նրան, ապա տատնեցնում այն կլինէր, որ հեռաւոր տատնեցնում իսկ չունի, թէ ինչ կարող է իրեն նուիրել աշխարհը: Նա լուսային տարիներով հեռու էր գեղագիտութիւն ընթանելուց: Ես հասկացել էի, որ նրա եւ իմ աշխարհները նոյնը չէին, տարբեր էին: Թէեւ մենք երկուսով էլ ապրում էինք նոյն

2008
17
5



հարթութեան վրայ, այնուհանդերձ, մեր գոյութեան իմաստը համեմատութեան որեւէ եզր չունի: Եւ սա միայն զուգահեռ աշխարհների շահ տարգեցուած բացատրութիւնն է:

Դուրս ելանք միջանք՝ հիւրերին մօտենալու համար: Իսկ ես միայն մտածում էի նրան նորէն հանդիմելու մասին: Եւ նոյնիսկ այն դէպքում, երբ նա ֆայլում էր ինձ այնպէս գրկած, որ խախտում էր մեր ծանրութեան կենտրոնը, ես այդ մասին էի միայն մտածում: Գրողը չանի՛, ես լէսք է նորէն հանդիմելու նրան: Անդայման: Գրողը չանի:

Նէթը թեմբուց ականջիս եւ իր բիւրեղեայ ձայնով ինչ-որ բան բացատրեց: Նրա թարմ շնչառութիւնը շոյեց լսողական համակարգս, ձեւափոխեց լսողութիւնս: Ձայնը շոշափում էր ականջախոռոչս, յետոյ մխրձում էր լսողական ուղի, շարունակում մինչեւ թմբկաթաղանթս եւ այստեղ ամբողջ ուժով սեղմուելով՝ փփուում էր: Մուրճիկը անսահման երջանիկ էր զնդանիկին զարնուելով, եւ երջանկութիւնը բազմաթափանցում էր աստղանոյսի դիմադրութիւն: Հարուածների այս ամբողջ տարափը վեր ելնելով՝ հասաւ ուղեղիս եւ խախտեց գլխիս անկիւնային հաստածի ընթրնողականութիւնը: Սկզբում զգացի, որ թմրում եմ, յետոյ գիտակցութիւնս թայծառացաւ, այնուհետեւ նորէն թմբիւրդ տալիս ինձ... Եւ այսպէս շարունակ:

Նէթը թմրանիւք էր. եւ ես դատարար էի սղանութեան՝ միայն թէ ունենայի իմ բաժինը:

Յանուն թմրանիւքի ամեն տեսակի արարի դատարար եմ: Բայց շահ աւելի անելուն եմ ընդունակ ունենալու համար: Եւ հէնց այստեղ է, որ ամեն բան դառնում է վստահաւոր:

Եւ այսպէս, ականջիս էր նա հակուել կարմիր շուրթերով, կանաչ աչքերով... Ես ուժ էի գործադրում, որդէսգի չթեմեմ գլուխս եւ չտունեմ համբուրելու գայթակղութեան. իմ թուրը չխառնեմ նրա թուրին: Ասացէ՛ք խնդրեմ... Տղամարդը լէսք է կարողանայ տիրապետել իրեն: Նուազագոյն իսկ վրիդումը բաւական է, որ ամեն բան յօդս ցնդի: Նէթը ինձ վախեցնում էր, եւ ես բնաւ չէի համարձակուի խեղճանալու փորձ անել եւ մօտենալ կարճ ճամբայով: Նա նման չէր աղջկան, որին երէկ հանդիմել էի. ոչ էլ նման էր բոլոր այն աղջիկներին, որոնց հանդիմել էի անցեալում: Ինձ հետ համեմատած՝ նրա առաւելութիւնները բոլոր առումներով շահ աւելին էին: Աւելին էին ընդհանրապէս բոլոր տղամարդկանց համեմատութեամբ:

